



Ա. Գ. Ի. Ն.

Թ. ՏԱՐԻ 1970 ՍԵՊՏԵՄԲԵՐ
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 9

پاكين
مجله شهریه ، ادبیة و فنیه علمیة
مدیر المسؤول
السید اوتین کارنیک قزاقچیان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԴՐԱՎԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐԹԻՍՏԻ

ՀԱՐԻԶ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ՍԱՄՈՒՆԻ

ԽՄԲԱԳԻՐ

Պ. ՄԱՂԱԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

Յ. ԳԵՂԱՐԻ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ

Ժ. ԱԹԺԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ

† ԵՒ ՊՅԱՆՅԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռագրային թիւ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

Յ. ԳԵՂԱՐԻ

Ն. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ս. ՓԱՆՈՍԵԱՆ

Ռ. ԳԱՌՕՆԷ

Ա. ԱՐԵՐՈՒՆԻ

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ

Փ. ԳԻՐԻԱ

Ժ. ՔԵՐՈՒԱՔ

Մ. ԱԼԻՆ

Ա. ԿԻՆԶՊԵՐԿ

Ա. ՏՕՆՈՅԵԱՆ

Գ. ԲՈՐԵԱՆ

Ն. Զ.



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Թ. ՏՄԻՐ. ԹԻԻ 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1920

ՊԷՏՐՈՒԹ

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ

Ա Ն Տ Ա Ռ Ո Ւ Մ

Ստլաշատակը յանկարծ կարուստ եւ սկսում էր անտառը:

Նա թեքուեց աջ եւ բռնեց անտառը տանող միակ արահետը: Գարունը զաղտազողի եկել ու նստել էր շաւիղը երիզող կայտառ թղկենիների ու մերթ ընդ մերթ իրենց դոյուլիները պարտադրող կաղնիների վրայ: Անցեալ շաբաթ բողբոջ էր ամէն ինչ լիակ աչաօր թարմ կանաչութիւնը ծփում էր ամէն կողմ եւ բարձրանում վեր, ուր երեկոյեան արեւը լոյսի անձրեւ էր ցանում տերեւների վրայ:

Նրան դիւթողը բեղմնաւոր հողի բուրմունքն էր: Նա դարձան աւիլը զգում էր իր արեան մէջ, իր մտերում ու միաննորում: Նա մի պահ կանգ առաւ, թեքուեց ու քնջօրէն շոյեց մի մենաւոր քրքածաղիկի թելը: Նա դիտէր, որ ուրաւպառլոյտ արահետից այն կողմ, ուր հոսում է գետը, հանդիպելու է դեռ վայրի կաղաչների, արտում մարգարտամաղիկների եւ տաղաւին թմբիրի մէջ մտած աղալիաների: Բերկրանքից վազեց ու ցատկեց արահետը խայածնող առուի վրայից:

Դա բացարձակ յիմարութիւն էր: Ցաւէ մի ալաք բարձրացաւ նրա ողնաշարն ի վեր: Թեւերը կանթեց մէջքին ու տրորեց հին ցաւը, որն առաջացել էր պատերազմի օրերին, երբ ինքը պահականաւի հրամանատար էր Քա-



ղաղակների ջրերում: Քշնամու յաճանաւը գիշերը գարանակալ յարձակուել ու երկուսի էր կիսել իր նաւը: Հրաշքով փրկուել էւ ամբողջ մէկ տարի դամ-ւած էր մնացել անկողնուն: Յաւն անցաւ: Ծտկեց իրանն ու բռնեց դեռտեղե-րէս ուղիին:

Այստեղ կաղամախները թիկունք թիկունքի տուած՝ զարթոնք էին ա-ւետում: Բնութեան մէջ ձմեռուայ վերջին շունչը կար եւ ամբան խոտու-մը: Ներկան վաղանցիկ էր, գրեթէ քացակայ: Այդ միտքը վիշտ պատճառեց նրան: Գրպանից հանեց ծխամորճը, լցրեց, վառեց ու ներշնչեց ծուխը: Նա բարձրահասակ էր, մշակուած դիմադծեր ունէր եւ հանդարտ քայլուածք: Ձգում էր իր ներքին ու արտաքին ներդաշնակութիւնը եւ այդ նրան լուռ երջանկութիւն էր պարգեւում: Բնութեան մի մասնիկն էր: Երբ ջօշափում էր ծառի կոճղը կամ դալար տերեւը իրեն թւում էր, թէ հազարդարեւում է ձեւերի հետ: Այդ աւելի մօտ է իր՝ ճարտարապետի խառնուածքին:

Ամէն պարագայի, ինքն էր ու իր անտառը: Այստեղ քաջարձակ մենակ էր: Մենութեան մէջ վերագտնում էր իրեն, այն մէկին, որին մասամբ ճա-նաչում էր: Այդ մէկը աւելի անկեղծ էր, քան Գլխաւոր Ճարտարապետը, որի մտայղացումները դառնում էին բարձրաբերձ շինութիւններ, վիթխարի կամուրջներ, նորատեղծ աւաններ ու երբեմն էլ դեռերը սանձող ջրամբար-տակներ: Այստեղ, անտառում նա սովորում էր, վերաստեղծում: Մնօտը վեր տնկած՝ նա ատամներով կառչել էր ծխամորճին:

Արահետը զնալով լայնացաւ ու միացաւ բացատին: Դարձաւ ու դի-տեց շուրջը: Ոտքերի տակ գետն էր հոսում, հանդարտ ու անաղմուկ: Հան-դիպակաց ափը մուգ կանաչ էր հաղել: Կանաչը կարծես ջրից գոյացել ու բարձրացել էր վեր՝ դէպի աներեւոյթ բարձունքները: Նա սիրում էր այս վայրի մթութիւնը, անտառի անակնկալ զոյներն ու ձեւերը: Ամէն օր իջնում էր անտառ, քայլում իրեն ծանօթ ու անծանօթ կտածաններով եւ արեւմուտին վերադառնում տուն:

— Ահա մեր անտառապահը — բացաղանշում էր Սիւլվան սպիտակ տան շէմին՝ զոյգ մանուկների ձեռքերը բռնած:

Համբուրում էր կնոջ այտը եւ քայիկներին գրկում տոտծ դառնում էր կրունկի վրայ:

— Առիւծ տեսա՞ր, — հարցնում էր մանչուկը՝ համոզուած, որ դրա-ցի անտառը վրտում է ամէն տեսակի գազաններով:

— Վա՛ղր ինչպէս, — հետապնդում էր չիկահեր աղջնակը, ոչ այնքան հետաքրքրութիւնից իրզուած, որքան եղբորից յետ շմեպու միտումով:

— Թէ՛ տիւծ, թէ՛ վաղր եւ թէ՛ արջ — պատասխանում էր՝ ծայնում պափոս դնելով:

— Վաղը ինձ էլ տար, — աղերսում էր մանչուկը:

— Ի՛նձ էլ, — վրայ էր տալիս աղջնակը:

— Հապա ինձ, — մէջտեղ էր ընկնում Սիւլվան՝ աչքերում սէր ու գո-րով:

— Բոլորիդ էլ:

— Խոտանո՞ւմ ես:

— Խոտանում եմ:

Այնտեղ, ուր բացատը կտրւում էր, առուակն էր իջնում ու միանում գետի ջրերին: Առուակի վրայ փայտէ մի խախուտ կամուրջ էր ձգուած, որը երկարում ու հասնում էր դիմացի թաւուտին: Նա սիրում էր փայտէ այդ համեստ կառոյցը, ըստ երեւոյթին շինուած մէկի կողմից, որը գոյզն գա-

դաժնար իսկ չի ունեցել ճարտարապետութեան մասին: Բայց մի՞թէ ճարտարապետ պիտի լինել կառուցելու համար: Մի՞թէ ճարտարապետական բոլոր օրէնքները հիմնուած չեն փորձի վրայ: Մարդկութիւնը կառուցել է դարերից ի վեր: Հետաքրքիր է իմանալ իմ ներքոյ աշխատող շորս հարիւր ճարտարապետները սրանից աւելի համապատասխան կամուրջ պիտի՞ կառուցէին այս առուակի վրայ...

Այսօր Հինգշաբթի է: Յաջորդ Հինգշաբթի ես Բոմբէյում պիտի լինեմ ստուգելու համար այնտեղ կառուցուող հիւլէական հնոցի աշխատանքը: Այդ հնոցը իմ տոալին կտոայցը կը լինի Ասիայում: Տեսնես, երբ վերադառնամ ազալիաները ծաղկած կը լինեն: Նա մտովին թուեց Բոգոթայում, Հռոմում, Սիդնեյում, Ակրայում, Լոս Անջելիսում եւ բազմաթիւ այլ կենտրոններում բարձրացած իր կառույցները: Եւրանի բանաստեղծ լինէի: Խօսքը տեւական է, մինչ շինութիւնները կարող են աւերուել մարդու կամ բնութեան կողմից:

Նա աւելի ուժգին ներշնչեց ծխամորճի ծուխը:

Թաւուտում նստեց միակ ուռնու տակ: Մէջքը յենեց ծառին եւ երկար սրունքները պարզեց հողի վրայ: Լաւում էր առուակի շնչկոցը: Լաւեց ուշադրութիւնը եւ յանկարծ կենդանացաւ անտառը հազար ու մի ձայներով: Կարծես հողը ուռնանում էր սերմի ուղղահայեաց ժայթքումից: Նա զգաց ցողունների ու բողբոջների աճման կոտորածը՝ բիրաւար միջատների խլրտումների հեւքի հետ զուգընթաց: Նրա ուռնակները լայնացան: Հողը ապրում էր: Զգրանիս որանդից վայրի ընկուզենու թարմ տերեւների բուրմունքը սարածուեց միջոցում: Գլուխը հակեց Սիւլվայի շաղանակազոյն վարսերի վրայ: Կնոջ մարմնից անանուն խունկերի բոյր էր դոյանում: Մատները խրեց կնոջ հերքի մէջ, ափերում առաւ նրա գլուխը եւ ձօտեցրեց շուրթերին: Համարեց երկար, նախ բերանը, ապա ալիքը, պարանոցը, ճակատը, աչքերն ու քունքերը: Սիւլվան չնաչխարհիկ նուագարանի նման երգում էր, մերթ մերթ՝ ինչպէս զեփիւռ, մերթ խորտա՝ ինչպէս խռով փոթորիկ:

— Սիւլվա, քո կեանք...

— Իմ անառակ անտառապահ...

— Ուզում եմ, որ լինես...

— Դու պան, դու ոգի...

— Ես քեզ կարող եմ սիրել մինչեւ լոյս...

— Մինչեւ լոյս...

— Մինչեւ յաւիտեան...

— Որքան է յաւիտեան...

— Դու ես...

— Գրկի՛ր ինձ...

— Մինչեւ...

Մերկացրեց Սիւլվային ու համարեց ստինքները՝ մէկ աս մէկ, անշտապ ու անծէս: Գաղջ հողի մէջ գալարւում էր կինը: Նա թէ՛ ծեռքերով շօշափում էր կնոջ լանջը, մէջքը, կունքերն ու ողորկ գիտերը այնքան մտերմիկ ու միանգամայն անառիկ: Վայրի ընկուզենու տերեւների բուրմունքը զնալով հեղձուցիւ էր դառնում: Նա ուզում էր, որ շարունակուի ստեղծագործութիւնը: Որ յարատեւի իր կեանքը Սիւլվայի արգանդում, որպէսզի երբ վերադառնայ Բոմբէյից՝ ծաղկած գտնի ազալիաների թուփերը: Որպէսզի կարողանայ իր քալիկներին ասել, ահա այն կինը, որին սիրեցի, որի վարսերից վայրի ընկուզենու տերեւների բուրմունք է ստարածւում:

Հայեացքը դարձրեց գետի հանդիպակաց կողմը, որի կանաչ Փոնի վր-

բայ բաց կապույտ ժապավենի պէս մէջ էր իջել: Միամորճի մոխիրը դատարկեց, կրկին լցրեց ու վառեց:

Ուղեքերի մօտ մի քանի վտիտ առուոյտներ պիշպիլ իրեն էին նայում: Ուղեք պոկել մէկ հատ եւ Միլլիանի նուէր տանել, սակայն այդ չարաւ՝ մըտածելով որ առուոյտի կեանքը առանց այն էլ շատ կարճ է: Կնոջը կը համբուրէր եւ այդպիսով կը փակէ հարցը: Մի տեղ ճիւղերի շարժման յուզք առաջացաւ: Երեսուսարդ մի զոյգ գրկախառն քայլում էր՝ դրեթէ անէացած: Մի տաս րոպէ յետոյ մի շուն երեւաց, որը անընդհատ հոտոտում էր հողը եւ պարբերաբար միզում թուփերի ու կոնդերի վրայ:

Բարձրացաւ, ամբողջ հասակով ձգուեց, մի քանի անգամ դոփեց հողը եւ շարժուեց դէպի անտառի խորքը, ուր դետը լճակի է վերածուում: Մի քանի շաբաթից, երբ սոթը վրայ հասնի, այստեղ կը խայտան մանուկներն ու պատանիները: Դիմացում՝ լճակի ակիւն, խիտ ծառերի արանքում երեւում էր դերաններից պատրաստուած մի փոքր, անճոռնի հիւղակ, շատ հաւանաբար զործը արկածախնդիր պատանիների: Նա նայում էր այդ տճեւ կառույցին եւ հիանում, թէ ինչպէս հիւղակը ներդաշնակուել էր շրջապատի ամբողջութեանը, համադրուել ու դարձել շարունակութիւնը բնութեան: Ահա այդպէս պիտի լինի: Մարդը պիտի ապրի բնութեան մէջ, որպէս բնութեան քաղկացուցիչ մասը, այլ ոչ թէ աների ու քանդի բնութիւնը, փոխարէնը կառուցելու համար այլանդակ, անհոգի տուփեր, դրանց անուանելով տուն ու բնակարան: Հենց վազն եւ իսկ ինքը կը կորդադրի, որպէսզի քաղաքի հիւսիսային արուարձանի ծառախիտ շրջանը անխախտ մնայ: Թո՛ղ քաղաքապետարանը ինչքան ուզում է բողոքի, թէ ծախսալից ու անգործնական է անտառուտ դռնում բնակարանների ցանց կառուցելը: Ինքը կը պայքարի իր բռնորդ ուժերով: Ի հարկէ, դիւրին է, հողին հաւասարեցնել անտառը եւ տափաթակ տնայութեան վրայ զօրանացանման պատեր բարձրացնելը: Բայց այդպիսով մենք բնակարան չենք կառուցում, այլ բանտախուցեր՝ սպանելով բնակիչների հոգին ու բթացնելով նրանց կեանքը:

Պաղափարը հետզհետէ տարածք ստացաւ նրա մտքում: Կլտամբեց իրեն, որ մինչ այդ գործնական քայլեր չի կատարել այդ սեղանութեամբ: Ամէն Տուն Բնութեան Գրկում, ահա իր նշանախօսը: Պաղաքապետարանը չէ, թող Շինարարական ամբողջ նախարարութիւնը պայքարի դուրս դալ իր դէմ: Ինքը մէկ քայլ անգամ չի դիմի:

Այստեղ ինքն ազատ էր: Անտառը դերձ էր քաղաքակրթութիւնից: Ձկար օրէն ու կանոն: Պարտաւոր չէր հերթի սպասել կամ կարմիր լոյսին կանգ առնել: Այստեղ ինքը մարդ էր՝ անհատ ու ամբողջութիւն: Նա յիշեց քաղաքը, ժխորն ու մեքենաների ծուխը եւ զարմացաւ, թէ ինչպէս է կարողացել դիմանալ քաղաքակրթութեան այդ ահռելի տենդին: Այո՛, մարդկուութիւնը դանդաղ ինքնապահութիւն է դործում: Հետաքրքիր է իմանալ, պարոններ, թէ ո՛ւր ենք դնում: Ո՛ւր եմ դնում: Այնքան դրսևուած եմ վազելով, որ մոռացել եմ նպատակակէտս: Ես հիմա չգիտեմ, թէ այս խելագար վազքը յանուն ինչի՞ է: Արդեօք ա՛յս է կեանքը: Այդպէ՛ս պիտի լինէր: Թէ որեւէ տեղ չեղուել ենք բնական հունից եւ ընկել մեքենայի երախը: Մենք հիմա փողոցներում տասնեակ հազարաւոր հոգիներ ենք, տասնեակ հազարաւոր անհազոր ու անհանգրուան կղզիներ: Ապուշի պէս կանգնում եւ խայմերուկի լոյսին ենք նայում: Լոյսը փոխում է, մենք էլ ոչխարի հօտի պէս շարժւում ենք: Յետոյ մտնում ենք հանրակացք եւ բացակայ հալեացքներով միմեանց նայում: Մեզ տուած են սպասէք, մենք էլ սպասում ենք: Ա-

սուս են հերթի կանգնեց, մենք էլ կանգնում ենք: Յաճախ շեն ասում: Մեքենան է ասում: Էլեկտրական աչքը: Հերթի ենք կանգնում ծնունդու համար: Հերթի ենք կանգնում ապրելու համար: Հերթի ենք կանգնում սիրելու համար: Հերթի ենք կանգնում մեռնելու համար: Իսկ եթե գերեզմանափորների արհեստակցական միութիւնը գործադուլի մէջ է, ապա մեր գիտկանները կարող են շարաթներ պահուել վիթխարի սառնարաններում: Դիտարաններում անգամ հերթի պիտի սպասել: Ո՛ր: Մարդը պիտի յետ դառնայ դէպի բնութիւն: Վերադառնայ դէպի պարզութիւն: Նա պիտի դառնի իրեն: Ես պիտի իմանամ, թէ ով եմ: Ես պիտի իմանամ իմ եւ այլոց միջեւ կապը: Ես պիտի իմանամ իմ եւ աստղերի միջեւ կապը: Անպատճառ մի նպատակ եղել է: Պէ՛տք է, որ եղած լինի: Այլապէս ամէն ինչ պատահականութեան վերադարձը շատ ողորմելի պատճառարանութիւն է: Նախ պիտի գտնել մարդը: Ազգ, ցեղ, կրօն, համայնք ու հասարակայնութիւն երկրորդական բաներ են: Առանց անհատի միջոցները իմաստ չունեն: Այո՛, ես վաղն եւ իսկ կը կարգադրեմ, որ անխախտ պահուեն անտառները, որպէսզի մանուկները մտերմանան ծաղիկների ու ծառերի հետ: Ես կը զնամ Շինարարութեան նախարարի մօտ եւ կ'առաջարկեմ, որ միջպագային մի խորհրդաժողով գումարուի՝ պահելու եւ պահպանելու համար մեր երկրագնդի բնական դեղեցկութիւնները: Այլապէս մի օր այդ պիտի բանանք ու տեսնենք, որ դեղին է գետը, բորբոսնել է չողը եւ թռչնաւորուել օդը: Այդ դէպքում այլեւս ի՞նչ արժէք կարող է լինենալ աղագային արժանապատուութիւնը, ճարտարապետութիւնն ու արդիւնաբերական յառաջդիմութիւնը, երբ մարդ չի մնայ վայելելու համար այդ նուաճումը:

Ձեռքերը սրնագոյն բաճկոնի դրպանները մխրճեց եւ ծանր քայլերով շարունակեց ճամբան: Բարդինների կառարին դեռ արեւ կար: Կը դառնայ լըճակի շուրջը, կը դիտի չրմակայքը, ապա կը վերադառնայ տուն: Յիւնց, որ զիւերը համերգի պիտի գնային ինքն ու Սիրվան: Եթէ չեմ սխալում, յայտագիրը կազմուած պիտի լինի երեք «Բ»-երից — Բրամս, Բէթհովէն եւ Բախ: Այդ լաւ եղաւ: Մի երկու ժամ կը կտրուի մեքենական աշխարհից: Այդ երեք քուրմերից Բախն աւելի մօտ էր իրեն: Նա այնքան չէր լսում, որքան տեսնում էր Բախի երաժշտութիւնը: Նախ մարմարէ մի սիւն, որը հետըզհետէ բարձրանում է անհունը, ապա կոտորակում եւ քիւրաւոր բեկորներով իջնում հորիզոնին՝ դառնալու ատամնաւոր բուրգ ու ապակէ աշտարակ: Մերում էին բեկորները եւ վերադարձուելով փոխում երկրաչափական ողորկ ձեւերի: Լինում շարք: Յետոյ մի այլ շարք: Այդ շարքի վրայ մի այլ շարք, մի այլ ու մի այլ միջեւ յուստենականութիւն: Սակայն յախտենականութիւնը կտրւում եւ իջնում էր ցած: Թափւում: Մերթ դահալէժ, մերթ դանդաղահեւք, ինչպէս վարդի թերթիկների բացումը: Յետոյ ուղղահայեաց գծերը դնում էին մինչեւ Բաբելոն, Ասորեստան ու Եգիպտոս, խորում աւազների մէջ եւ յանկարծ երկնահունչ յուզքով փոխում ազամանդէ խաչի՝ կապոյալ լոյսերի մէջ ողորուն: Ապա միջոց: Կանաչ յոյս եւ յոյսի միջոց սկզբնաւորութիւնը բերաւոր խորանարդների, մէկը միւսի վրայ՝ աստիճան ու աստիճան՝ մինչեւ Ատտուած:

Հասաւ ընկուզենու ծառին: Հիմաւորաց ծառ էր՝ փարթամ տերեւներով: Իր ահագին աստիճանով շաղկեց ծառի խոնաւ բունը եւ ասիւնում զգաց Սիրվանի մտերի երգը: Կինը յանձնուել էր՝ աչքերը խուփ ու անամթթ, այնպէս՝ ինչպէս ցօղունն է ծծում արեւի թոյլը:

— Մի բան ասա:

- Ի՞նչ :
- Որ ինձ սիրում ես :
- Քեզ սիրում եմ :
- Նորի՞ց :
- Քեզ սիրում եմ :
- Զրոյէ՞ծի պէս :
- Զրոյէ՞ծի պէս :
- Ո՛չ, Գետի պէս :
- Գետի պէս :
- Ո՛չ, Ծովի չափ :
- Ծովի չափ :
- Ո՛չ, Ովկէանի չափ :
- Ովկէանի չափ :
- Ո՛չ, Աշխարհի չափ :
- Աշխարհի չափ :
- Ո՛չ, Տիեզերքի չափ :
- Տիեզերքի չափ :
- Ես էլ քեզ եմ սիրում :
- Որչա՞փ :
- Ի՞մ կեանքի չափ :

Սիլվայի ջրանաթոր մարմնից կրկին ընկուզենու թարմ տերեւների բուրմունք էր տարածում : Նրա շրթունքները լցունել էին, աչքերը մթադնել, իսկ կրծքից լաւայ էր հոսում, նա ոտքի կանգնեց, ամուր կառնեց կնոջ թեւերին եւ չվերջացող երազի նման դանդաղ նրան վեր բարձրացրեց եւ իր բազուկներին մէջ ուղծեց գլուխը, ուտերը, իրանն ու սրունքները : Մի պահ ետք : Ծալեց Սիլվայի ոտքերը կոնքերի տակ եւ նրա մարմինը սիրոյ կենդանի փունջ դարձրած՝ դրեց իր կրծքին ու քայլեց դէպի արեւոտ բացատը՝ առտուածներին ընծայելու իր կուռքը : Երբ մարեց ննջաօհնեակի լոյսը՝ Սիլվան խօսեց : Մէկ սերունդ բաւական է : Ես կը մեռնեմ, եթէ մեր որդին պատերազմի դնայ : Դեռ հասակ չենտած դալիս, ասնում են : Ո՞վ իրաւունք ունի իմ գաւկին խլելու իմ գրկից : Ես ուզում եմ, որ նա էլ ճարտարապետ դառնայ եւ շինութիւններ կառուցի : Բաւական է այսքան արեւնը : Իմ հայրը ճակատում վիրաւորուեց : Քեզ ուղիւստում վնասեցին : Իմ որդին պիտի ապրի խաղաղութեան մէջ : Ես չեմ կարող բաժանուել իմ որդուց : Դու պիտի խոստանաս, որ այլեւս պատերազմ չի լինելու, որ այլեւս մահ չի լինելու :

Նճակը իրականում լճակ չէր : Գետը անտառի խորքում բաժանուել էր երկու մասի, արաղացրել ընթացքը եւ քերելով ժայռուտ ափերը՝ կրկին միացել այն կէտում, ուր փափուկ կողերը լայնանալով վերածուել էր աւազանի : Ամբարտակից իջնելիս, ոտքը սահեց, կռուեց մացառից ու վերազտաւ հաւասարակշռութիւնը : Յաւը նետի պէս խոցեց նրա մէջքը : Դէմքի մկանները պրկուեցին եւ սառը մի քրտինք պարուրեց նրա մարմինը : Աչքերը լճակի կահակներին յառած՝ մթադնեց աշխարհը : Ալեկոծ, խաւար դիշեր էր նորից եւ սեւ ալիքների միջից շարունակ լսում էր յաճախաւ մեքենական բութ թնդիւնը : Կար նաեւ օրհասական ճիւղ եւ վաղեմի ընկերների աղիոգորմ կանչ : Երբ երրորդ անգամ ջրի երես դուրս եկաւ, ընկզմել էր իր պահակա՝ նաւը : Գրկեց կիսախելակորոյս մէկին եւ լողալով մէկ առ մէկ հաւաքեց իր միւս նաւաստիներին, որոնք յուսարեկ տարուբերում էին Ծովի երախում :

Կաղմեց մարդկային լաստ: Ինքը դարձաւ շարժիչ ուժը, իսկ իր ընկերները միմեանց ուօր կառչած՝ հետեւեցին իրեն դէպի անորոշ խաւարը: Երբ արշալոյսին ցամաք հասան, նոր միայն զգաց մէջքի տհալի ցաւը: Յետոյ այդ նոյն պատկերը վերապրեց բազմաթիւ հիւանդանոցներում՝ ամբողջ մէկ տարի՝ աչքերը անաստադին յառած:

Թաշկինակով ճակտի ու վրի զրտինքը մաքրեց: Բարձրացաւ:

Հին նաւաստին պիտի շարունակի: Նա պիտի նուաճի ցաւը, որպէսզի դպրոցներ ու հիւանդանոցներ կառուցուին աշխարհում: Որպէսզի հողն ու քարը մարդկային կենսւթի կոթողներ դառնան: Այն ժամանակ պատերազմ էր ու ժամանակ կոտուելու, այսօր խաղաղութիւն է եւ ժամանակ կառուցելու: Իսկ ես տուն պիտի գնամ, որովհետեւ ժամանակ է նաեւ սիրելու:

Սիրեց իր այս մտորումները եւ երջանկութեան ժպիտ դոյացաւ զէմքին, որը մինչ այդ խոժոռ էր, խիստ ու գեղեցիկ:

Նճակից վերադառնալու համար երկու ճամբայ կար: Մէկը անտառա-միջի արահետը, իսկ միւսը ամբարտակը: Ընտրեց վերջինը: Ամբարտակը բարձր էր եւ այնտեղից տեսանելի էր գետի ու անտառի մի զլխաւոր մասի համայնապատկերը:

— Վաղը ինձ էլ տար:

— Ի՞նչ էլ:

— Հապտ ինձ:

— Բոլորիդ էլ:

Այո՛, վաղը կ'աննի Սիւվային, որդուն ու դստեր եւ բոլորը միասին կը բարձրանան ամբարտակը, այնտեղից դիտելու համար զարուհը:

— Պիտի կրակէ՞ս, թէ հանաք ես անում — ասաց աղջիկը իր երկար անփոյթ մագերը հեռացնելով աչքերից:

— Պիտի կրակեմ — պատասխանեց տղան:

— Ե՞րբ:

— Երբ բարձրանայ ամբարտակի վրայ:

— Ո՞վ:

— Ձգիտեմ: Մէկը: Առաջինը:

— Մարդո՞ւ վրայ պիտի կրակես, — յուզուած բացազանչեց աղջիկը:

— Կամա՛ց, ուսուչ:

Աղջիկը վեհերոտ նայեց տղայի նիւհար, ոսկրոտ զէմքին եւ համոզուեց, որ նա լուրջ էր:

— Եթէ վախենում ես, գնա՛, — լսուեց տղայի սառտը:

— Ո՛ւ, չեմ վախենում:

— Ուրեմն լռի՛ր:

Տղան մի պահ թողեց հրացանը, շապիկով չորացրեց ափերի ջրտինքը եւ կրկին հակուեց փողի վրայ: Գետի միւս ափին ամբարտակը ողողուել էր արեւի դեղին լոյսով: Մերթ ընդ մերթ լսուած էր թռչունների զիւ ճուռողիւն:

— Կրակի՛ր օդում, — ասաց աղջիկը՝ ջանալով դուպի իր ներքին յուսմամբ:

— Ի՞նչ օդուտ:

— Այն ատեն բարձր ծառին խփի՛ր:

— Հազար անգամ խփել եմ:

- Բայց ինչո՞ւ մարդու վրայ։
 — Հենց այնպէս։ Ուզում եմ տեսնել ինչ կը լինի։
 Տղան ալ ձեռքը ազատեց, մատներով մաքրեց նորածիւ բեխերի զըր-
 տինքը եւ արագ համբուրեց աղջկայ բերանը։
 — Դու իմ աղջիկն ես, չէ՞։
 — Այո։
 — Քեզ պիտի ընծայեմ առաջին զոհը։
 — Բայց արդէն ուշ է։ Գուցէ վաղը։
 — Մինչեւ արեւամուտ կը սպասենք։ Դեռ մամանակ կայ։
 Մէկ հոգի նկատուեց ամբարտակի վրայ։ Նա ձեռքերը սրճադոյն բաճ-
 կոնի դրոպաններն էր խրել եւ ծնօտը վեր անկած՝ ծխում էր ծխամորճ։ Նա
 քայլեց ամբարտակի երկայնքով, ապա կանգ առաւ ամենաբարձր կէտում։
 — Ո՞վ է, — շնչաց աղջիկը։
 — Ձդիտեմ։ Երբեք չեմ տեսել։
 — Պիտի կրակե՞ս։
 — Այո՛։
 — Ե՞րբ։
 — Լո՛ւր։

Ամբարտակի այցելուն դարձաւ շուրջը։ Այժմ երեւում էր նրա լայն
 թիկունքը։

Մի բուք թնդին լսուեց, որը երկու անգամ արձագանգուեց անտա-
 ում։ Ամբարտակի այցելուն երեսն է վար փրուեց հողին՝ ծոծրակն արեւ-
 նաթաթախ։ Նա մի քանի անգամ թափահարեց ոտքերն ու անշարժացաւ։

Յ. ԿԱՐԱՊԵՆՅ



ՄԱՐԴՈՒ ՍԻՐՏԸ

Ցուրտ է դա՛րը, հո՛ղը, ֆա՛րը,
Ցուրտ է բա՛ռը, շո՛ղը, ծա՛ռը,
Ցուրտին կ'ապրի՛ սիրտը սակայն,
Հըրավառ է սիրոյ լարը:

Լուռ է ֆա՛րը, հո՛ղը, դա՛րը,
Լուռ է ծա՛ռը, շո՛ղը, լա՛րը,
Լուռ սըրտին գիլ գանգն է սակայն՝
Աստուածահունչ խըղճի բա՛ռը:

Մու՛ք է բա՛ռը, մըտքին քա՛ռը,
Մու՛ք է գարուն տօնածա՛ռը,
Մու՛ք սըրտին շո՛ղ կու տայ սակայն
Յաւերժաբոց Յոյս-լամբա՛րը:

Հո՛ղ է սիրտը, շո՛ղ է սիրտը,
Դարը դարուն կապող սիրտը,
Սիրոյ նըւագ, խըղճի ճըրագ,
Աստուածակերտ Մարդո՛ւ սիրտը:

1970 թ.

ՀԻՆ ՕՐԵՐԱՆ ԿԱՐՕՏ

Սովորոյթ էր, — հին դարերուն
Նրբ աւանդէր մարդն իր հոգին
Երգ ու պարով դիակն անտուն
Կը տանէին ծայրը գիւղին.
Հոն կ'ըսպասէր, մօտն ամպերուն
Աշտարակը՝ ասիւր բերդին,
Որ կ'ընծայէր արծիւներուն
Անյիշատակ հիւրը կեանքին:

Երջանկութի՛ւն... Վերջին պահուն
Դառնալ արծւի միւս ու արիւն,
Սաւառնաթեւ ճախրել՝ անհուն
Կապոյտն ի վեր ու աստղերուն:
Մինչդեռ այսօր՝ կ'երթանք հողի՛ն,
Կ'երթանք որդի՛ն ու խաւարի՛ն,
Մեր խո՛նջ կուրծքին խաչ մը փըխրուն...

Կ'օրենքմ բախտը ես հին մարդուն:

1970 թ.

Յ. ԳԵՂԱՐԿ

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՋԸ

(Վ Է Պ)

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ
ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԵՐԸ

Գ(ՈՒՆ Է.

Թուրքերը, որոնց թիւը շատ մեծ ըլլալու չէ, ապաստան կը գտնեն փոսերու մէջ եւ թուրքերու ետեւը ու կը կրակեն մեր կողմը: Կացուցիւնը շատ երկար չի կրնար մնալ ի նպաստ մեզի: Թշնամի նոր ուժեր կրնան հասնիլ ու կտրել մեր նահանջի ճամբան: Բարեբախտաբար, արեւը ոկսած է մարը մտնել եւ, անմիջապէս որ զիշերը վրայ հասնի, պիտի լքենք մեր դիրքերը ու հետեւինք մերիններուն:

Կառքերը եւ թնդանօթները քաւական հեռացած են արդէն:

Հրացանաձգութիւնը կը շարունակուի: Թուրքերը կը պատասխանեն, բայց գումուած կը մնան իրենց դիրքերուն եւ արդէն այս է մեր ուզածը:

Նոր մուրը կը կտրէ, կառքերը անյայտացած են այլեւս: Առաջին դիմի կռուողները սողալով կը մօտենան իրենց ետեւի ընկերներուն եւ, երբ կը զգան, որ

ազատուած են անմիջական վտանգէ, խումբ-խումբ կը կորսուին խաւարին մէջ:

Թնդանօթները, զէնքերը եւ զինամթերքը կ'ամբարուին Արծինի բերդին մահաւանդներուն մէջ եւ կը յանձնուին ղեկեալ պահակներու հսկողութեան:

Գիշերը արդէն բաւական յառաջացած է: Կ'անցնիմ սրահէ սրահ: Մարդիկ, յոգնած օրուան աշխատանքէն, պառկած են հոս ու հոն եւ արդէն կը ծնանան: Զապէլ անցած է կիներու բաժինը ու կը խնամէ հիւանդները, կը մխիթարէ որք մանուկները: Ես ալ կը քաշուիմ անկիւնս հանգստանալու համար: Կը զգամ, որ կ'ապրինք ճակատագրական ժամեր, վաղը պիտի ըլլայ վճռական օր մը:

Աչքերս հազիւ դուրս մէկը կ'արթնցնէ զիս: Կը հետեւիմ անոր մինչեւ արջունական սրահը: Ջահեր կը լուսաւորեն անկիւններէն մէկը եւ շուքերուն կու տան առասպելական համեմատու-

թիւները: Սահակ ինծի կը ոպասէ սիւնի մը կոթնոտ: Գիշերը տանքան լուս է, որ գետակին խաղաղ կարկաշը կը հասնի մեզի: Յանկարծ կրակոց մը կը վերաւորէ մեր ականջները եւ կ'արձագանգէ՝ հինաւուրց կամարներուն զարնուելով: Կը նայիմ Սահակին աչքերուն մէջ:

— Ոչի՞նչ, — կ'ըսէ, — մերոնք արդարութիւն կատարեցին:

— Ձեմ հասկնար տակաւին, կ'ուզեմ լուսարանուիլ:

— Յերեկը, երբ զբաղուած էինք զէնք փոխադրելով, մերիներէն խումբ մը կը բարձրանայ դիմացի անտառները փայտ փնտռելու համար: Դասի մը տակ, կը նշարեն երկու երեք ոչխարներ: Հովիւն կանգնած էր քիչ մը անդին: Ձի մը կը վրնջէր, խոտ ուտելով, թուփի մը կապուած: Հովիւ մը, որուն հօտը կը բաղկանայ երկու-երեք ոչխարներէ եւ առոյգ մի մը ունի իր տրամադրութեան տակ, ընդհանրապէս ուղարկութիւն կը դրաւէ:

Մերոնք կը մօտենան հովիւին, կը հարցաբնեն: Երգըրումցի մը կը ճանչնայ զինք: Սիմոն Կաղիբեանն է: Եկած է մինչեւ այս կողմերը, մեզ լրտեսելու համար: Անմիջապէս կը ձերբակալեն ու կը բերեն հոս, կը կալմեն պատճապարտեն միմայնութեամբ: Վճիռը դործադրելու համար, կը խնդրեն նաեւ իմ հաւանութիւնս:

Անհաւատալի թեթեւութիւն մը կը խուժէ հոգիէս ներս: Կ'ողկոյնեմ վահանը, թորդումը եւ ճամբարի իմ հազարաւոր մարտիբոս ու ցաւատանջ ընկերներս: Թող խաղաղութիւն տիրէ ձեր անթաղ ռակորներուն վրայ: Քնացէ՛ք անվրդով, սիրելի՛ եղբայրներ, արդարութիւն կատարուած է:

— Սիմոն Կաղիբեանի ձերբակալութիւնը շատ օգտակար եղաւ մեզի համար: Իրմէ իմացանք շատ բաներ: Գիտենք հիմա այս ճակատին վրայ գտնուող թշնամի ուժերուն թիւը: Գիտենք նաեւ ե՛րբ եւ ո՛ր ուղղութեամբ պիտի կատարուին յարձակումները: 60 հազար թուրք զին-

ւորներ, մէկ օրէն միայն պիտի խուժեն մեր արեւնաջամ հայրենիքին վրայ, երկու ուղղութեամբ: Մէկ թեւը պիտի գլորաւէ Ալեքսանտրապոլը, միւս թեւը՝ Երեւանը, եւ անկէ ձեռք պիտի երկարեն թաթար ուժերուն, որ կը գործեն Ատրք-պէյճանի մէջ, եւ տէր դառնան ամբողջ Կովկասին: Եւ մեր Հայաստանը ի սպաս պիտի ջնջուի աշխարհի քարտէսէն: Ինչպէս կը տեսնես, մեր՝ հայերու կացութիւնը ճշնաժամային է: Հարկաւ, թուրքերոյ ամբողջ ունեցած ուժը այս քանտուղ չէ: Ենթադրու օտար պետութիւններու մեղսակցութեան, կրնայ շուտով ուրիշ քանակներ զրկել այս կողմերը: Ատրքէմ, ընդամենը մենք ունինք 10 հազարի չափ կանոնաւոր ուժ եւ մօտ 6 հազար կամաւորներ ու կէս միլիոն սովահար արբերու եւ այլ ժողովուրդի մը բռնը...

— Եւ չմեռնելու պողպատեայ կամքը եւ վրէժի օնը արիւնը, որ կ'ամրապնդէ մեր մկանները եւ իւրաքանչիւրիս կը պարտադրէ տառը զինուորի պաշտօնը...

Այս յուսահատութեան ովկիանոսին մէջ, այդ կը մնայ միայն մեր յօքը: Թուրքը մեր գէմ կը կուռի դազունի մը ատելութեամբ. մենք պիտի կուռինք յամառ հաւատքով: Մեկմէ իւրաքանչիւրը պիտի ըլլայ հրապէն հրեշտակ մը, զինուած կրակէ տուրով: Եւ պէտք է աշխարհը իմանայ, թէ մենք զաւակներ ենք Հայկին, եւ Սասունցի Դաւիթը միշտ կ'ապրի մեր մէջ:

Սրահին կամարները կը հրճուին մեր յանդուգն խօսքերը լսելով, որովհետեւ կը ճանչնան մեզ իբրեւ շառաւիղը այն հսկայ ասպետներուն, որ կը հաւաքուէին հոս, իրենց յաղթանակները տօնելու:

— Հիմա որոշենք, — կ'ըսէ Սահակ, — եթէ վաղը, այդպառցին, թշնամի բանակները գործի սկսին, ցերեկին կ'անցնին մեր մօտերէն եւ կէսօրին կը հասնին Արաքսի ափին: Մեր առջեւ ունինք շատ քիչ ժամանակ՝ օգտակար բան մը ընելու համար: Մեր աշտեղի ուժերը կը բաղկանան հինգ հարիւր տղամարդէ, առակ՝ զէնք կրելու ք մնացեալը երկու հազարէ

աւելի ծերեր, կիներ ու երեխաներ են, ի՞նչ պէտք է ընենք:

— Մեր ընկերքը շատ պարզ է: Կէս դիւերին իսկ կը լքենք Արծինը: Առջեւէն կ'երթան անկարները: Մնացեալը կը փոխադրէ զէնք ու գինամթերք: Կ'անցնինք Արաքսը թշնամիէն շատ առաջ եւ մեր բերածը կը յանձնենք մեր երկրի իշխանութեան, որպէսզի կարենայ քանի մը հազար կոտորներ զինել:

— Այս է լաւագոյն համարն: Այո՛, կէս դիւերին, ժողովուրդը եւ զէնքերը ճամբայ կ'իջլին, բայց ո՛չ բոլոր կոտորները: Անխոհեմութիւն է ամբողջովին լրջել այս գիրքը: Հարկէր հոգի մը բաւական է պաշտպանելու համար Արծինը եւ կեցնելու թրջական բռնակին մէկ թեւը, քանի մը ժամ, օր մը, երկու օր, թերեւս շաբաթ մը, մինչև որ մեր իշխանութիւնները ժամանակ ունենան կազմակերպելու ճակատները:

Իսկապէս, Սահակ խելացի ռազմա-վար մըն է: Կը շնորհաւորեմ զինք:

— Ես պիտի մնամ Արծինը պաշտպանողներուն զլուխը, — կ'ըսէ ընկերս:

— Ե՛ս ալ, — կ'ըսեմ, — շատ սիրեցի այս քաղաքը, ընտելացայ անոր քարերուն հետ: Արծին կը խորհրդանշէ մեր հայրենիքին անցեալը: Մեր ապագան կերտելու համար՝ պէ՛տք է պաշտպանենք մեր անցեալը:

Սահակ ներս կը կանչէ խմբապետները, կու տայ պէտք եղած հրահանգները: Կ'որոշուին այն խումբերը, որոնք պիտի մնան Արծինը պաշտպանելու եւ անոնք, որ պիտի մեկնին ժողովուրդին եւ զէնքերուն հետ:

Կէս դիւերին, աւերակները կը սկսին կենդանանալ: Ամէն կողմէ կանչեր եւ աղմուկ: Բայց խմբապետները լաւ կը հսկեն եւ շատ չանցած կը լսենք կառքերու եւ թնդանօթներու անիւներուն ձայները, որոնք կը հեռանան Արծինէն: Կը բարձրանանք պարիսպներուն վրայ եւ ժամեր կը դիտենք հեռացող ժողովուրդը: Եւ երբ արշալույսը կը սկսի մոխրագոյն լոյս մը ցանել գիւղերուն փէշերուն, մեկնողներուն բազմութիւնը սեւ

դիւ մը կը կազմէ դաշտավայրին վրայ:

— Հիմա անցնինք մեր գործին, — կը հրամայէ Սահակ:

Գնդացիները կը տեղաւորուին պարիսպին անկիւնները: Մեզի բաժին ինչ կած գինամթերքը մատաններէն կը փոխադրենք վերի յարկերը, որոնց նեղ պատուհաններուն առջեւ գիրք կը բռնեն եւ բեքէն շորս հոգի: Ունինք նաեւ երկու ծանր թնդանօթներ, որոնց փոխադրութիւնը դժուար նկատուած է: Անոնցմէ մէկը կը գետեղենք քաղաքին հիւսիսային դրան մէջ, երկրորդը՝ արեւմտեան դրան: Իւրաքանչիւրին համար կայ հինգ անտուկ ուսմբ:

Եւ կը սպասենք, որ թշնամին յայտնուի:

Ես կը գտնուիմ բերդին տանիքին վրայ, որ կ'իջիս շատ հեռուները: Տրամադրութեանս տակ ունիմ քսան հրացան եւ երկու գնդացի: Միտքս հանդարտ է: Զապէլ մեկնած է կրիերու եւ երեխաներու խումբին հետ: Հեռադիտակ չունիմ, սակայն կրնամ տեսնել շատ հեռուները: Որոշած ենք մեր ներկայութիւնը դադարեցնել, թշնամին անակնկալի բերելու համար:

Յանկարծ, արեւելեան կողմը կը նշկատեմ կէտ մը, որ կը յառաջանայ մեր կողմը: Բոլոր նայուածքները կ'ուղղուին այդ շարժումն կէտին վրայ:

Կամաց-կամաց կ'որոշուի անոր ինքնութիւնը: Պարիսպի վերէն կը պոռամ անունը:

— Զապէ՛լ:

Հրացանը ուսին, փամփշտակալը մէջքին, ան կը նմանի մեր Փետայիններէն ունէ մէկուն: Վար կ'իջնեմ զինք գիմաւորելու:

— Գիտէի որ հոս շատ դժնդակ օրեր պիտի ապրիս: Զուգեցի լեզ առանձին ձգել, որպէսզի չյուսահատիս:

— Բայց քու սեղդ հոն էր, Արաքսի միւս ափին, ժողովուրդին հետ:

— Միթէ մենք երգում չըրի՞նք կողք կողքի մեռնելու, — կ'ըսէ իր անդիմատ գրեկի ու քաղցր ժպիտովը:

Կը բռնեմ ձեռքէն ու կ'առաջնորդեմ քարէ խորխուլ աստիճաններէն վեր, մինչեւ միջնաբերդին տանիքը:

Եւ հետեւէն կը տեսնուի փոշիի ամպ մը, որ գետնին վրայ սողալով կը յառաջանայ մեր կողմը: Խուլ ժխոր մը կը լեցընէ ընդարձակ տարածութիւնը: Թուրք բանակը ճամբայ ելած է, վերջին հարւած մը տալու ուժասպառ հայութեան: Ճակատագիրը արձակած է դժոխային մեքենային փլթակը եւ քրքիջով մը, վերէն կը գիտէ իր մահացու խաղին հետեւանքը: Եւ թեղի վիճակուած է դանդաղեցնել անոր վճռակտն թաւալումը, որոպէսդ, անդիմադրելի խոյի մը պէս, չեղթայ փշրելու մեր հայրենիքը պաշտօնական միտք եւ սկզբէն պատնէշը:

Սահակ՝ շնչասպառ կը վազէ քովս: — Մենք շատ անխոհեմ գտնուեցանք, — կ'ըսէ, — մեր կոնակը ունինք անպաշտպան բարձունք մը, զոր թշնամին պիտի գրաւէ առանց դժուարութեան, եւ մինք պիտի իյնանք երկու կըրակի միջեւ: Պէտք է անմիջապէս դարձան մը գտնենք այս կայսրութեան:

— Միակ դարձանը այդ բարձունքը պաշտպանելն է: Հոն կը դրկենք մեր ուժերէն մաս մը, երկու գնդացիներով: Թնդանքները, իրենց ներկայ դիրքին մէջ, ո'չ մէկ օգտակարութիւն կրնան ունենալ, դանդաղ ալ կը հաննաք բարձունքին վրայ, եւ հոն կ'ունենանք ամուր գիրք մը, որ կը միջամտէ յարժար պարագային, Արծիւնը պաշտպանողներուն բռնը թեթեւեղելու համար:

— Բայց եթէ մեր ուժերը այսպէս բաժնենք, մենք զմեզ սկզբնապէս կ'ըլլանք:

— Այն երեսուն հոգիները, որ դիրք պիտի բռնեն բարձունքին վրայ, երեք հարիւր հոգիի դործ պիտի տեսնեն: Մահաւանդ, որ թշնամին, անտեղեակ մեր այս կարգադրութեան, անակնկալի պիտի գայ:

Սահակ պահ մը կը խորհի, կը դիտէ գիմաղի բարձունքը եւ դաշտավայրին մէջ յառաջացող փոշիի անպերը:

— Իրաւունք ունիս, — կ'ըսէ, — տակաւին բաւական ժամանակ կայ մեր առջեւ: Ընտրէ՛ երեսուն հոգի, անցի՛ր անոնց գլուխը, վեր փոխադրել տուր Թնդանքները, գնդացիները եւ դիտաւ մթերքը եւ թո՛ղ Աստուած հետդ ըլլայ:

Քսան հոգի կը լծուին տալիս թնդանքին ու կը հասնինք բարձունքին ստորոտը: Դարձգարձիկ արահետէ մը, զայն կը հասցնենք վերը եւ կը գետն-դենք ցած ժայռի մը ետեւը, երախ ուղղւած գէպի դաշտավայր: Նոյն դժուարութեամբ կը յաջողենք երկրորդ թնդանքին ալ հասցնել տալիսին կողքին: Զինամթերքի եւ ռումբի սնտուկները կը գետնիցէք թիչ մը անդին, քարայրի մը մէջ ու կը սպասենք: Բոլորս ալ ուժասպառ ենք ու քրտնաթոր: Երկու դիտողներ կը ձգեմ թնդանքներուն մօտ եւ միւսներուն կը հրամայեմ, որ թիչ մը լուռ առնեն: Խուժ խուժ կ'երթան, կ'երկնան տատակներու եւ ժայռերու ազահ շուքին տակ:

Զապէլ՝ կանգնած բարձունքին եզրերէր, ուշի ուշով կը դիտէ հորիզոնը: Արեւը սկսած է կիզիլ գառնալ եւ կ'իշխէ մեր դանկերուն վերեւը: Խուլ ժխորը եւ փոշիի ամպերը արդէն բաւական ժառանգած են: Կարելի է նշմարել ջոկատները այն թեւին, որ մեր մօտերէն պիտի անցնի: Զիտուր խումբեր կը վազվզեն դաշտավայրին երկայնքին ու լայնքին վրայ: Իսկ հետեւակ զօրքերու վաշտերը կը յաջորդեն իրարու, իրենց սուրները փայլեցնելով արեւի ուղղամիզ ճառագայթներէն: Շատ հեռուն, կարելի է նշմարել պարենատրման կառքերը, որոնց թիւը համարանքէ դուրս կը թուի: Կէսօրին պիտի անցնին Արծիւնէն քունի մը մզոն անդին, եւ երկկոյնան կանգ պիտի առնեն Արաքսի ափին, զայն յաջորդ օրը անցնելու համար: Կարելի է գուշակել թշնամի զօրքերուն թիւը, բայց 20 հազարէն վար չեն անոնք:

Կը վերջիչեմ ջամբարի իմ քոսն հազար ընկերներու, որոնք գրկուած են այս ամօնին մասնակցելու իրաւունքէն: Եւ այսպէս, քանի՛ հազարներ, որոնց դիմել-

ները կ'եփուին ու կը հալին Տէր Զօրի անապատներուն մէջ: Ա՛հ, եթէ անոնց բոլորը հոս ըլլային, պիտի կազմէին անյաղթելի բանակ մը, եւ պիտի գրոհ տային սա դիմացի վատերուն վրայ, զանոնք փախուտի մատնելով, ու, չորցած տերեւներու պէս ցրուելով չորս կողմն աշխարհի:

Յանկարծ փոշիի ամպը կը դադրի յառաջանալէ. Ժիւրը կը մեղմանայ, եւ ամբողջ թրքական բանակը կանգ կ'առնէ, իր օրինաւոր մէկ ժամուան հանդիսը վաշխելու, հինգ ժամ քաշելէ ետք: Հրաման մը կ'արձակեմ եւ աղաքը տնտիջապէս կ'ելլեն իրենց տեղերէն ու կ'անցնին իրենց դիրքերուն առջեւ: Հինգական հողի պիտի ծառայեն թնդանոթներուն, ի պահանջել հարկին:

Կէս ժամ հողի անցած է, երբ խումբ մը ձիաւորներ, գառաւելով բանակէն կ'ուղղուին Արծինի կողմերը: Անպայման հրամանատարութիւնը, կասկածելի դրամատ է այդ լուռ աւերակները եւ որոշած է դանոնք խուզարկել տալ:

Ակնդէտ կը սպասենք մեր դիրքերուն վրայ: Նոյն սիւնակի մէջ ըլլալու են մեր ընկերները: Զիաւոր խումբը կը մօտենայ, առանց զգուշութեամբ: Հիմա կարելի է ստուգել անոնց թիւը: Մօտ յիսուն հողի են: Հասած են առուակին եւ դերքը, երբ յանկարծ համադարկը կ'արձագանգէ մինչեւ հեռաւոր լեռները: Զիւրը խրխնջալով գետին կը տապալին: Ուրիշներ կը սկսին վազել զանազան ուղղութիւններով: Երկրորդ համադարկը չ'ուշանար: Հազիւ ասանակ մը ձիաւորներ կրնան փրկել իրենց մորթի: Մենք միջամտելու ժամանակ չենք ունեցած:

Կէս ժամ չանցած, զԺիւրը կը սկսի: Թրքական թնդանոթները կը ուրակոծեն Արծինի պարիսպները: Ռուսները նախ կ'իյնան զաշտերու մէջ, փոշիի շատըրուաններ բարձրամենով, յետոյ կամաց-կամաց անոնց հարուածները կ'ըլլան աւելի ճշգրիտ եւ կը զարնուին պատերուն: Սակայն մեր պապերուն շինած պարիսպները այնքան ամուր են, որ մետաղը չի յաջողիր դանոնք տապալելու: Այսպէսով

կը շահինք մէկ ժամ եւ այդ է մեր նպատակը: Եթէ կարենայինք մինչեւ իրեկուն դիմադրել, թուրք բանակը պիտի չկարենար զործադրել իր ծրագիրը եւ Արաքսը պիտի անցնէր իր նախատեսածն մէկ օր ետք: Այդպէսով, մերինները ժամանակ պիտի ունենային իրենց ճակատները կազմելու առանց հապճեպի:

Մէկ ժամուան ուրակոծութիւնը բաւական համարելով, թուրք հետեւագործը կ'անցնի յարձակողականի: Առաջին ալիքը կը հնձուի, մեր քաջերու անվերջ դիմադրութեան առջեւ: Մենք մեր բարձունքէն կը դիտենք այս բոլորը, պատրաստ՝ միջամտելու յարմարագոյն վայր-կեանին:

Այդ վայրկեանը կը հասնի, երբ երկու բարդ ալիքը, հակառակ իր կորուստներուն, կը յաջողի դիրք բռնել պարիսպներէն ոչ շատ հեռու, մինչ երկրորդ ալիք մըն ալ, առիթէն օգտուելով, կը ջանայ աւերակներուն միւս կողմը անցնիլ եւ մեր ընկերները առնել երկու կրակի մէջ: Անոնց խիտ շարքերը հիմա կը գրտնւին մեր բարձունքին եւ Արծինի միջեւ:

— Տղա՛ք, — կ'ըսեմ, — պատրաստ տեցէ՛ք մեր գէնքերը եւ պատրաստուեցէ՛ք կրակելու:

Արծինը պաշտպանողները, հիմա երկու խումբի բաժնուած, կը ջանան կասեցնել իրենց դէմ շղթայադերձուած այս վտանգաւոր գրոհը: Արդէն երրորդ ալիք մը ճամբայ ելած է, առաջին ալիքին դիրքերը ամրացնելու:

Այն ատեն կ'անցնիմ ժայռի մը ետեւ, ու՝

— Անխնայ կրա՛կ, — կը պոռամ, — մեր երկու թնդանոթները կը սկսին բռնաբեր արձակել գէպի թշնամին: Ռուսները կ'իյնան հոս ու հոն, երբեմն շատ հեռու իրենց նպատակէն: Բայց անոնց հողե-բանական ազդեցութիւնը զօրաւոր կ'ըլլայ: Թշնամին անակնկալի եկած՝ դամւած կը մնայ իր դիրքերուն: Կը կրակենք անխնայ: Գիտենք, թէ վերջ ի վերջոյ թշնամին տէր պիտի դառնայ կա-

ցութեան, բայց ինչպէս ըսի, մեր նպատակը՝ ժամանակ շահիլ է եւ սպաննել որքան թուրք գիտնոր, որ կրնանք:

Մեր եւ Արծինի միջեւ գտնուող ալիքը կը բաղկանայ մօտ հինգ հարիւր զինուորէ: Ասոնց մէկ մասը, յանկարծ ոտքի կ'ելլէ ու կը սկսի յառաջանալ դէպի մեր բարձունքը: Թնդանօթները կը շարունակեն շփոթ ստեղծել անոնց շարքերուն մէջ, բայց դուշակելով մեր թիւը, կրկին կ'ողուորին: Մեր վերէն կարելի է զանազանել անոնց իւրաքանչիւրին գիմադիծը: Մեր հարուածները դարձած են մահացու: Մանաւանդ, որ մեր զնդադները կ'աւելն բարձունքին ստորոտը եւ չեն ձգեր, որ առաջին հասնողները անցնին որոշ գիծէ մը անդին: Բայց, ետեւէն եկող շարքերը չեն զանադապցնէր իրենց վազքը եւ դիակներուն վրայէն անցնելով կը սկսին մազլիլ դէպի մեր գիւղերը տանող զառիվերը: Ուրիշ խումբ մը շեղած է դէպի աջ, մեզ պաշարելու համար մեր թիկունքէն: Տասը հոգի կը զրկեմ այդ կողմը: Հետեւէն կը նմարեմ չորրորդ ալիք մը, որ կ'ուղղւի մեր կողմը:

Արծին կը շարունակէ դիմադրել: Մենք ալ ցարդ ոչ մէկ վնաս կրած ենք, շնորհիւ մեր բարձր դիրքին:

Արեւը անցնելով գետիցէն, սկսած է իր վայրէջքը: Կը կռուինք չորս ժամ է ի վեր ու պէտք է կռուինք չորս ժամ ալ, օր մը շահելու համար ճակատագրի հաշուետուարէն:

Ժայռերէն եւ մացառներէն օգտուելով, թուրքերը հասած են բարձունքի կիսուն: Երկրորդ խումբը սկսած է մեր վրայ կրակել խուրդ ժայռի ետեւէն: Մեր թնդանօթները այլեւ ոչ մէկ օգտակարութիւն ունին մեր գիւղերը պաշտպանելու համար: Տղաքը կը հասկնան այդ ու անմիջապէս մէկկական հրացան առնելով՝ անդ կը դրաւեն իրենց ընկերներուն կողքին:

Ձուպէլ՝ քայլ մը չի հեռանար ինձմէ: Կ'ոստոտանք դիրքէ դիրք, ժայռէ ժայռ եւ մեր հարուածները ընդհանրապէս կը հասնին իրենց նպատակին: Բայց

Թշնամիին փամփուռները կը դառնան անելի ճշգրիտ: Երկու ֆետայիներ, որոնք կը փորձէին դիւր փոխել, զնգաւահար կ'ըլլան: Երրորդ մը կ'իյնայ ճիւղի մ քով: Կը կրակենք անխնայ, կը կրակենք մեքենայ դարձած օրոմաթներու պէս: Եւ արեւը կը շարունակէ իր վարքէջը:

Արծին կը շարունակէ դիմադրել, բայց Թշնամին հասած է արդէն պարիսպի դուռներուն: Պէտք չէ ընկրկիլ: Գրեթէ շահած ենք ճակատամարտը, այն իմաստով, որ Թշնամին այլեւ ժամանակ պիտի չունենայ շարունակելու իր յառաջխաղացքը:

Յանկարծ վարէն կը բարձրանայ միահամուռ ազադակ մը: Արծինի հերոսները դադրած են կրակելէ: Ընկերներս մէկիկ-մէկիկ կ'իյնան շուրջ: Արեւը վերջացնելու վրայ է իր շրջանը:

Մութը կոխած է արդէն: Փամփուռներ կը շարունակեն սուլել մեր շուրջը: Հազիւ հինգ հոգի մնացած ենք սողի: Յանկարծ սուր ցաւ մը կը զգամ ուսիս ու կ'իյնամ դետին: Վերջին ուժերս հաւաքելով՝ կը սողամ ու կը հասնիմ բարձունքին եզերքը: Թշնամին գրաւած է մեր գիւղերը:

Վերջին ճիգով մը, կը դառնամ կրոնակիւս վրայ ու կը թաւալիմ զառիթափէն վար...

Ուսիս վէրքը շատ ծանր չէ, բայց սրունքս ալ կը ցաւի, ճիւղ ծունկիւս վերը: Հագուստներս ծանրացած են արիւնով: Անոնց ծանր խոնաւութիւնը զիս հողին կը փակցնէ: Կը ծփամ ժամանակի ալիքներուն վրայ: Կը փորձեմ ոտքի կանգնել, բայց հողը ինձի կառչած է սիրահարի մը պէս: Եւ կ'օշմարնեմ լեցուն ծանր քուն մը կ'ընկուղէ դէս:

Կը զգամ վերջապէս լուսարացին ճերմակ փայլաշանքը: Կը բռնամ աչքերս: Ո՛ր եմ արդեօք: Ժիւղ մօտս բարձունք մը կայ, իսկ շուրջս կը տարածուի անսահման դաշտավայրը: Տարօրինակ լուսութիւն մը կը տիրէ երկինքի եւ երկրի վրայ: Արեւը կը բարձրանայ գէպի գետից: Երբեք չեմ տեսած այսքան կարմիր

արեւ մը։ Ան կ'արեւնի կարծես այն բոլոր արեւնով, որ թափած է մարդոց վէրքերէն։ Ամէն ինչ քարայած է շուրջն։ Միայն արեւն է, որ կ'ապրի ու կը տառապի։ Կը տառապի մարդոց թշուառութիւններուն, բրաութիւններուն ու անարդարութիւններուն պատճառաւ։ Կը թրթռայ բիրեղէ հսկայ գունդի մը պէս, որ յանկարծ պիտի ճաթի ու փռւի շիւղայ։

Անծանօթ հսկայ ձեռք մը մուրճի հարուած մը կու տայ անոր կարմիր սկաւառակին։ Թրթռացումները կը թափանան... եւ հրացաններ կ'որոտան։ Հոն, գէպի Արեւելք, Արաքսի ափերէն անդին, տասնեակ հազարաւոր հրացաններ օդը կը թնկացնեն։

Մայիսի զեղեցիկագոյն օրերէն մէկն է։

Եւ անսահման դաշտալայրը, որ կը տարածուի շուրջն, ծածկուած է գիւղաներով, հարիւրաւոր դիակներով։ Հոն Արդինի աւերակներուն քով, հոս մեր բարձունքին ստորոտը, անշարժ մարմիններ կը փաստեն մեր դիմադրութեան անհղաթիւնը։ Միակ վերապրողը ես եմ։

Կը զննեմ գիւղները, կը մողլցիմ մինչեւ բարձունքին դադաթը, ուր ընկերներս ինկան մէկիկ-մէկիկ, բայց Ձապէլ չկայ։ Ահա՛ այն ժայռը, ուր կողք կողքի, զնդակ կը պարպէինք թշնամիին կողմը։ Ահա արեւան հետքեր։ Իմ եւ Ձապէլին արեւան հետքերն են ասոնք։ Կը հետեւիմ անոնց։

Միայնակ ծառի մը շուքին՝ Ձապէլ կը ննջէ։ Կը կանչեմ անունը։ Պատասխան չի տար։ Նայուածքը ոչնչացած է զոց կողմերուն ետեւը։ Եւ ձայնը, որը թրու-շուռի մը պէտ, բանտարկուած է իր դոց շրթունքներուն տակ, այդ ձայնը, որուն արձագանգները զիս կ'օրօրէին, երբ դըլուխս հանգչեցուցած իմ քարէ բարձիս վրայ, դինք կը վերիշէի, փախչելու համար Մահուան կամուրջին ջամբարէն։

— Ձապէլ։

Թանկարծ կը զգամ, որ ինծի կը նայի։ Կը ջանայ թռչնած ժպիտ մը նուիրել

ինծի։ Վերաւոր եղնիկ մըն է, որ ինկած է իմ ճամբուս վրայ։

— Ո՛չ, պիտի չմեռնիս, Ձապէլ։ Տակաւին բուսական ուժ ունիմ մահը քեզմէ հեռացնելու համար։

Անգամ մըն ալ իմ կողմս կը յառէ իր ժշուշապատ նայուածքը եւ գլուխը կը դարձնէ միւս կողմը։ Կը նայիմ շուրջն։ Ձկայ կաթիլ մը ջուր, որպէսզի լուսմ իր գէժքը եւ զինք ուշքի բերեմ։ Պէտք է աս մէկն գնով փրկեմ իմ սրտիս հատորը։ Վէրքերուց ցաւը չեմ զգար այլեւս։ Զորացած արիւնը հաղուստներս վերածած է կաշիի։

Ձապէլին մարմինը կ'առնեմ բազուկներուս մէջ եւ կը քալեմ դէպի Արդինի զետակը։ Երկու հրացաններ անցուցած եմ ուսիս։

Դիակներ ամէն կողմ։

Գետակին եզերքը կը հանգչեցնեմ Ձապէլը, ու, ափերուս մէջ ջուր առնելով, կը սրովեմ անոր երեսը։ Բայց Ձապէլ կը շարունակէ կողմերը զոց պահել։ Կը մտնեմ աւերակներէն ներս, միշտ թեւերուս մէջ չալկած թանկագին մարմինը եւ զայն կը զետեղեմ փլած եկեղեցիին խորանին առջեւ։ Միշտ անշարժ կը մընայ։

Ձապէլ չի կրնար խօսիլ, չի կրնար լսել այլեւս։ Ձապէլ մեռած է։ Դիակ մըն էր, որ կը չալկէի, դիակ մըն էր, որուն կը յուսայի յարութիւն տալ։ Ձապէլին համար երազած էի վարդերով զարդարւած մահճակալ մը եւ ո՛չ այս հին սալաքարերուն յուսահատեցնող կարծրութիւնը։ Այս էր իմ վերապտած ու շուտ կորսնցուցած սիրոյս դիակը։

Սրահներէն մէկուն անկիւնը, ճըզւած են մեկնողներուն ինչքերը։ Հոն կը գտնեմ սաւան մը ու կը ծածկեմ սիրուհիս մարմինը։

Հալած մը պէս, որ կը հանգչի պահ մը, եկեղեցի մեկնելէ առաջ, Ձապէլ կը քնանայ փաթթուած աղտոտ պատանքի մը ծալքերուն մէջ։ Կը պզտիկնամ այս ոչնչութեան առջեւ, կարծես ես ըլլայի զայն սպաննողը, ես՝ խնճոյքներէն յա-

ւխանապէս վտարուածը, եո՛ւ ուրախութեան խորթ դաւադիր:

Արծիւնի դերեղմանուտունը կը գլուխը չկտրէր իր սեղանէն: Ան գերեզմանի մը գերեզմանն է: Դարերէ ի վեր, հոն մեռել չեն թաղեր: Տապանաքարերը փրած են մէկ կողմ, սալաքարերը ծածկուած են թիղ մը հողով: Կը փնտռեմ կոյս անկիւն մը, քիչ մը հող, որ ոչ ոքի մարմինն փոշին ըլլայ: Մեռելները, որոնց վրայէն կը քալեմ, կը բողբոջեն, կը տրտնջան: Պէտք չէ խանդարել իրենց հանգիստը:

Արեւը՝ դայրացած, ինծի կը նայի երկնակամարէ՛ր գազաթէն: Մըռնքներս բացած, ոտքերով տմուք կառնած կարծր քողին, կը սկսեմ փորել իմ սիրտիս գերեզմանը: Իրիչը ժանդոտած է, բա՛ւր կոտորած, բայց ես ստրկած եմ զործածել բա՛ւ ու ըրիչ: Քանի մը մատ փորելէ ետք, հողին հոտը կը խուժէ ունդերէս ներս: Այնքան աղօթքներ, այնքան խոնկ, այնքան արցունք թաղուած են ոտքերուն տակ: Կը ջգազդդուեմ եւ բըրիչը կը խրեմ հողին մէջ, աւելի գայլթով: Կը փորեմ, կը փորեմ անդադար՝ երկրագունտը պարպելու համար իր պարունակութենէն եւ զայն վերածելու համար նոր դամբարանի մը, ուր հանգչի այս փոխ ու թանկագին մարմինը:

— Կը բաւէ՛, կը բաւէ՛, — կը պոռայ ձայն մը, — որ ոչ ոքի ձայնն է:

Բայց ինծի անկարելի է կանգ առնել: Ո՛չ ոք իրաւունք ունի ինծի հրաման տալու: Բայց որքան խորանայ փոսը, այնքան աւելի դժուար կը դառնայ ձայնը:

— Կը բաւէ՛, կանգ ա՛ռ, եթէ ոչ այլեւս գայն չես կրնար վերադառնալ:

Կը ճանչնամ իմ իսկ ձայնս: Կանգ կ'առնեմ: Կը նայիմ վերը: Ո՛չ արեւ կայ երկինքին մէջ, ո՛չ ալ աստղ: Ոչինչ կայ, բացի մահէն, որ կը շրջապատէ երկրագունտը իր նիւթաւ ձեռքերով:

Դուրս կ'ելլեմ փոսէն: Զապէլին մարմինը կը բերեմ մինչեւ ծայրը եւ կը ջանամ զայն զգուշութեամբ յատակը գե-

տեղել, եւ յանկարծ մարմինը կը սահէ ձեռքերէս, կարծես ունայնութեան սեւ երախը կ'ուզէ զայն կլլել: Հիմա պէտք է գոցել կիկլոպեան այս լարագուշակ աչքը, ուր ինկած է երազիս վերջին կաթիլը:

Պառկած խաչքարերէն մէկը կը տընկեմ հողակայտին վրայ ու կը նայիմ շուրջս: Ի՞նչպէս արդարութեան հրեշտակը պիտի կարենայ զանազանել մեղաւորները անմեղներէն:

Ձայնե՛ր կը շնչեն, կը դառնան ազդակ:

— Դո՛ւն, հող ես. մենք՝ հո՛ղ դարձած ենք:

Հոս ցանուած են հին ուրախութիւններ եւ հին ցաւեր: Քարերն ալ ունին իրենց վիշտերը, անոնք մեր սուգերուն միակ վկաններն են:

••

Ու կը քալեմ դէպի Արեւելքը, հոն՝ ուր անդի պիտի ունենայ վճռական ճակատամարտը: Կը քալեմ մինչեւ իրեկուն: Թրքական բանակին մէկ մասը անցած է արդէն Արաքս գետը, ստիպելով, որ մեր ուժերը քաշուին աւելի նպաստաւոր դիրքերու վրայ: Կը թաքնուեմ յարմար տեղ մը, մինչեւ որ գիշերը բաւական յառաջանայ: Ու, երբ խաւարը կը թանձրացնէ իր վարագոյրը, կը մօտենամ ափին ու կ'իջնեմ պտղ ջուրին մէջ: Հոսանքը բաւական զօրաւոր է, կը լողամ անկէ օգտուելով, առանց ուժերս ուսառելու: Պահ մը կը հանգչիմ միւս ափին վրայ, յետոյ կը շարունակեմ ճամբաս: Այգաբացին, դիմացս կը նշմարեմ բլուր մը: Այս գանգուածը կը ծածկէ տմրոզը հորիզոնս: Պէտք է մաղցիմ տնոր դազաթը, դիտելու համար շուրջս: Բլուրին բարձրութիւնը հազիւ երկու հարիւր մետր է: Վերը կը նշմարեմ փառապանք: Կորսնցուցած արիւնս պիտ բաւական տրամադրուած է: Երբ կը հասնեմ գագաթը, այնքան յոգնած եմ, որ կ'իջնամ, կը նստիմ քարի մը վրայ: Բլուրին մէկ ծայրը կայ հինաւուրց մատուռ մը, ու-

158-2000

րուն կողմն ի վեր կը սլանայ քարալէն զանգակատունը: Ծուրջը ընդարձակ բակ մը, ցած պատով մը պաշտպանուած: Բակին մէջ կան հողակոյտեր եւ տեղ-տեղ կոտորուած խաչեր: Կը սկսիմ տողանցել խաչերուն առջեւէն, անոնց վրայ ունուններ փնտռելով: Բայց անուն չկայ անոնց վրայ: Հողակոյտերը, շարք մը կը կազմեն շրջապատի երկայնքին: Հոն ալ ո՛չ անուն կայ եւ ո՛չ՝ թուական:

Կը հասնիմ մինչեւ շարքին ծայրը, ու կանգ կ'առնեմ քարացած: Ոտքերուս տակ կը բացուի խորունկ փոս մը, նոր փորուած: Հողին հոտը կը գինովցնէ զիս: Աչք մը կը նետեմ. տեւ երախին մէջ ու կը նահանջեմ սարսափած: Փոսը պարտալ չէ: Հոն կայ զիակ մը, որ ինծի կը սպասէ յաւիտենականութենէ մը ի վեր: Իմ իսկ զիակս է: Կը նահանջեմ, մինչեւ մատուռին պատը ու կը փութիմ գետին: Կ'ուզեմ տեսնել մարդկային դէմք մը, որ ժպտի ինծի, կ'ուզեմ որ Զապէլիս ձեռքը բռնէ իմ դողացող ձեռքս ու զիս հեռացնէ մահուան մօտը փախերէն:

Սակայն խուլ աղաղակ մը կը բարձրանայ հեռունէրէն: Ոտքի կը կանգնիմ ու կը դիտեմ շուրջս:

Հեռուն՝ հորիզոնը պատուած է լեռնաշղթայով մը: Աւելի ասդին կան աւելի ցած գագաթներ: Իսկ ինձմէ տաննակ մը մղոն անդին, կը նշմարեմ տուններ: Երկաթուղիի զոյգ գիծեր կ'անցնին կողմիս: Ծածկուած խոշոր շէնքի մը առջեւէն: Կայարան մը ըլլալու է՝ աննշան: Եւ այդ կայարանին մօտերը, խումբեր դիրք բռնած են: Զախ կողմէն, Արաքսի փերէն բազմութիւն մը կը քայլէ դէպի այդ կայարանը:

Կը հասկնամ հիմա: Ծակատամարտը տեղի պիտի ունենայ հոս, այս աննշան կայարանին առջեւ, որուն անունը չեմ գիտեր: Եւ եթէ յաջողութեամբ պսակւին մեր ճիւղերը եւ թափած արիւնը, անոր անունը պողպատով պիտի գրուի մեր պատմութեան էջերուն վրայ:

Երկու քանակներուն միջեւ տարածւող միջոցը երթալով կը պզտիկնայ, եւ յանկարծ հայկական բանակի զանազան

դիրքերէն կը տեսնուին բոցեր, որոնք շուտով կը փոխուին որոտումի: Թնդանքները սկսած են խօսիլ: Թուրքերը անմիջապէս կ'արագացնեն իրենց ընթացքը ու կը քսին առաջին գիծերուն: Հագարաւոր հրացաններ իրարու կը հայհոյեն: Պայթիւններուն աղմուկը եւ վառօդին հոտը կը տարածուի Արաքսի փերէն մինչեւ Երեւանի դուռները: Մինչ անդին, վեհափառ Մասիսը, կ'ողեւորէ իր զաւակներուն ետանդը եւ կը հրահրէ անոնց երակներուն արիւնը:

Օղբ կը թնդայ եւ գետինը կը շարժի, ոտքի հանելով մեռելներն իսկ: Եւ բոլոր ասպետները՝ սաղաւարտը դուրսնելու եւ զրահը կուրծքերին, կը վազեն դարբնու ընդերքէն՝ օգնելու համար իրենց հերոս եղբայրներուն: Մարդիկ կ'իյնան, բայց անոնց տեղը նորեւ կուգան ու կը խոյանան դէպի թշնամին: Կուգան հորիզոնի չորս ծագերէն, դուրս կ'ելլեն քարայրներէն ու պահուստած են, աւազներու տակէն, ուր թողուած են իրեն անշարժ դիակներ ու բոլորը միտքին կ'աղաղակեն. «Վրէ՛ժ, վրէ՛ժ»: Կուգան կիներ եւ աչեր, երեխաներ ու ծերեր: Կայանաւորներու բազմութիւն մըն է, որոնք իրենց շղթաները կ'որոտած՝ կը վազեն հայրենիքի օգնութեան:

Եւ աստղերը կը խայտան: Կ'ուրախանան, կը փայլին աւելի, որովհետեւ արդարութիւն պիտի ըլլայ: Ու արեւը այսպէս կը խօսի.

— Ո՛չ մէկ ուժ կրնայ ոչնչացնել ժողովուրդ մը, որ չ'ուզեր մեռնիլ: Կը մեռնին այն ժողովուրդները, որոնք զոհողութիւններ եւ տառապանքներ չեն դիմած յաւիտենականութեան դրամատուն մէջ:

Թուրքերը կը յարձակին ու կը նահանջեն, այն առնելով իրենց թնդանքները կը գոռան աւելի կատաղութեամբ, բայց կայարանի շէնքին վրայ ծփացող դրօշակը կը շարունակէ ծածանիլ հպարտ ու անվեհեր: Անոր երեք գոյները այնքան աչքառու են, որ կարելի է զանոնք մէկ-կիկ-մէկիկ զանազանել իմ եղած տեղէս: Եւ ուրիշ հարիւրաւոր դրօշակներ, նոյն

գոյնեքով կը ծածանին բարձունքներու վրայ, ամբողջ ճակատի երկայնքին:

Հիմա բազմադաշտը ամբողջ ծածկը-ւած է վառուղի մուխով եւ պայթիւններու որոտումով: Երկինք ու երկիր կը սարսուռն փոթորիկին ուժգնութենէն:

Ես ի՞նչ կ'ընեմ հոս: Պէտք է միանամ մերիններուն: Կը փորձեմ քայել, բայց ստեքս կապարի վերածուած են: Ի՞նչպէս յայտնեմ ուրախութիւնս: Զանդակատան երկայնքին կախուած է շուան մը: Կը սողամ մինչեւ հոն: Կը բռնեմ շուանին ծայրը ու կը քաշեմ: Զանգը կը սկսի զօղանջի: Զուանի փեր բարձրանալով՝ դիտաքի կը հանէ: Կրկին կը քաշեմ ու զանգակը կը զնդայ, կը դռռայ,

եւ իր մետաղէ երգը կը հասնի մինչեւ մեր դինուորներու տկանջին: Օղբ կը ցնծայ, այսօր Զատիկ է հայ ժողովուրդին համար:

Եւ արարատեան դաշտին վրայ, Հայ-կի որդիները կը լուծեն իրենց դարուոր վրէժը, մինչ Մայիսի սակեզոյն արեւը կ'իջի՛նէ կապոյտ երկինքին մէջ ու կը շողացնէ առատօրէն հոսող յաղթանակներու կարմիր արիւնը: Եւ այդ երեք գոյները ցոլացնող դրօշակները կը շարունակեն ծածանիլ մեր դիրքերուն վրայ:

Կը ձգեմ շուանը, եւ հրացանս առնելով կը սուրամ բլուրն ի վար, արիւնն խառնելու համար մեր հերոսներուն կարմիր արեան:

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Վ Ե Ր Զ

Նո՛ր Առաւօտ

Արեւները աչքերուս մէջ լուռ արթնցան:

Աչքերուս մէջ՝ արեւները բոլոր մատենան:

Ակնալիները աչքերուդ մէջ փռշթաթաւ,
դեռ երէկուան յաշերն այդ հիմ,
աչքերուդ լուրք ութսուններուն մէջ անհազորդ
ապակիէ սառն քիթերով կ'երագէին...
բայց աչքերդ արթուն էին:

Ես վառեցի սառն աչքերդ
իմ աչքերուս արեւային տարափներով
իմ հոգիիս չթարգմանաւոր խոստումներով.
նայաւածքներս, որ կը ծնին արեւուն հետ
խմբագրականն են իդոներուս

սրտիս

չիզիս

եւ ուղեզիս

խօլ յայտերուն,

նոր տենդերուն:

Ես որսորդ եմ...

նայաւածքներուդ մէջ պարմանի հուր կայ, ծուխ կայ

ես խենթ տղայ արեւելիցի

հուր աչքերուդ բռնկումով,

ծուխ աչքերուդ ճաթստիւնով՝

էութիւնս ճաթագրեցի

լերկ հոգիիս սէրվիծումը շարադրեցի

աչքերուդ մէջ.

աչքերուդ գէջ

կեանք կար գինով

շունչ մը բարի:

Բառերը միշտ լոյծ կը մաշին

նոր օրերու լաւանքը կ'աւտեն հիմը

եւ անցեալի բառերն թալար

վառ կամ ազուր

կը մարսուին,

կ'ըլլան փռշի

անպէտք իրեր

միայն անցեալ

ու կը սուգուն մեր սրտերու ճահիճին մէջ:

Արեւ օրով
ա՛յս լոյսին տակ
երգերս համակ
տե՛ս, արեգակ,
լոյս կ'ընծիւդ են
ու կը ծնին օրերս փշրանք
սե՛ր կը պոռթկան,
երբ նոր բառերը լուացուն
գիշեր տեսած արեւուն պէս :

Նոր բառերը քննի հաց են
— անուշահամ — :

Այս առաւօտ
արեւները խմբուեցան
աչքերու մէջ
աչքերու մէջ
երան զանգուած
շարք — շարք բանակ
բարձրանալով,

ու արթնցան
լոյսով արդար... :
Համբուրեցան եինն ու նոր
աչքերու մէջ
աչքերու մէջ
Եւ անցեալի յիշատակն իսկ
այս առաւօտ,
միշտ նոր ծնող մանկան կանչ է.
դուն պրիսմակ
նո՛ր արեւ ես.
բան ես դալար
այս առաւօտ,
դեռ չծնող օրերու իսկ ռոտային մէջ
կոյս արեւ ես
այս առաւօտ :

Դուն նո՛ր շունչ ես
երէկ
այսօր
եւ դեռ վաղը՝
նոր արեւ ես
հին արեւ ես
կեանք ես անվերջ
սէր ես յաւերժ :

Միշտ արեւ ես
Բի՛ւր առաւօտ
Նո՛ր առաւօտ... :

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

Վ Ա Ր Ք

ԿՈՄԻՏԱՍ ԿՈՒՏԻՆԱՑԻԻ

Ծ.

— Բարի ե՛րթ... Կոմիտաս։ Վերադարձ բարի՛...:

Կոմիտաս Վարդապետ Պերլին կը ճամբուէր հրաժշտութեան շաստ-
ւածներէն լոյս բերելու:

Ամբողջ տասնըհինգ տարի — զիւերօթիկ տան, սարկաւադ, արեղայ եւ
վարդապետ սանդղամատերու վրայ կոխելով: — Կոմիտաս դիտեց կեանքը,
և ր փորձութիւններով յղի էր: Տքնալան, պրկուած ժամադրութիւն եղաւ տշ-
խատանքը: Աչքացաւ, տենդ, մաշում անպակաս եղան իրմէ: Գերեց մայրե-
նի լեզուն, ոճը. մոռցաւ անձնականը, որպէսզի գտնէր Հայոց խաղերու բա-
նալին: Հրաշափառով մուտք գործեց մշակոյթի, խաղաղարդ մատենաներու
դանձարանը. հոնկէ՛ առաւ իմաստութիւն, ճշնութիւն...: Երբ աչքը բա-
ցաւ, որ քիչիկ մը հանգչէր, գաղար տար մաշումին, եկաւ Պերլին մեկնելու
ժամը, որմէ խուսափելը խոստմնադրութիւն պիտի նշանակէր:

Ի՞նչ ունէր տանելիք հետը. կրօնաւորի պայուսակ մը եւ իր անձը:

Անձը հրեց պանդոկին խուցերէն մէկուն դուռնէն ներս, դրաւ պայու-
սակը մահիճին վրայ. դոցեց դուռը բանալիով: Պերլին կը գտնուէր. դեր-
ման լեզուին անծանօթ, մինակ. արեւելեցի օտարական: Քաղաքին պողոտա-
ները պնտուած էին մայթաղիններով. դահլիճները շքեղազարդ տիկիներով:
Սալայատակը կը դոփէին զինուորական մոյկեր, դէ՛, բարի եղիւր եւ մօր
երազսկան աշխարհը սեւ սքեմը մինչեւ լեռին հասած, շփոթ քայլերով,
ամչկոտ նայուածքով եւ խուչ ու համրի ապշութեամբ:

Յրէտէրիք Վիւհիմ արքունի համալսարանը փիլիսոփայութեան թեկ-
նածու կ'ընդունէր Կոմիտաս Կուտինացին, «արեւելքէն նոր ժամանած» ար-
ձանագրութեամբ:

Նափուէր Պոնափարթը ընչեւ տուած էր անկարելի բառը ֆրանսական

բառաբանէն: Հայոց Կոմիտասը, գերմանական արքայական համալսարանի ուսանող՝ կը փաստէր այդ բառին չդոյութիւնը, երբ ուրդէն մատնեցուն տակ դաշնամուրի ստեղնալարը մէկիկ-մէկիկ զօվըը կ'ընէր Ծօփէնին, Պախին, Պեթճօվէնին եւ ուրիշ հռչակեալներու: Երաժշտութեան ուսուցիչ-փրոֆեսօրը կը դսփէր Կոմիտասին ուսը.

— Լա՛ւ էր. յաջո՛ղ, Կոմիտաս, շարունակէ...

Երաժշտանոցի թեկնածու օրիորդ մը, որ խարտեալ ծամեր ունէր եւ աչքերը կապոյտ էին, կը սկսէր դարպասել արեւելեցի պարոնը: Իր երեւակայութեան մէջ սեւ սքեմը կ'ընդունէր արեւելեցի տարազ, ազգային ֆուլճուր: Կապոյտ, երազկոտ նայուածքը սիրազեղ ծիածանի գոյներ կ'արձակէր: Կոմիտաս զայն կը նկատէր բնական հմայուածութիւն ճարտար մատներու: Կը սխալէր: Պարտեալ օրիորդը պիտէր արտայայտուիլ.

— Օ՛, պարոն Փալլիքաս. ձեր մատները հրաշալի են...

Կոմիտաս անմեղ ամօթխածութեամբ կը ցուցնէր ձեռքին տասը մատները, տասը համբանք ցուցնող մանուկի պէս.

— Այո՛. մատներ նուազ են ու դաշնամուր...:

— Օ՛, պարոն Քոմիթաս, ձեր բառերը հմայիչ են...

— Այո՛. ես հայերէն կը խօսիմ:

— Հրապարէ՛ւ... Հա՛յը...

Կոմիտաս չէր ըմբռնէր օրիորդ գերմանուհիին միտքը, բայց կը զգար անոր Թափանցող նայուածքին փորձութիւնը: Կը հաւաքէր զբիշ ու տեսէր եւ տեւ սքեմին փէշին մէջ պահած իր նօթերը, կը փութար դահլիճէն դուրս նետուիլ, երթալ բանտարկուելու խուցին մէջ: Աղջիկը չէր կրնար հետապնդել զինք. անոր դասը աւելի ուշ կը սկսէր: Կոմիտաս ազատ շունչ կ'առնէր մայր թիւն վրայ: Հոս ալ սակայն չէր կրնար վայրկեան մը կանգ առնել. պերճադիճ մը կը մօտենար իրեն ու կ'ըսէր.

— Պարոն սիկարէթ ունի՞...

— Ո՛չ. չեմ ծխեր:

Կիներ կը տննար քովը. քուելու պէս, երազկոտ թարթիւններ շարժ կու տար: Ու իր պայուստէն սիկարէթին տուփը հանած՝ կը հրամցնէր Կոմիտասին.

— Պարոն, սիկարէթ մը առէք:

— Ներողութիւն, տիկին. չեմ ծխեր:

— Տեղ մը տար զիս, պարոն. պէտք ունիմ դուրդուրանքի...

— Ետիս պնա՛, ստառնա՛, — կը բարկանար Հայերէն ու կը վաղէր զրեթէ մայիլն ի վար:

Քոմիլէն անցնողները կը նայէին Կոմիտասի արագ վազքին.

— Պարոնը դուցէ՛ ուշացած է տրուած ժամադրութեան:

Կոմիտաս խուլ կը ձեւացնէր ինքզինք, բայց կը ստիպուէր դանդաղեցնել քայլերը: Պերճադիճը մնացեր էր ետին: Իրեն հետապնդող չկար...

Սիկարը եղստայի ծամը եւ յոգնատանջ գնացք ունեցան օրերը Կոմիտաս Կուտիւնացիին համար: Ի՛, հայրենական դաշտ ու շու, փողոտ ճամբաներ, լեռնակող եւ կիրճ էին հոն, էջմիածինի շուրջ բոլորը: Պերլիւի փողոցները սալարկուած էին, տունները բարձրաբերձ, կեանքը տենդոտ: Եղստայը ի՞նչ արագութիւն ունէր, որպէսզի արդարացնէր զոյութիւնը հեւքոտ ու կիրթ ճամբաներու վրայ:

Կոմիտաս պէտք ունէր զկամաց քէլք սէլնրօթ, որուն տուած իր դանդաղօրէն մտածող — միտքն ու հողին — տեսնէր, ուսումնասիրէր պերլիւն-

եան ոճը, զաշնամուրէն բարձրացող նոթերը վերածէր իմաստի։ Խորտեալ գերմանուհին՝ երաժշտանոցի գահլիճին մէջ եւ պերճադիճները մայթերու վրայ՝ կը կտրտէին զարտիմ քելիքը... Պանդուկի խցիկին մէջ ինքզինք բանտարկելն ալ ուրիշ պատմութիւն։ Քուն թէ արթուն՝ աչքերուն առջեւ կը ցցուէին հայրենական պատկերներ։ Կը յիշէր Գէորգ Վարդապետին հետ ըրած ճամբորդութեան մանրամասնութիւնները, լեռն Արարատն եւ կամուրջ չհանդուրժող Արաքսի արտասուքը։ Հեռու եւ մօտ ինկած յողնաքեկ, խեղճ ու ճշուած գիւղերու փաշին կը խեղդէր դինք քունին մէջ։ Կը ժպտէին տըխրամած աչքերը Գէորգ Վարդապետին, երբ կը յուշէր.

— «Է՛, աղբար Սողոմոն. այժմ որ մեր ճամբորդութիւնը կը հասնի ի լրում, անիկա քեզ բան ըսա՛ւ. ինչե՛ր տեսար, ինչե՛ր տպաւորուեցաւ պատանեկան յիշողութիւնդ։ Տեսար Մշոյ Առաքելոց վանքի ուխտագնացութեան պնդումն ժողովուրդը, անոր բերած մատուցուն — կարմրակատար աջուրն ու դաւը, ուն ու ուխտար։ Ձունեցածնին կը զոհէին հաւատքին համար... Ա՜ղեղեցինք մեր ճամբորդութիւնը, որպէսդի նետուէինք դէպի Մովսսարը, Մարաթուկի փէշերը տեսար, անոնց ներքեւ ծուարած գիւղեր կային, նախամարդու նիստ ու կացով գեղջուկներ... Աւերակ բերդեր ու կիսափուլ պատերուն քանդակներ կային, քարերու տակ նիւհող օձեր... Ձե՛ռ յիշեր քիւրտ հովիւները. անոնք մեր ջորին կ'ուզէին խել... Իսկ տղեկը ժայռի վըրայ նստած սրի՛նք կը փշէր... Աղբարներ շատ տեսար. անոնց առջեւ հարս ու աղջիկ, որ կուժով լուր եկած էին տանիլ սարը...»։

Կոմիտաս Վարդապետ կը թախանձէր քունին մէջ.

— «Բա՛ւ է փորփրէք միտքս յիշատակներով. ժամանակ չունիմ. հանգչիլ է պէտք. առաւտըր մօտ է. զրադումներս անչափ...»։

— «Քնացի՛ր, Սողոմոն, քունիդ մէջ լսէ միայն։ Բարձր թող կուտ ըլլայ, որ մեղի քուն չունենաս. յիշէ՛ մեր մեծ ճգնաւորները, որոնք երկնեցին գործեր, այժմ անկարելի...»։

Կոմիտաս կը շրջէր մէկ կողմէն միւսը. աչքերուն մէջ ականջ ցաւ կար. մաքին վրայ կախուած՝ գեղջկական հսկայ ահօլ մը. թր՛մը-թր՛մը-թր՛մը։ Գէորգ Վարդապետի գեղանկար պեխի եւ սեւ մօրուքի միջեւ չթրունքները սեւեռուած բարձրախօսի տպաւորութիւն կը գործէին Կոմիտասի կղզուած կողերու զիմայ։ Բարձրախօսը կը խօսէր.

— «Գիտե՛մ. չես կրնար քնանալ. կը խօսիմ, որ նինջը չոքէ մարմնիդ վրայ. կը խօսիմ երազիդ մէջ. մաշում եւ յոգնութիւն չես ունենար։ Կը շարունակեմ — ջորեպան քելրաթ առաւ ջորիները ետ դնաց. նստած էինք դաշտապուռկին, լերան ոտքին. նոր իջեր էինք. տաք էր. արե՛ւ. քրտինք. պապա՛կ... քիչ անդին պղպջալով, ինքն իրեն համար զրկաշափ փոս մը փորած էր լեռնատակ ջուրի սկը. կ'ապրէր ինքն իրեն համար. չկար շուրջը կանաչութիւն. կար երիզը տիգմին, որ կ'օղակէր զայն։ Փորձեցիր կուլ մը խմել. «գաղջ է», — ըսիր. քանի մը գորտեր ջուրէն պիւ-պիւ քեղի կը նայէին. «պղծուած է», — ըսիր։ Հետաքրքրութեամբ դիտեցիր ջուրը. ծարաւը կ'ալարէր սիրտը. տեսար, որ ճնիներ եւս բնակիչ էին անոր. «Սիրտս կը խառնէ», — ըսիր. պատանեկան ճակատը կնճիւ կապեց...»։

— «Հա՛, կը յիշեմ այդ բոլորը. բայց քնանալ կ'ուզեմ, մի՛ խանգարէք քունս»։

— «Քեզի համար քունը պերճանք է. լճացած ջուր է. դուն հոսող աղբի՛ւր եղիր...»։

— «Քո՛ւն, քո՛ւն... քուն կ'ուղեմ. վաղը դորձ ունիմ. զբաղումներս շատ են. խղճացէ՛ք, հեռացէ՛ք, չքացէ՛ք...»:

— «Ամօթ քեզի, Սողոմոն. թուրութիւնն է խօսողը մէջդ. ո՞վ դորձ չունի. զբաղում չունի. տե՛ս, քանի տարի է, որ կը թափառիմ ես — տարի-նե՛ր... տարիներով պահած եմ ջուռ պատանեկան պատկերդ քովս. կաղապարել ուզեցի քեզ. կ'ուզէի, որ համալսփ ըլլար ինքնութիւնդ շինած կաղապարիս»:

— «Լա՛ւ. ձեզեցէ՛ք վերյուշին յուշել տակն իսկ. մեղք էք դուք ալ. աշխարհ յոգնած. քնացէ՛ք, քնացէ՛ք հանգստացէ՛ք...»:

— «Ո՛չ. կը մնամ արթուն, որ հսկեմ վրայդ. դուն փոքրիկ մանչուկ մըն ես. քնացի՛ր, որ մեծնաս. քնացի՛ր, քնացի՛ր...»:

Սողոմոն անցեալը կը կղզիէր կոպիւրը ամուր. ներաշխարհին մէջ կը մնար սակայն պղտոր լոյս-մշուշ մը, չէս դիտել ինչ խորշէ թափանցող լուս-նառագայթով: Խիղճը կ'արթնար. կը փնտռէր շրջող ոգիներ, Հոն էր, ահա՛, խորշի պատին նկարուած քանդակ իբրեւ՝ Գէորգ Վարդապետ, կերոն մը ձեռքին:

Կոմիտաս կը հարցնէր Պերլինէն.

— «Բունը փայտա՛ւ. դեռ մութ է դուրսը. զայնքնիդ բարի՛... ամօթ չըլլայ հարցնելը, ո՛ւր հասաք. ի՞նչ եղաւ Սրբազանը...»:

— «Սրբազա՛ն-ը. հա՛. կը յիշեմ, տղայութեանդ զես Սրբազան կը կոչէիր. չչակեցի սխալդ. վերաւորել չէի ուզեր քեզ — Հայր Սուրբ էի. չէ՞...: Խորքին մէջ «Հայր Սուրբ»-ն ալ գեղեցիկ կը հնչէ. քիչ մը տարիքոտ կը բուրէ Հայրը-ը, սակայն երկուքը մէկ — վնաս չունի. ուրեմն՝ մնացի Հայր Սուրբ»:

— «Վեհափառը խօսք տուած չէ՞ր միթէ, փոխելու կոչումդ»:

Գէորգ Վարդապետ ծոնցաւ Կոմիտասի սնարին. փոփաց.

— «Գլուխ չեկաւ. աւրողներ եղան հաստափորներէն: «Ծուռ միտքեր ունի, աշխարհական ազգասիրութիւն» — բամբասեցին Վեհին մօտ: Վեհն ալ կանչեց, թէ՛ «Մնացի՛ր վարդապետ. ես կաթողիկոս եղած եմ, ինչ ապուր կերած, որ դուն հպիսկոպոսականը ուտես»...: Ըսաւ, «վարդապետը մօտ է վարժապետի, այսինքն՝ մշակոյթի, դորձի մարդ. հպիսկոպոսը եռական քնադդի ծոռութիւն ունի. եսամոլութիւն է»... եւ ուրիշ շատ ճիշդ բաներ»:

Կոմիտաս ափսոսանքի խայթ ունեցաւ. քմծիծաղով ըսաւ.

— «Հասկնալի է. ցկեանս վարդապետ պիտի մնամ ե՛ս ալ. Ժողովրդա-կան ասութիւն կայ, որ կ'ըսէ — «մահն ընկերովի՛» հարսանիք է. անմահութիւն... Տուէ՛ք ձեր ձեռքը...»:

Գէորգ Վարդապետ կոմիտասեան ներաշխարհին մէջ բռնեց Սողոմոնին մանրիկ թաթը, ճիշդ այնպէս, ինչպէս բռնած էր, երբ կ'իջնէին թեք լեռ-նակողէն դէպի Արածանին:

— «Քու մէջդ ալ կը տեսնեն «ծոռութիւն». ես զայն նշմարած եմ վաղուց, ուրախ եմ ատոր համար: Այսօր ծոռ միտք ունեցողներն են, որ պիտի շտկեն ծոռած գործերը ազգին... Այժմ, ցտեսութիւն, Կոմիտաս. քունդ թող ըլլայ հանգիստ, գործդ՝ բեզմնաւո՛ր. յիշէ գրկաշափ լճակի ափին խօսածներս...»:

Կոմիտաս թախծեց. կանչեց հեռացող վերյուշը.

— «Հեռուն, Արաքսի հովիտն էր. փոփոխական հունով. շուրջը չամբեր ու բարտիներ. այս ու այն ափին՝ Արաքսեան դաշտագետիներ: Շրջապատի լեռնային նստուածքը դարերու արդիւնք էր. մաշուելով հեռացած էին

Նուրէն ու չոր ու ցամաք մնացած: Աննանահերկը տեղ-տեղ սեւ կարկտան քաշած էր դորշագոյն դաշտերուն: Հնամաշ այդ հողին, բարտիները թեւատարած ամպի կապոցներ որսալ կը փորձէին: Գէորգ Վարդապետ ընկողմանած էր հողին, աչքերը յառած հեռուն, կ'ըսէր.

— «Կը հասնինք էջմիածին. դուն, Սողոմոն, դէմ պիտի դաս Մայր Արաքսին, որ փրփրազէզ, տեղ-տեղ սեղմուող ժայռափերէն խեղդուող, կը մոնչէ, բայց կ'անցնի կ'երթայ: Հի՛ն է Արաքսը: Փնարական, դիւցապներդաւան Արաքսը կամ ողբերգական Արաքս մերն է հզած միշտ. երբ դէմ դաս Արաքսին, քու աջիդ վեր կը սլանայ երկզվիտանի Արարատը, մշտնջենական ձիւն է կատարին: Վեր է նետուեր առանձին, ըմբոստ դէպի երկինք. առասպելական անուն է. ջրհեղեղը հոն բերած է Նոյեան տապանը. հոնկէ սկսած է երկրորդ ծնունդը մարդկութեան եւ կենդանական աշխարհին: Անոր համար կ'ըսենք մեր երկրին Պայր Հայրենիք»:

Գէորգ Վարդապետ կը նշմարէր բարտիները, որ թեւատարած ամպ կ'աղբերոէին ցամաք արաքսուն: Բարձրացաւ նստաւ. թեւը նետեց Սողոմոնի փորթիկ ուսերուն.

— «Դուն, Սողոմոն, փոքր սղայ ես. շատ բան չես ըմբռներ ըստծնեւրէս. երբ գիտակցութիւնդ արթննայ, կ'առնես Արարատը կը դնես Արաքսի ձախ կողմը. աջին՝ կը բարձրացնես Սուրբ էջմիածինը: Առանձին-առանձին երեքը մեծութիւններ են հայ ժողովուրդին համար. սակայն ամբողջական ուժ մը չեն ներկայացներ. ունեցեր ենք աշխարհակալ թագաւոր, քաջակորով ու թոյլ արքաներ. նախարար կամ իշխան չեն պահսած մեզի: Ունեցեր էնք սրբանուն կաթողիկոսներ, թուլամորթներ նաեւ. քաղաքներ մեծափարթամ... շատ բան չէ մնացեր սակայն, որովհետեւ անոնք տալ դիտցած են, բայց պահել չեն կրցած: Ուրե՛մն, ժողովուրդը մերժած է նման մեծութիւններ: Արարատը, Արաքսն ու էջմիածինը՝ ժայռ, ջուր, շինուածք են. կը պահէր ողին: Օր մը առթի կ'ունենաս երթալ Օշական ուխտի: Հոն դեւերման մը կայ. որո՛ւն որ հարցնես, կ'ըսէ անունը սուրբին, որ պաշտկած է համբոյրէ ու մոմի լոյսէ մաշած քարին տակ: Այդ Սուրբը Մաշտոցն է. Մետրոպ ձայնկապին, ծնեալ շինական...»:

Կոմիտաս երադին մէջ կտրեց վերյուշին դժած ուղին.

— «Կը յիշեմ. հարցուցի. ի՞նչ գործ տեսած է: Գէորգ Վարդապետ ըսաւ. Հայոց դէ՛րը...»:

Հող ա՛լ ջունը իջաւ Կոմիտասի կողերուն, կղպեց զանոնք մինչեւ լուսաբաց...

Այսպէս, Կոմիտաս, քուն թէ արթուն, կռիւ մղեց նեղ ճակատի մը վորայ, երաժշտանոցի եւ պանդոկի միջեւ երթուղարձի դիմին վրայ: Ինչ կռիւ ալ մղուէր, արեւը կանգ առնելու միտք չունէր. օրը օրին կպած կու դար կ'անցնէր: Ապա տարին կը հաւաքէր ամիսները տաք ու պող եղանակներով ու կը շարտէր գէպի ետ: Կոմիտասին քայլերը կ'ամբանային: Մայթերուն քօուրտելով չէր տաներ ոտքերը: Ծամբորդներու բարեւին առջեւ խուլ կամ համբ չէր մնար: Կրեց եւրոպական գլխարկ, բրդեայ կամ ծղոտկէն: Հագաւ պատուելիներու նման բանկոնակ, փանթալոն: Համալսարանական ուսանող մը պէտք չունէր սեւ սքեմով մատնացոյց ըլլալու:

Պերլինը կեղբոնաձիգ մեծութիւն մըն էր. կղզի մը ըլլար մինչեւ իսկ, հայուն ոտքը կը կոխէր անոր հողին վրայ: Աշխարհի չորս ծագերուն քնակէլ հայը, ինչո՞վ պակաս էր պերլինցիէն: Հոն կային ուսում տանելու եկած երիտասարդներ: Քանի մը ընտանիք եւս յայտնաբերուեցան: Կոմիտաս վար-

զապետ մինակ չղկաց անկուս։ Մեզը իրեն կը քաշէ մեղուկ, կ'ըսեն. զինք փնտռելու եկան երաժշտանոցի դրան առջեւէն, երբ խոյս կու տար օձիքը չլանձնելու համար աներես եւ աննկուն հետապնդումներով համը փախցուցած պերճադիմին։

— Բարեւ ձեզ, հայրենակից...
— Դուք հա՞յ էք. բարեւ, բարեւ...:

Այսքան կարճ ծանօթութիւն մըն ալ կը բաւէր, որ յաջորդ հանդիպումին խօսուէր հրաւերի մասին։ Երիտասարդը կ'ուզէր զինք տանիլ զեղատեսիլ ճաշարան-սրահարան մը։ Իսկ ընտանիքի տէրը կը քաշէր թեւէն իր տունը տանելու համար։

— Կը վշտանամ թէ չգաք...
— Այսօր դրադո՞ծ եմ, գիտէ՞ք. չեմ կրնար...
— Իսկ վաղը անպայման։
— Վա՞ղը. դուք է՞լ գամ...
— Տոտեսութիւն։
— Երթաք ի խաղաղութիւն...:

Երաժշտանոցին ներս ստեղծուած էր նոյնպէս ծանօթ մթնոլորտ։ Կոմիտաս կը նուագէր դաշնամուրի վրայ. Ծոցի զրպանէն կ'իջնէր հովուական սրինգը։ Կը լսուէր հայկական մեղեդի մը։ Յաճախ կ'երգէր։ Զայնը կը թըր-թըրացնէր դահլիճին դուռն ու պատուհանները. ջահերը մեղմօրէն կ'օրօր-ւէին։ Խարտիչահեր դերմանուհին կը յուզուէր։ Ափրողիտէն կ'արթննար ներս կայ եղող կիներու մարմինն մէջ։

— Հրաշալի՞ է, — կը լսուէին հոսկէ-հոնկէ քաղաքանշութիւններ։
Կը մօտենար՝ դերմանուհին.

— Գիտէ՞ք, վերացուցիք դիս, պարոն Գոմիթաս. ձեր ձայնը սքանչե-լի էր, սակայն ես սիրահարուած եմ ձեր սրինգին. թափանցող գեղեցկութիւն կ'եղանակէ...:

— Ծնորհակալութիւն, օրիորդ. զգածուած եմ, չա՛տ...
— Կոչեցէք անունովս. Կլարա՞։ Կ'ուզեմ լսել անունս ձեր շրթունք-ներէն։

— Հրաշալի անուն է Կլարան։ Բայց Կլարա ի՞նչ...
— Կլարա Ծափը, եթէ երկար չի՛ հնչեր. կրնաք զեղչել Ծափը-ը։ Կլա-րան՝ առանձին...:

Քաշած էր Կլարան Կոմիտասի թեւը, մեկուսացուցած։ Առանձին էին։ Աղջիկը կը փնտռէր մտերմութիւն։ Կոմիտասը կը տեսնէր անոր աչքերուն հալած շողը ու կը կծէր շրթունքը, որ փորձութիւնը մնար դուրս իր զգա-ցումներէն։

— Կլարա՛, առանձին՞. չէ՞ որ մենք երկուք ենք, դահլիճի մէջ ոչ առանձին, — հեզնեց նրբօրէն։

— Օ՛, պարոն Գոմիթաս, լուրջ չեն ձեր աչքերը...

Մօտեցաւ զոյգին հաստավիղ, անգլիական սիկար մը շրթունքին՝ յար-գարժան պարոն մը։ Ներողութիւն խնդրեց միջամտելուն մտերմիկ խօսակե-ցութեան։ Մանօթացուց ինքզինք։ Օփերայի տնօրէնն էր։ Սիկարին մոխիրը մատով թօթուեց սիւնին տակ դրուած աղբակալին մէջ։

— Պարոն Գոմիթաս, ձեր ձեռքերը չէի՞ք կրնար տրամադրել օփերա-յին...

Անակնկալ, չսպասուած հարցում մը։ Կոմիտաս լրջացաւ։
— Օփերա՞...:

— Այո, պարոն Քոմիթաս. դուք թէնօրային հրաշալի ձայն ունիք... Ես չեմ սիրեր հաստաբերձ հասակն ու ճնշող ծանրութիւններ բեմին տախտակամածը ճոճացնող: Դուք կը լրացնէք բոլոր անհրաժեշտ պայմանները...

— Բայց, ազնուաշնորհ պարոն, դուք սխալ գուռ կը ծեծէք, — Կոմիտաս կը քմծիծաղէր:

Միւսը կարեւորութիւն չտուաւ քմծիծաղին. գործնական մարդ էր. առաջարկեց.

— Կը վճարուիք լաւագոյնս. մեծահամբաւ երգչի տնուն կը շահիք. ի՞նչ է արդէն մարդկային կեանքին նպատակակէտը. դրամ եւ անուն...

Խարտիչահեր գերմանուհին երազեց.

— Դրամ եւ անուն... հրաշալի է:

— Ես աղատ չեմ, պարտաւորութիւններ ունիմ զիս հոս զբոսայտներուն հանդէպ, — Կոմիտաս կ'աշխատէր չվշտացնել գերմանուհին: Օփերայի տնօրէնին հաշիւը կրնար դոցեւ անմիջապէս. բայց սա աղջիկը կապոյտ աչքեր ունէր, լուսնածեւ ալոսեր, փոքրիկ քիթ մը, սուր բայց թրթռուն կզակ մը, զոր կարելի էր ակի մէջ առնել եւ ցնցել, ըսելով՝ «այ դու չարածնի. մօրուքիս հէտ կը խաղաս»:

— Ուրացէ՛ք պարտաւորութիւնները. ընդունեցէ՛ք առաջարկը, շատ կը խնդրեմ, — օրիորդին աչքերը ապապտտանքի թաց շողեր ունէին, կապոյտ ֆոնի մը վրայ: Կոմիտաս կը մեղքնար աղջկան:

— Ըսի, չէ՞. աղատ չեմ:

Օփերայի տնօրէնը գործնական եղաւ.

— Վերադառնէ՛ք ձեր ազատութիւնը. կը գնեմ... Իսկ այժմ, ցտեսութիւն, խորհեցէ՛ք առաջարկիս վրայ: Փրոֆեսէօրը իմ լաւ բարեկամս է. յայտնեցէ՛ք ձեր համաձայնութիւնը անոր...

Ու կռակ տուաւ, գլանիկը շրթունքին՝ հեռացաւ:

— Ինչքան ուրախ պիտի ըլլայի, եթէ ընդունէիք պարոնին առաջարկը, — մրմնջեց աղջիկը:

— Մարդ պէտք է տրամադրուած ըլլայ նման առաջարկի...

— Ինչո՞ւ. լաւ չէ՞ ձեր տրամադրութիւնը:

Կոմիտաս Վարդապետ Ժամադրութիւն ունէր հայրենակից ընտանիքին: Կ'աճապարէր, սակայն չէր ուզեր վշտացնել աղջիկը: Հաճելի էր հետը խօսիլը եւ լսել անկէ՝ պարոն Քոմիթասը, գերմանական առողջանութեամբ: Պիտի պատասխանէր.

— Այսօր, ո՛չ. վաղը՝ յայտնի չէ...

— Ուրեմն, կը մերժէք ընկերուհի մը ունենալնիդ, — աղջկան մէջ յուսախարութիւնն էր խօսողը:

— Այդպիսի խօսք ըրի, միթէ, — դարձեալ նոյն քմծիծաղն էր, աղջկան հոգիին հետ խաղ ընող, զուարճացող:

— Յայտնի է մերժումը. ես նկատած եմ, որ դուք կը խուսափիք ինձմէ միշտ...

— Բայց մենք ամէն օր միասին ենք զահլիճին մէջ:

— Ճիշդ է. բա՛ւ է հոս միասին ըլլալը... Կը տեսնեմ, թէ դուք սիրտ ըստածէն չունիք. ձերը՝ քաղաքավարութիւն է. արեւելեցիի յարգանք՝ եւրոպական ամէն ինչի... դուք տարօրինակ մարդ մըն էք...

— Գուցէ, սիրելի օրիորդ Կլարա. ամէն մարդ մէկ տեսակ չ'ըլլար, կան գիւրազգածներ, շուտ յափշտակողներ. կան նաեւ սառնասիրտ մարդ-

դիվ, հաշուով, խելքով մտածողներ. թէ ո՞ր խմբակին մէջ կը դասէք զիս, կ'անդիտանամ ես...:

— Ըսի արդէն. դուք սրտէ զուրկ մէկն էք. ցտեսութիւն...

Կոմիտաս Վարդապետ կը զղջար օրերդէն օրսը ցաւցնելուն: Նայեցաւ ետեւէն Հեռացող աղջկան. գլուխը երերցուց. ապա հանեց բաճկոնակի պրպտէն ժամացոյցը.

— Օ՛, ուշացայ. հիմա կը սպասեն ինծի:

Անպարանքով դուրս ելաւ դահլիճէն: Զինք միշտ դիմաւորող կինը հոն չէր: Այդ վստահութիւնը պատճառ եղաւ, որ քալէր դանդաղ, շուրջի կրպակները դիտէր առաջին անգամ տեսածի պէս: Մայթը ամայի կ'երեւէր կէսօրուան այդ ժամուն:

Որովհետեւ տուներու շարքը տեղ մը կը վերջանար, ձգելով մայթը բաց հողաշերտի մը կպած, Կոմիտաս Վարդապետին աչքերը դէմ առին կոն- ջական սղոթիկ դրամապանակի մը, որ ինկած էր մայթեզրին: Ծռեցաւ ու վերցուց զայն: Մէջը քանի մը մարմնէ եւ մանրուքներ կային: Գոցեց եւ կանգ տուաւ.

— Գուցէ խեղճ կնոջ մըն է. կորսնցուցած է եւ չէ կրցած գնումներ րնել, — խորհեցաւ:

— Ո՛չ. կը սպասեմ հոս պահ մը. թերեւս կորսնցնողը մէջտեղ ելլէ: Սպասեց. քառորդ ժամ. կէս ժամ: Նայեցաւ շուրջը: Մայթին վրայ լուսթիւն կը տրէր: Քալող չկար: Նայեցաւ ժամացոյցին. ժամ մըն էր կանգնած ահա հոն: Կը խորհէր ժամադրութեան մասին: Կը յիշէր քիչ առաջ դահլիճէն վշտացած մեկնող աղջկայ մասին. մանաւանդ կը մտաբերէր գի- չերային մղձաւանջի պահերը, որոնց մէջ տիրական էր Գէորգ Վարդապետին կրկնըրեւոյթը: Ան այժմ կը խօսէր ականջին տակ.

— Սողոմոն, նպատակդ բարի է. սակայն, հետաքրքրութիւնդ կը գտնեմ անբարձար: Պիտի սպասէի՞ր, եթէ այլ մարդու դրամապանակ ըլլար ձեռքդ մէջէնը...

Կոմիտաս Վարդապետ վարանում ունեցաւ: Հարցը ինքն էր տուած ինքզինքին. հոս Գէորգ Վարդապետը ի՞նչ պորձ ունէր: Թէեւ գիշերը կու գար երազին, բայց ո՛ւր ըլլալը չըսաւ, որ գտնէր զինք.

— Արդարեւ, ի՞նչ պիտի ընէի, եթէ, — հիմա ինքն էր հարցնողը: Կոմիտաս Վարդապետին ուշադրութիւնը գրաւեց հետեւէն դէպի իրեն եկող կնոջ մը կերպարանքը: Սպասեց առանց միտքը շարունակելու: Կու գար կինը դանդաղ, գլուխը այս ու այն կողմ շարժելով: Կը թուէր քան մը փրնտ- առողի շարժումներին մէջ: Եկաւ, եկաւ, մօտեցաւ Կոմիտասին, պիտի անցնէր քովէն:

— Տիկին, կը տեսնեմ ձեզ ուշացրիւ. բա՛ն մը կորսնցուցեր էք մի- թէ...

Կինը կանգ առաւ.

— Ա՛խ, պարոն. չտեսա՞ք արդեօք կնոջական դրամապանակ մը:

Կոմիտաս Վարդապետ տկամայ ձեռքը ետեւ տարաւ:

— Ի՞նչ կը գտնուէր պայուսակին մէջ, Տիկին...:

— Օ՛, մի հարցնէք. շատ թանկագին իր մը, զոր կեանքիս չափ կը սիրեմ:

Կոմիտաս Վարդապետ ակամայ սրտի կծկում ունեցաւ: Զըլլայ, թէ դրամապանակը իրմէ առաջ ուրիշի մը ձեռքը անցած է եւ ան գողցած է թան- կագին իրը: Կրնար հետապնդուիլ. պիտի ըսէր, թէ չէր տեսած նման դրա-

մասպանակ մը, բայց այդ ալ սուտ խօսիլ կը նշանակէր. այսինքն մեղք դորձեւ Աստուծոյ դէմ...

— Տիկին, կրնա՞ք ըսել, թէ ինչ թանկագին իր էր մէջինը:

Այս կէտին միայն Կոմիտաս Վարդապետ սեզղակի ըրաւ վկայութիւն մը: Տարիքոտ չէր կրնար: Մտերը ծածկած էր գլխանցով: Քրիթը սուր էր, բարակ կնձիւններ վարի կոպր ծանրացուցեր էին քիչիկ մը: Դէմքը ձուածեւ էր, այսերը թարմութենէ չէին զրկուած: Դէմքը ծանօթ կը թուէր իրեն: Աչքերուն սղտոր կապոյտը ուրկէ՞ ունենար պիտի, հարց մը տնա... Զեռքը, որ պահած էր ետին. բերաւ առջեւ. դրամապանակը դեռ պահէց երկու ասփերու ծածկին տակ:

— Ի՞նչ գոյնի է:

— Վարդապոյն կաշիով:

— Սա՞ է:

— Տուէ՛ք նայիմ:

Մէկ ու կէս մամ է, տիկին, հոս դամուներ մնացեր եմ, սպասելով տիրոջ. ուրախ պիտի ըլլայի, եթէ ձերը ըլլար:

— Իմս է, պարոն, իմս է. սրբաբ շնորհակալ պիտի ըլլամ ձեզի: Ծառ կը խնդրեմ ներողամիտ դանուիք ձեզ ձեր զործէն ուշացնելուս համար:

— Բան մը կը պակսի՞. գտա՞ք կենդանագիրը...

— Այո՛, պարոն. շնորհակալ եմ:

Կոմիտաս Վարդապետ ձեռքը երկարեց ցտեսութիւն ըսելու: Կինը բըռնեց անոր աջը, պահեց ասին մէջ:

— Օտարական կ'երեւիք, բայց ազնիւ էք. ուրախ պիտի ըլլայի ձեր անունը գիտնալով:

— Կոմիտաս Վարդապետ:

— Տարօրինակ, բայց դեղեցիկ անուն է. իմս, պարոն, Մարիա Ֆալր. ազնուական տոհմէ սերած է ամուսինս: Ուրախ պիտի ըլլար ան ձեզ ընդունելով իր յարկին տակ օր մը...

Կոմիտաս չէր կրնար դարձանքը կեղծել:

— Երաժշտանոցի մէջ ծանօթ-ազգական մէկը ունի՞ք, Տիկին...

— Աղջիկս, Կլարան հոն դասեր կը վերցնէ...

— Օրերդ Կլարան ձեր դո՞ւստրն է:

— Կը ճանչնա՞ք զինքը, պարոն...:

— Բարեկեցէք իրեն, իմ կողմէս Տիկին. ցտեսութիւն:

Տիկինը ունէր դեռ Կոմիտասին ձեռքը իր ասին մէջ.

— Քաղցէք ձեզի, պարոն... կը ներէք, յիշողութիւնս տկար է անուններու հանդէպ...

— Կոմիտաս Վարդապետ:

— Այո՛, այո. այդպէս էր. պարոն Կոմիտաս... հրամանէ՛ք ձեզի...

— Շնորհակալութիւն... Ժամադրուած եմ, — չէր կեղծեր Կոմիտաս, կը ցաւէր բաժնուելուն:

— Ուրեմն, կը տեսնուիք. Կլարան անպայման ձեզ կը բերէ մեր տունը...

Ու բաժնուեցան: Նոյն օրը հայ ընտանիքի մը մէջ կը պատմուէր դէպքը: Տան տէրերը կը խնդային, սակայն Կոմիտաս Վարդապետին սիրտը խաղաղ չէր թուէր անցիններուն:

Զ.

Կոմիտաս Կուտինային աւարտեց Պերլինի արքայական Վիլհելմ համալսարանի երաժշտութեան բաժինը, երբ տարիքը կոխած էր Երեսունի սանդղախմատին: Իր փորձութիւնը պիտի անցնէր Վիլհելմ երաժշտութիւնը պաշտպանելով: Պիտի Հիլինոսացիները դաստիարակական սրահներն ու Պերլինի հասարակական միտքը եղէգնեայ արկնդի քաղցր դայլայլներով: Զինք ընդունեցին անդամ «Միջազգային Երաժշտական Միութեան»: Տառապած էր առաջին տարուան խարխափումներով, անքուն տուայտած՝ երազին մէջ զինքը կանչող մտապատկերներու յաճախմբէն: Մարդու պէս՝ այրուած էր սրբազան կրակէն, զոր վառեր էին Կլարաները իրենց կապոյտ ծալուածքներով...

— Ուրեմն դուք, պարոն Քոմիթաս, բողոքական պատուելի՞ էք...

— Ո՛ր. օր. Կլարա, լուսաւորական, — չէր կրցած շարունակել Կոմիտաս:

— Վարդապէ՞տ... — հուսաւքը դեռ չէր խուսափեր Կլարայի մօտ:

— Կուսակցո՞ն:

— Ամբաստութիւն...

— Այո՛... Հայոց եկեղեցիին հետ...

Տարեգրութեան մէջ յիշուած չէ, թէ Կոմիտաս Վարդապետ վիշտ զգացած էր թէ ոչ, երբ առաջին անգամ կը զնէր օր. Կլարան անանցանելի պատարի մը տակէն: Օր. Կլարա միայր...

— Ափսոս...

«Ափսոսին» մէջ օր. Կլարան տեսած էր երազին քանդուծն ու սերունդներու կորուստը: Կոմիտաս՝ անով կը կորսնցնէր մտերմական պահերու անդարձ մեկնումը: Երկուքն ալ հեռացեր էին, առանց ձեռքի սեղմումի կամ ուրիշ ակնկալութեան...

Երեք տարի յետոյ Կոմիտաս կը վերադառնար Էջմիածին:

Կ'ըսեն (եւ պատմական փաստ է), թէ Աղեքսանդր Մակեդոնացին, որ փոքր Մակեդոնիայի իշխանազուն-թագաժառանգն էր — երեսուներեք տարեկանին տիրեց աշխարհին: Գիծ քաջութեան եւ իմաստուն ռազմավարի սիրտը տարին հասցուցին զինք մինչեւ արիւնքեան խորերը եւ Գանդեսի արիւն Գանդեսի ջրերէն շրջուեցաւ սակայն անոր ձիուն ոտքը: Հաւատացուցեր էին, թէ անկէ անդին մութ աշխարհ էր, արեւ չկար, ուրեմն լոյս չկար: Համոզուեցաւ. ձիուն գլուխը ետ դարձուց չգոհացուած փառասիրութիւնը սրբորին մէջ: Ու տասնեակ տարիներ ետք, դարձաւ գերեզմանի քնակիչ...

Կոմիտաս Կուտինային նոյնքան երիտասարդ էր, ինչպէս Աղեքսանդր Մակեդոնացին: Վերջինը տիեզերակալ էր, աշխարհական ազատանի. Կոմիտաս՝ Վարդապետ էր չի մէջ Էջմիածնայ միաբանութեան՝ եւ մնաց միշտ Վարդապետ:

Իր Էջմիածին ժամանումը ովսանաներով չէր, որ հշուեցաւ: Չէր գար «ձիւն տակիմ խաղալիք»: Մեծկակ ոչնչութիւններ, խաղոր բոցով արապ գլուխ սրբազնութիւններ, մորթասէր ծոյլե՛ր, որոնք առած էին համբաւը Կոմիտասի ելոյթներուն — կը կծկուէին, կը գալարուէին օձային մաղձով.

— Անվայել սիրային երգերու որբահաւաքի տուած դէս մըն է. կրնայ ձեմարանի աղոց միտքը պղտորել...

Նոխանձի սեւ օձը գիրքով պոչը կը շարժէր:

Իրեն տուին երաժշտութեան դասատուի պաշտօն: Այդ կը նշանակէր, թէ զինք կը պատուէին խուցով եւ արգելափակութեամբ: Լոյսի-թոփիքի

պէտք կը դգար ստեղծել: Ի՞նչ լաւ, երանելի օրեր էին պերլինեան ժամանակները: Դասական դրամներէ ետք, կը թաշուէր խուցը աշխատելու: Իրեն կու գային վերջիշումի փշրանքներ, նշխարներու պէս կը սրբանային, կ'ըլլային ամբողջութիւն: Կ'արագանար զարկերակը. հակառակ պաղ քրտինք կը թափէր. խուցին լոյսը քիչ կու գար ցաւատ կոպերուն ու սրտին...

Ամենայն Հայոց Հայրապետը դրազած էր ազգային դործերով: Լինելու թեան պայքար կը մղէր արտաքին ճնշումներու դէմ: Ո՞ր թրականէն ի վեր հիւսիսի ցարը ցանկացեր էր «Հայաստան, առանց Հայի»:

Պերլինեան յուշերը կը կանչէին Կոմիտասը, որ գտաւ առիթը կրկին թռչելու հոն: Ճակատագրական պիտի ըլլար այդ երթալը:

Պերլինը նոյնն էր, պողոտաներուն վրայ եռազեռ, կռուքի, մարդոց, չքերթներու: Օդն ու ջուրն ալ նոյնն էին, ինչ որ էին քանի մը տարիներ առաջ: Բայց Կոմիտաս Վարդապետ համ չառաւ: Մնացուն բնակիչ չէր մայրաքաղաքին: Ճամբորդի հոգեբանութիւնը չթողուց զինք մինչեւ վերջին պահ: Թէ՛ւ այցելեց հին, ծանօթ բարեկամներու: Ելոյթներ ունեցաւ հոս-հոն. զգացուած պարտադր սրտին՝ մնաց թափուր: Կը պակտէր իրեն մտերիմ պահերու մէջ ունեցած հոգեվիճակը, անոր տուած քաղցր թախիժը: Ծանօթ մայրէջք քաղած ատեն, յիշեց չէնքերուն կտրուածքն ու բացատը եւ տիկին Փալմիրի դրամապանակը: Կեցաւ: Ակամայ աչքերը փնտռեցին մայրիկն վրայ ա՛յն կէտը, ուր նշմարած էր Կլարային մայրը: Քմբծծաղ մը հիւանդագոյն բան մը քաշեց դէմքին: Յիշեց Գէորգ Վարդապետը, որ լերան լանջին, ջուրի կոնակէն կ'երգէր:

«Մանկութեան օրեր, երազի՛ նման,
Անցա՛ք, գնացի՛ք էլ չէ՛ք դառնալու...»

Յիշողութիւնը ծնաւ յիշողութիւն: Փարիզ կը նստէր ուրիշ մը, որը ինքնագիր բանաստեղծութեան մէջ կ'ըսէր, խօսքը Հայաստանին. «Դուռն նըստեր ես ճամբաներու անկիւնը...»: Ուրախութիւն բերաւ իրեն: Պերլինէն շոգեկառք նստաւ: Պիտի երթար Փարիզ, լոյս քաղաքին մէջ ունէր բանաստեղծ բարեկամ մը:

Զօպանեան բնդունեց զինք զրկաբաց: Բարակ մօրուք մը ունէր եւ նուրբ ձեռքեր: Քիչ մը խաշոր էին աչքերը, ձայնը առողջ: Գլխամազը ձիւնէր կախուերէ: Էր ծոծրակին: Քաղցր, ազգայական ժպիտը մէկէն կանգ առաւ ալ տին վրայ, երբ ափերուն մէջ կ'առնէր Կոմիտասին ձեռքը: Բախտազուշակի ապաւորէի լրջութեամբ ըսաւ, անոր ափը նայելով.

— Կոմիտաս Հայր Սուրբ, ձեռք ափին մէջ ես կը տեսնեմ ժողովրդանըւէր հանճարը: Կրօնաւորի ձեռք խուցը եւ ուսուցիչի նեղ պաշտօնը կը հաւեցրնեն մարմինը եւ կ'ապրեցնեն փորը: Էջմիածինը, հակառակ սրբակեդրոն մը ըլլալուն, հեռու մնացած անկիւն է...: Ազգս փառաւորել է պէտք մեծ ոստաններու մէջ, յաջա օտար պետութեանց: Թիֆլիսը ունի իր շատուածները. հոն Հայը Հայ կը պահուի: Մեր Խրիմեանին ձեռքն ալ կը հասնի հոն:

Արշակ Զօպանեան կանգ առաւ: Լուրթեամբ զննեց դեռ քանի մը դըլ-խաւոր գիծեր Կոմիտաս Վարդապետի ափին մէջ: Յետոյ բան մը յիշելու պէս շարունակեց խօսիլ.

— Հռոտիաք մը կը ծածանի հորիզոնին վրայ. դեռ արեւածաղ չկայ. ո՛չ ալ արշալոյսը մօտ է. բայց Պոլիսը կայ: Հին, պատմական քաղաք. քաղաքակրթութեան կեդրոն էր, թուրքերը դայն ազգայնացուցին, թէ՛ն հա-

մաղզային է տակաւին: Եւրոպացի պետական մարդերէ ողողուած... Մեր ժողովուրդը պէտք է ճանաչուի զանէ: Պոլիսը միակ վայրն է, ուր կրնաք տանիլ Հայկական երգերու Փոլքլորը: Հանճարեղ խմբավար էք: Երգի յղկիչ, Հնարող երաժշտագէտ...:

Կոմիտասի սրտին մէջ կրակ վառեց ան կտրծեա: Առարկեց.

— Բայց մեծարգոյ պարոն Զօպանեան. այդպէս շարժիս դաւաճանուածին պիտի ըլլար տուած քարթըներու եւ իմ խոստումիս: Էջմիածինը իմ Հայրս է եղած: Զեյթի ծանօթ է իմ կեանքս. ո՛րք էի. գրեթէ կորսուած. առին պահեցին. ուսում տուին. ճամբեցին Պիլիքին, որ խորանամ երաժշտական դիտելիքներու մէջ: Ընդէ է, թէ էջմիածինը հաստեր է ճամբուն անկիւնը եւ Հոն նստեր են հաստազիւղ, մեծփոր ճեղքայրներ», քսու, բաժրասող, նահանգս, ինչ որ ախտերով վարակուածներ: Նախօլէտը ըսած է. «Անկարելի բառ գոյութիւն չունի»: Ընդէ է: Յետոյ՝ Պոլիսն ալ ունի իր շատուածները. դրական ոսկեղար կ'ապրի Հայութիւնը հոն...:

Զօպանեան վրայ տուաւ.

— Հայո՛ւ ոսկեղար. այո՛. Հայո՛ւ Համար, դարձեալ՝ այո՛: Իմ փրկած—ուզածս ալ է: Ոսկեղարը փոխադրել օտար շուկայ: Մանուանդ Հայ գեղջուկ երգի ոսկեղարը բարձրացնել օտարին բեմը... կրցի՞ հասկցուիլ...:

Զօպանեան ծեռքին մէջ առաւ կարճ մօրուքը:

— Հասկնալի՛ է. սակայն վճռելը դժուար... — Կոմիտաս կը տառամէր. խղճի դէմ կը դռնէր Զօպանեանի առաջարկը:

Զօպանեան քաշեց մօրուքը ափէնէն: Յուշամատն էր, որ կը խօսէր այս անգամ.

— Զեր ձերքերը, Կոմիտաս Հայր Սուրբ, Համազգային օգտակար գործօն մը պէտք է դառնան: Էջմիածինը թող ուրախ դատէ եւ Հպարտ ինքզինք, որ իր ջամբած լոյսով կ'երթաս Պոլիսը նուաճելու... Էջմիածինը ձեզմով կամ առանց ձեզի եղած է էջմիածին. կը մնայ այսուհետեւ նոյնքան էջմիածին, որքան սրբակեդրոն: Օրինակի Համար, առ դիւ. ես Հոս եմ, որովհետեւ իմ տեղս է Հոս: Մնայի երկրը, կը դառնայի դաւաճացի վարժապետ: Եղեր եմ Հոն կամ ոչ, տեղս բռնողներ միշտ կ'ըլլան: Տեսէք, ես Պոլիս չեմ երթար. ինչո՞ւ. որովհետեւ Հոն կան Զօհրապներ... Զերկարեմ. դուք Վարդապետ, չէք կրնար ձեր բախտին դէմ երթալ. տյո՛ղ կ'ըլլայ մեղանշում... ազգի օգտին դէմ... Այսպէս կը խօսին ձեր ափին գիծերը...:

Կոմիտաս Հաշտուած կը թուէր:

— Ա՛յսինքն, երթալ Պոլի՞ս...:

— Շահուած կ'ըլլայ գործը... Պոլիս եւ Կոմիտաս, այսպէս է ճակատադրը, զոր դրած է Աստուած ձեր ճակտին:

— Կը մտածեմ. տակաւին ժամանակ կայ, — ձեռնաթափ կ'երեւէր Կոմիտաս:

— Որքան շուտ, այնքան լոււ, — Զօպանեան փրոպականտիստը ոտքի էր Զօպանեանին մէջ:

Իսկ Կոմիտաս, երբ առանձին մնաց, Հիւրանոցի իր բաժինին մէջ երկարօրէն մտածեց ընելիքի մասին: Հաւաքած ու մշակած ունէր դեղձկական, ազգային շատ եղանակներ: Կրնար դանոնք յարմարցնել բեմին, տալ անոնց քառաձայնային լիցք ու շեշտուածութիւն. ունէր ծրագրի մը լեցնող խմբերգներ: Քանի մը կրօնական—եկեղեցական շարականներ կը միացնէր, որ փրկւէին իր վախերը...:

Իր փնտռել ուզածը փառք ու պատիւ չէր: Աստուած տուած էր կայ-

ծը. կայծը եղաւ օճախ. օճախէն հրդեհուն մեծ պատնէշներ շկային: Աղզը պիտի փառաւորէր զինք Օշականի խոնարհ գերեզմանի համեստ քարէն հատ մըն ալ գնելու իր հողակոյտին վրայ եւ զայն սրբացնելու: Ականջը խօսի Գէորգ Հայր Սուրբին, որ իրեն ցոյց տուած էր յաւիտենութեան ուղին.

— Այնքան խոնարհ, քայց դարաւոր ազօթքներու, խունկի, մոմի գրո՛ւմը վրան...:

Այդ գիշեր, առաջին անգամ, պուցէ, քուն մտաւ Կոմիտաս հանդիստ, անխռով:

Ու մեծ դէպք մը կը ծրագրուէր մութին մէջ...:

Մինչեւ երեսունըհինգ տարին, Կոմիտաս եղաւ դասախօս, հրապարակագիր եւ հրգահանաք: Սփռավարի ճիւղտը անհանգիստ քունի մէջ էր: Մըղիթք առաջին ճակատամարտին համար պէտք էր պատրաստուիլ, զինել բանակը. մարտունակութիւն ներշնչել անոր:

Քանի՛-քանի՛ անգամներ, սքեմի փէշը բռնած՝ Կոմիտաս Կուտինացին զնայ հանգիւր, լսեց «տօլմա եփող» հայ գեղջկուհիին ամչկոտ երգը. կալ ու կամն ընդ բանշպարին հեւքը: Մտաւ ձորերը ու լսեց «Ֆիտան եարը», «Չան Ֆիտային»: Քալեց աղբիւրներու քովէն, տեսաւ հարս ու աղջիկ՝ «կուսի աւսած ելած սարը»: Անտառի փէշին, դիտեց ծառի տակ «Սոմար պառկած» երեսը բաց... Դաշտի Ֆոնին վրայ նշմարեց «քելէ քելէ» աղջկան նազը: Եւրազի նման լեռնալանջին գտաւ «սարերով, սարերով» գացող եարը: «Սօնա եար, Սօնա եար» կանչող տղան տեսաւ: Ու դիտեց, դիտեց արեւն քրտիք մտած մանկալը, պրկուած ջիւղերը աղեղած «ա եղը ջան»ը: Հովիտներու խորը, արեւէն խանձուած եւ ամպերէն «հով արէք» աղբիւրող հնձուորին մեղքըցաւ: Միւրեց աշտ բոլորը, եւ մեղքցաւ անոնց, որպէսզի գտնէր «դարտին դարմանը» կամ «սիրած եարը», «խնկենի ծառը»...

Ահա այսպէս էր, որ ան կրցաւ դիտած թերք հայթայթել, ռազմի պատրաստուող բանակին:

Ու հասկնալի էր, թէ ինչո՞ւ հայ ժողովուրդը «եարերգու» եղած էր, «Սասնայ Մռեր» գիւցազներգութիւնը տալէ յետոյ: Որովհետեւ այդ եարն ալ ձեռքէն խլուելու սպառնալիքին տակ կը գտնուէր, Արտուշն աշխարհակալի սուրը կորսնցնելէ դարեր ետքը...:

Առաջին համերգը, զոր տուաւ էջմիածինի մէջ, չնայեցողիչ անակընկալ մը եղաւ:

Հանդիսատսրահը համահայկական էր. օտարական մէկը չկար հոն, որ քշվորէր միտքերը: Կոմիտաս Վարդապետ բեմահարթակ հանեց նախ «Տէր ողորմիտ»-ն: Ապա «Քրիստոս պատարապետ»ը: Մանօթ շարականներ էին, դարերով կրկնուած շէշտը վրանին: Բայց քառամայն կը մատուցուէր: Ընդհանուր Ֆոնը կրօնական էր, մարտիկ: Մափահարեց հանդիսատսը: Յետոյ՝ Յետոյ՝ դաշտային երգը խուժեց բեմ: Լսէ. լսէ սա «Հորովել, հօ՛ւ, հորովել»ը: Կը թուէր, թէ գուրջանը կը պատուէր անջրգի հողին կուրծքը, որ բեղմնաւորուէր ետքը սերմով ու անձրեւով:

— «Ձիգ տու, քաշի ա եղը».— Կ'ազաչէր խուժըր, որ կ'անձնաւորէր մօճկալը:

Կոմիտաս բարձրացուցեր էր թեւերը: Ճիւղտը բարակ շիւղ մը կ'երեւէր հանդիսատսրահէն:

— «Գուքամի երգը», — կը փոփոսար Կոմիտաս:

— «Տնլմա կ'իփիմ պիպարով»... — Աղջիկ-տղայ խուժքն էր, որ կ'իյնար տոլմային վրայ:

Ի՞նչ հարկ թուել բոլորը մէկիկ-մէկիկ: Ձէ՞ որ հանդիսատեսը լսեց զանոնք հեւ ի հեւ եւ իր յիշողութեան մէջ տպաւորուեցաւ «Մոկաց Միւրգէն», «Խապրիկ մը շունի՞ր», կո՛ս'ւնի», «Խնկենին» «Ձինարի պոյով եար», «Խու-մար պատկէ, երեսը բաց», «Սարերի հովի՛ն մեռնեմ» եւ զեռ ինչե՛ր, ինչե՛ր...:

Մարդիկ, որ իրենց տան մէջ, կնիկէն պազանի, «Սօնա եար» ունէին, կամ դրացի պատուհանէն ներս «Երեսը բաց խումորը» կը լրտեսէին, արուա-կան ցանկութիւններ սրճաւոյ, — գտան անպատշաճ՝ բեմին վրայ: Երեւա-կայել Վարդապետ մը, որ կիրքով ու կորովով շտափ կու տար, ստիպելով «աղջիկ-տղայ»-ներու, անոնց աչքը բանալով եար ցանկանալու արտապիղծ արարքի մը վրայ. «Հօյ հօյ. մենք քնացեր ենք, չքսե՞ս»...

— Կին, տղայ, աղջիկ բերելու չէ՞ այլեւս... Նման բաներ լսելու, — կը փսփոսար «սրբակրօն» մէկը, որ իր կեանքը զուրաբը անցուցած էր, կնոջ հետ կոտուի պատճառներ ունենալով:

— Նեղմտութիւն. չունկնդրեցի՞ր «Տէր ոգործիք»-ն: Այդ ի՞նչ խոր-հուրդ էր. երանացնող պահ մը ապրեցուց մեզ: Կոմիտաս Վարդապետ կու-սակրօն պէտք չէ ըլլար... — կը մըմնջէր առաջինին դրացին:

Համերգը թափանցած կը թուէր տհաճ մարդոց մտայնութեան կողա-յուղմերը: Թէեւ ներքին ճակատին վրայ ներաշխարհային կռիւը կը շարու-նակուէր:

Երկրորդ, բայց աւելի պատրաստուած ճակատամարտը մղեց Կոմի-տաս, երկու դրոհով՝ Թիֆլիսի մէջ: Գերեց քաղաքը. ցարական փոխարքան ներկայ էր առաջին դրոհին: Կեղծել չէր գիտեր. թունդ բնաւորութիւն ու-նէր: Ստորակայութեան քաղաքական բարդոյթէ ներուած՝ չկրցաւ քնանալ: Երազին մէջ գրեց հրաման.

— Եկեղեցիէ եւ զպրոցէ գրկել հայը, որ չունենայ Մաշտոց կամ Կո-միտաս...

Իսկ Կոմիտաս ովսանաներով վերադարձաւ Էջմիածին: Իրեն լուրեր հասան Փարիզէն, թէ այնտեղի հայութիւնը կը տատապէր հայ գեղջուկ եր-գերու կարօտէն: Օտարին ճնշումը կ'աւելնար օրէ օր: Կոմիտաս, կամօքն Հայրապետին շահուած հռչակին — թոյլատրուեցաւ անցնիլ Եւրոպա:

Ամէն անգամ, որ ոտք դնէր այդ հողամասին վրայ, յուշերը կը շըր-ջապատէին զինք: Բայց գիտէր իշխել զգացումներուն: Հոն պատրաստուեցաւ երրորդ ճակատամարտի համար: Թիֆլիս Փարիզի «Սալ տէ զ'Ամաթէօս»-ը պիտի ըլլար: Դիւրին չէր բերդաւարաճը գրաւել: Արդէն սխալ մը սպրդած էր տեղուանքի մասին: Յիշեցուցին իրեն, թէ «Սալ տէ զ'Ամաթէօս»-ը գոյութիւն չունէր. անբնակ վայր մըն էր: Շտկուեցաւ ուղեգիծը — «Սալ տէ զ'Ակրիքիւլ-թէօս»-ի ուղղութեամբ: Կոմիտաս բանակի զօրավար նշանակեց Արմենակ Շահմուրատեանը: Մարդարիտ եւ Շուշան Բարայեաններուն յանձնեց Կարմիր Ռաշի դրօշը: Այս ճակատամարտին մէջ հայկական ֆուլքլորը մեծ տնուն շա-հեցաւ: Կարեւոր պատիւ մըն ալ ստացաւ «Հայաստան», զոր կը վարէր Շահմուրատեան:

Համերգ-ճակատամարտէն ետք գրկուեցան Կոմիտաս եւ Ջօպանեան:

— Ի՞նչպէս գտաք համերգը, — Կոմիտասն էր:

— Սքանչելի, սքանչելի, — պատասխանեց Ջօպանեան, երկար պիտի ն-ծայրը որորելով:

— Օտարնե՞րը...:

— Ճրանասցի երաժշտական քրոնիկագիրը սպիտակ դրօշ պարզեր էր... :

— Բարի՛ : Պարոն Զօպանեան, կրնա՞ք ինծի ցոյց տալ նափուկնական ճամբան... :

— Իտալիա՛, բարձրաբերձ Ալպեաններու վրայով... :

— Զիւնամբրիկի վախ չկա՞յ :

— Զուիցերիոյ վրայով կ'անցնիք :

— Հրաշալի՛ միտք. եկէ՛ք համբուրնմ ձեր բաց ճակատը... Կը խոստատանամ երգի վերածել ձեր «Հայաստանի»... Եւ Կոմիտաս սկսաւ արտա-
նանել :

Դուն կանգներ եւ ճամբաներու անկիւնը.

Մագերդ ի վար իջեր կախուե՛ր է ձիւնը...

— Պապօ՛, Կոմիտաս. «տո՛ւ լաճ տնաւեր...» :

— Գիտէ՛ք, պարոն Զօպանեան, յիշողութեամբ արտասանեցի. տւել պա-
կաս հալալ ըրէ՛ ինծի... :

— Կը բաւեն ձայնդ ու շունչդ : Երգի վերածելը ուրիշ. ըսեմ, թէ ես
ալ ուղիղը չեմ յիշեր :

Ու խնդացին միանուագ : Այդ առաջին զուարթ խնդունէն էր Կոմիտասի
կեանքին մէջ... Եւ այդ խնդումով ալ բաժնուեցան : Կոմիտաս պիտի անցնէր
Զուիցերիա, իբրեւ բարեկամ երկրի հիւր : Զէ՞ որ եւրոպացիներ յաճախ գրեթե
էին, թէ Հայաստանը Ասիոյ Զուիցերիան է :

Ալպեան լեռները բացին իրենց կիրճերը Կոմիտասի առջեւ : Գնաց Հը-
ռոմ, հոնկէ՛ հեռագրեց ինքնին. կարճ, կտրուկ՝ հին հռոմէական զօրա-
մարին նման :

— Գացի, տեսայ, յաղթեցի :

Ու լուսնաներու ձայնը դեռ չէր լուած, երբ լուր հասաւ, թէ հայրենա-
բաղձ կարօտներու խլրառւմ կար. «Բաքուցիները քեզ կը սպասեն. հասի՛ր»...

Պարզուկ հայ զեղջուկ հեթաթասա՛ցը պիտի պատմէր զայի՛ր սերունդ-
ներուն. «Զկերաւ, չիմեց, ոտքին քաշեց մոյկերը, ելաւ գնաց Բաքուի վրայ
կռիւ...» :

Կսի՞ւ էր թէ գերում, որոշ չէր : Ժամանակի պատմիչները արձանա-
դրութիւններ գոյցէ թողած են մատենաներու մէջ. այս տողերու հեղինակը
կ'անդիտանայ բոլորը, ինչպէս կ'անդիտանայ նախորդ եւ դալիք ճակատա-
մարտներու մասին ստոյգ տեղեկութիւններ : Անոնք, որ խօսքի ու գրիչի տէր
էին եւ փրուած սիրամարգեր ունէին իրենց հոգիին մէջ — սոնքալով կը լը-
ռէին : Ի՞նչ ընէր հասարակ ժողովուրդը, որ կը պաշտէր իր Կոմիտասը : Ան
էր, որ զիրենք մարդ ըրաւ եւ առօրեայ իրենց աշխատանքը բարձրացուց
բեմ. համահանաշուժ տուաւ իրենց երգ ու խաղին :

— Պաշեմ Կոմիտասի ձեռն ու ոտը... :

Բայց, որքան մեծցաւ Կոմիտաս եւ իր համբաւը, այնքան խռորցաւ
թոյնին կաթիլը, որ կը ծորէր կարգ մը զօրբազնութիւններու սրտին մէջ :
Փորձեր եղան կրկին բանտել զինք վանական խուցէն կամ դպրոցի դասարա-
նէն ներս :

— Վերի արտի ցորե՞ն է. նայիս հասակին, գէմքին — ոչի՛նչ մը. տես
թէ բախտը ո՞րտեղերը հասցուց զինք : Մեղմէ՛ խլուած աղատութիւնը ինչո՞ւ
տրուի իրեն... :

— ձիւղ ես, եղբայր, իմ կարծիքով տուածները նորութիւն չեն. ո՞վ չէ լսած «մեր դրանք խնկի ծառ, ձեր դրանք խնկի ծառ»-ի պէս երգեր: Մանկութեանս — «երանելի օրեր, որ հիմա չկան» — ես ալ երգած եմ «բոյով, բոսով իմ հարը»...:

— Սա Կոմիտասը կը ճանչնամ. Սողոմոն կ'ըսէին. որբ, անտիրական մէկն էր: Բերուեցաւ հոս — բերողը սասանայի բաժին դառնայ — թրքերէն երգեց: Կաթողիկոսը հողեկան կաշառուած մըն էր, թոյլատրեց ներս առնել: Դուն մի' ըսեր ստուած օձ է եղեր. տաքցուցինք մեր ծոցին մէջ եւ տե'ս, թէ ի՞նչ դարձաւ...:

Երբորդութիւնը գլուխ գլխի դուրս տուած էր արդէն փորին թոյնը: Կը մնար շորբորդը — Յուզա Խակարիովասցին — խօսեկակերպը փսփոտեալին էր:

— Լսեցի՞ք, եղբայրներ, «Հայաստան» յօրինեց տուաւ Շահմուրատ-հանին. «Կառնկ»-ը շտկուեց — դարձեալ Շահմուրատեանին, — մէկ քաւով հրկու թռչուն: Շահմուրատեանը կ'երգէ, Կոմիտասը կը փառաւորուի... ասոր կ'ըսեն միւսն բաց խաղթութիւն. լմեցաւ գնա՛ց...:

— Բա՞ն կայ լեզուիդ տակ, եղբայր. չըսե՞ս որ իմանանք:

— Այդ զարնուած թռչուններէն մէկը, — Արծիւն է, — որ կայ ի հիւսիս. միւսը՝ Անդըլ. մեր թրքահայ եղբայրներու կոչեցեալ գայլը:

— Հը՞մ. կու՞նկը անմեղ թռչուն է. մէկ տեղ չի մնար. կը լուէ. զարուելը հոս է կամ միւս կողմը. ծմբան կ'երթայ դէպի հարաւ: «Հայաստան» թող մնայ իր տեղը: Աստուած չեղած մեղքերը դիպած է մէջը. բա՛յց... սա՛ «Սիրիանայ քաջեր»-էն խելքս չի կտրեր. ըմբոստութիւն է... Ձեզի կը հարցրնեմ. թողո՞ւնք, որ այս Վարդապետը ազգային գլխաւորանք բերէ մեր գլխուն...:

— Վեհափառը իր մարդն է. համակարծիք չի՞ գտնուիր հոսկէ քշուելուն, — կը միջամտէր շորբորդը:

Քիչ մը լռութիւնը խորհուրդի պահ կը նշանակէր. ուրե՛մն, լռեցին: Հաստապիւղ եղբայրը քրտնած էր: Մեծ փորը կը հեւար անմարսողութենէ: Պարապ գլուխը խելք կը ժողվէր: Չորբորդը, թէեւ համակարծիք չէր առաջին երեքի մտքերուն, բայց կողմ ալ չէր Կոմիտաս Վարդապետին: Սմանալով մէկն էր, որ չէր ուզեր զատա՞ երեւիլ հոս-հոն:

Առաջինը.

— Գոտայ,

Միւս երկուքը,

— Գոտա՞ր...

Չորբորդը՝

— Ի՞նչ գտար...:

Առաջինը.

— Մէկը կը խաղայ անոր խելքին հետ. կրցածին չափ թող գովէ հեռապատկերը Պոլիս երթալուն: Երբ դիմում կատարէ Վեհափառին, մենք դէմ չենք քուէարկեր: Կաթողիկոսը կը մերժէ, մեզի մերժած ըլլալու համոզումով. իսկ սա Կոմիտասը կը վերաւորուի. կ'երթայ կը մտնէ իր խռցը. քէն կ'ընէ դուրսի աշխարհին...:

— Իսկ եթէ Վեհափառն ալ տայ իր համաձայնութիւնը, — անխելքին խելացի հարցումն էր ասիկա:

— Յետոյ կը մտածենք...

— Մեր կողմը կու գայ: Եղբայրներ ցրուինք ամէն մէկս մէկ կողմ,
— չորրորդն էր, քսուս:

Բաժնուեցան. ամէն մէկը առաւ տարրեր ուղղութիւն: Քալեցին գր-
չութիւնին կախ, աշխարհի հողը առած կարծես իրենց ուսին: Կոմիտաս եկաւ
հաւատարեցաւ առաջինին, որ ձեւացուց, թէ չի՛ նշմարեր եկողը: Կոմիտաս,
անկիւնները իրարու միացնելով իրրեւ կէտկէտաւոր դիժ — հասաւ երկրոր-
դին, որ շնչէր ձայնաւոր: Փքոց մը: Անցաւ Կոմիտաս ողջոյն տալով. պա-
տասխանը յայտնի չեղաւ:

Երրորդը կտրած էր բակը արեւմուտքէն: Կոմիտաս նշմարեց միայն
անկիւնը դարձող անոր մուճակին կրունկին գէժ բացուած երախը: Զորրորդը
— ինքն էր, որ հետեւեցաւ Կոմիտասին: Դրան առջեւ կեցուց զինք.

— Կոմիտաս եղբայր, քեզի բա՛ն մը պիտի յայտնեմ, — ու նայեցաւ
չուրջ բոլորը:

— Մտէ՛ք ներս, — հրաւիրեց Կոմիտաս, ճամբայ տալով անոր:

Թողնած կ'երեւէր. աչքերը կարմրած էին յոգնութենէն եւ քնատու-
թենէն: Ունէր մեծ-մեծ ծրագիրներ: Հայ օփերայի նիւթի փնտրտուքը տա-
րեր էր զինք թումանեանի «Անյոյ»-ը: Ինքը կ'ուղէր ռազմական կշռոյթ ու-
նեցող Եւթարիո մը. «Վարդանանց պատերազմ»-ին ուրուականը կը տանջէր
ուղեղը: Հրամցուց միակ աթոռը: Միւս հայրը նախընտրեց ոտքի կենալ:

— Շատ ըսելիքներ շունիմ, Կոմիտաս: Միայն ըսեմ, թէ գէժդ դաւող-
ներ կան. զգո՛ւ չէ...:

Ու մատները տարաւ շրթունքներուն: Կոմիտաս չհասկցաւ, թէ ի՞նչ կը
նշանակէր այդ շարժումները: Այսօր. չմոռցաւ ըսել.

— Մնաս բարեա՛ւ. յաջողութիւն...:

— Ծա՛նճ, — եղաւ Կոմիտասի մեկուսի պատասխանը:

Մակայն տրամադրութիւնը ինկաւ. ձեռքերը կը մերժէին գրիչը. ա-
խորժակը զոց եղաւ երկկոյտան: Զեռքերը առին գլուխը ափերուն մէջ. ար-
մուկները խարսխուեցան ծունկերուն: Ոտքերը, թույլիկ, մնացին կախ մա-
հիճին:

Առնական մարդու մը ձայնը կ'արձագանդէր խուցին մէջ. յիշողութեան
մը խորէն կ'ըսէր այդ ձայնը.

— Արատազրեցէ՛ք ձեր անձը պատասխանատուութենէ. կը գնեմ
զայն... Կը մճարուի՛ս... Օփերայի յարմար, հրաշալի թէնորային է ձեր
ձայնը...

Աղջկան անուշ, թաւշային երգածայնը կը խառնուէր թաւին, որ բաւ
էր:

— Հրաշալի՛ է. ընդունեցէ՛ք, պարոն Քոմիթաս. ընդունեցէ՛ք հրաւե-
րը, հրաւե՛ր... ընդունեցէ՛ք...

— Ո՛ւ. ետիս դացէ՛ք. սատանաներ, — կը ճշար ձայն մը Կոմիտասին
հերոհէն:

Սօփրանօ ձայնը.

— Ինձի՞ կ'ըսես սատանայ. ինձի՞...

— Մեղա՛յ, մեղա՛յ քեզ, Աստուած, — կ'աղաղակէր ներքին ձայնը, որ
թէնորային էր:

Ալթօ ձայն մը խառնուեցաւ միւսներուն.

— Շնորհակալութիւն, պարո՛ն... Հա, Հա... յիշեցի. պարոն Կոմի-
տաս... հրամայեցէ՛ք մեզի... Կլարան քեզ կ'առաջնորդէ մեր տունը...

Սօփրանօ.

— Ափսո՛ս, ափսոս... ափսո՛ս...

Պահ մը եղաւ լուռթիւն։ Կոմիտաս առանձին էր, նոյն դիրքով։ Հիմա կու զային մտքին առջեւ տարած յաղթանակները։ Պոռացող ուսանանքներու խառնակ մեղեդին, երբեմն մշուշուած, տարտամ, երբեմն աղմկաբար, դռո՛ կը հետեւէր յաղթանակներուն։ Մաղկեփունջեր, ափկիններու փափիկ թաթեր, մարդոց լուրջ նայուածք «կեցցէ՛ք, հրաշալի էր»... Տիկնոջ մը համար՝ յոյս ապին... Կոմիտաս ափը քսեց այդ ափին. քակուեցան ընդունած դիրքին սիւները։ Ելաւ ոտքի։ Այս անդամ Զօպանեանի մեղմ ձայնն էր, որ կը յուշէր.

— Գացէ՛ք Պոլիս... Հոն քեզ թելերու վրայ կը պտտցնեն... կան դրականութեան շաստուածներ. Զօհրապ (մեծարդոյ փաստաբան), վարուածք... Սիւնեանքը եւ ուրիշ շատ շատեր...

— Այդ ե՛րբ էր, — հարց տուաւ ինքզինքին Կոմիտաս, երբ զդաց, թէ վերջիչումը հրուած էր ետ, իբր ժամանակներուն։ Զերքերը հեռացուց դէմքէն, աչքերը պաղպղան անյայտ կէտի մը։ Մտաբերեց ի վերջոյ օրը, ասորին։

— Այժմ կը գտնուինք 1909-ի Սեպտեմբերին մէջ։ Երկու տարի առաջ էր... Գանի՞ երկու տարիներ դեռ պիտի բոլորէին վրայէն, քանի՞, քանի՞... քանի՞...

Ձայնէն ամչցաւ։ Կղպեց շրթունքները. դէմքը փոքրացաւ. մարած աչքեր ունէր հիմա։ Քաշեց յետոյ աթոռը դրանդանին առջեւ ու շարադրեց իր հրաժարականը. ձեռքը չպնաց ստորագրութիւնը. դնել զիրին ներքեւ։ Պէ՛տք է քաշուէր ընդմիտ ինքնաճանաչման միջոցառութիւնէն։ Ձկա՛ր Հայոց Հայրենիք։ Ի՞նչ կը կապէր դինք վանքին։

Թաղթը կրակ դարձաւ ամբարձն տակ, այրեց կարծիս ձեռքերը։ Սըխալ եւ ապերախտ քայլ պիտի չըլլար առած քայլը։ Հոս գտած էր դուրգուրանք, սէր, քաջալերանք, նախապատուութեան դիմով առաջնել ընդունուած եւ պէ՛տք էր մնաք-բարով ըսէր այդ բոլորին, որովհետեւ թուամորթ, տըգէտ, անբան քանի մը մարդեր կային ներսը եւ կը պոռոքէին միտքը...։ Ի՞նչ ապերախտ, դիժ, անառակ որդին պիտի ուրանար մայրական կաթը եւ հայրական տանը վայելած բարիքը։ Գլուխը քարին խորթ եղբայրներուն. Բա՛յց...

Անկանքին հասցնելու պէս, իժերէն մէկը ըսաւ էր.

— Եթէ Կոմիտասը պիտի մաքեր շնորհանէր — «Սիրած եարը» չէր սորվեցներ աշակերտներուն. «Սօնա սիրուն, Սօնա եար»-ը բեմ չէր հաներ. «Սոսմարի բաց երեսը» հապա՛... անպայման պաղած է աղջկան թուշը. առանց կրակի ծուխ չ'եղեր. դիտցէ՛ք...։

— Ահա թէ ի՞նչ... ահա թէ ո՛ւր... ահա թէ ինչպէ՛ս, կ'արձագանգէին հոսկէ-հոսկէ։

Գիշեց. օր մը այդ պահերէն, այցի գնաց Մաշտոցի գերեզմանին։ Մութ էր նկուղը, շիրմաքարը հին, մաշած։ Գողթով լոյսի մը տակ մոմին, կրցաւ նշմարել քարացած հալոցքը մոմերու. դարերով կրկնուած համոյրի հետքերը, լոքած ծունկերու մաշոցը։ Հաւատք, երախտագիտութիւն, սէր, պաշտանք բազում դարեր դիզուած էին քարին եւ զայն խրած հողին մէջ։ Ետեւը թուամբ բարձրացած էր թզալափ։ Ու այդ անգին քարը դիմացած էր աւերիչ դարերուն եւ քանդիչ ձեռքերուն...։

Ինքն ալ ծնկած էր ու համարած քարը.

— Սիրելի Մեսրոպ, հա՛յր իմաստութեան. քեզ ալ հալածեցին միթէ մաքարիչանքը...

Կոմիտասին թուեցաւ, թէ խուցին մէջ շնչեկոց մը կար: Սուրբ Մեսրոպին ոգի՞ն էր եկած իրեն, այս նեղ պահուն: Մտիկ ըրաւ ականջները սըրած: Շնչեկոցը իր մէջէն էր:

— Հարց կու տաս, եղբայր Կոմիտաս, թէ տառապեցա՞յ, հալածուեցա՞յ... Ի՞նչ կարեւոր են տառապանքն ու հալածանքը: Բա՛ւ է, որ ժողովուրդէն սիրութիւն բա՛ւ է, որ ան քու մէջդ գտնէ իր բաղձանքներուն, յոյսերուն կատարողը...: Ըսին ու գատելով հաւատաց, թէ ես դրած էի իր գիրը, փրկած գինք ուծացումէ... դուն ալ ըրէ նոյնը: Գիր հայ մանուկին, գեղջուկին, ամէնուն բերանը քու երգերդ եւ տես, թէ ինչ է շրթունքներու պորուքինը ժողովուրդին...

Շնչեկոցը դադրած էր մէջը:

Կոմիտաս վարդապետին մէջ կը շարունակուէր մղձաւանջային երկունք-թիւնը: Մատներուն մէջ առաւ գիրը, որ շայրեց ձեռքերը: Աչքերը խրած հեռաւոր անցեալին մէջ, միմնջաց:

— Դո՛ւն, սիրելի ու պաշտելի Ուսուցիչը մեր, խօսեցար քու ժամանակներէդ մէկներով: Ունէիր զօրաւոր թիկունք: Արքայ եւ Կաթողիկոս. բանակ, նախարար, միաձոյլ ժողովուրդ. կար քու կողքիդ կանգնած... Իսկ ետ, Մաշտոց, մինա՛կ եմ... հոս: Գուցէ կեանքն ու պայմանները փոխուին, երբ անցնիմ Պոլիս... Մի՛ նեղանար, թէ սրտովդ չըլլայ փախու՛ւտս...

Կնոջական սօփրանօ ձայնը կրկին լսելի եղաւ ներաշխարհին խորէն.

— Ընդունէ՛ր օփերայի երգիչ դառնալը... կը փառաւորուէիր գիտականից աշխարհի մը մէջ. կեանքը կ'ըլլար հեղատա՛ւ... կ'ունենայիր սէր եւ զուգուրանք... ես քեզ թեւեր կու տա՛յի... կը թռչէինք միասին... կը թրուէինք միասին... ափսո՛ս, ափսո՛ս...

Կոմիտաս վարդապետ խելագար շարժումով մը ստորագրեց գիրը, իբրեւ պատասխան ներսէն հնչող ձայնին:

Իզմիրեան Կաթողիկոսը, համախորհուրդ միաբանական գործադիր մարմնին, պիտի մերժէր Կոմիտասին ներկայացուցած դիմումը. «Կը մերժենք հրաժարականդ Միաբանութենէն: Կ'արտօնուիս գործուղուիլ դէպի Օսմանեան մայրաքաղաք՝ Պոլիս, ընդառաջելով հոնկէ եկած դիմումին... Աստուած օգնական. ամէ՛ն»:

Տարեգրութեանց մէջ յիշուած է հետեւեալը.

«1910-ի գարնան արեւ-անմրեւ օր մը, Կիլիկիոյ Թորոս Լեւոնիի նման, երկու թիկնապահով՝ Կոմիտաս Կուտինացին ոտք դրաւ Ոսկեղջուրի ափին»:

Տարեգրութիւնը կու տայ՝ իրբեւ լուսաբանութիւն այս ղէպքին.

«1909-ի աշնան, Ղալաթիոյ դպրաց զասը, Պոլիսէն հրաւէր գրկած էր Կոմիտասին. ըստ ընդունուած կարգի, թոյլատրութեան խնդրանքով Կաթողիկոսէն: Պոլիսն ու գաւառները, կ'օրօրուէին այդ ժամանակները վառ յոյսերով: Եւրոպացի երկու բարեկարգիչներ, փոխ-արքայական տնտեսող իւրեան կը կարգուէին արեւելեան Անատոլիի (իմա՝ Հայաստանի) վրայ: Պոլիսը հայօրէն կը խեղդուէր. կը կանչէր Կոմիտասը, որ համերգային գինարբուքներով փառաւորէր դալիք արշալոյսը...»:

(Շար. 4)

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ԳԱՆՁԵՐ



Դու պանծացրու հիմա անցեալը պապերիդ,
Գուրգուրի, խնամիր հայոց պարտէզն,
Անշէջ պահիր նրանց կանթեղը լուսաշող,
Փարուիր կանթեղին վառ, քիթեռի պէս:

Նրանց երկունքն է այդ բիրաւոր դարերի
Սիրոյ եւ հաշտութեան շշուկէն հեզ,
Հայրենի կարօտի արցունքները աղի,
Աշխարհը ողողող հեղեղի պէս:

Դու պանծացրու հիմա անցեալը պապերիդ,
Յիշատակը նրանց պահիր անմահ,
Եւ նրանց մտքի քերքն՝ ոսկեղէզ դարերի
Թող մնայ մոռիդ մէջ յաւերժ անմար:

Ա Ի Ե Ր Ա Կ Ն Ե Ր



Սրտիս պալատը անք է հիմա
Էլ չկայ այնտեղ քոչունը կապոյտ,
Կորել եմ յաւէտ արդ ու գարդն իմ տան
Աւերակ է այն՝ դարձած մոխրակոյտ:

Իմ ապարանքն տունն էր յոյսերիս,
Վառ տենչանքներիս տանարը լուսէ.
Իմ ապարանքն՝ վայրը յոյզերիս,
Որտեղ նրբահիւս իզձեր էր հիւսուել:

Աւերուեց բախտն իմ, հեշտ էր ամէն ինչ,
Ամէն ոք դովեց իր ռոքը այնտեղ,
Ամէն ոք շարժեց բազուկը ուժգին
Եւ շէնքն իմ եղաւ հաւասար հոգին:

Որտեղ է՞ք հիմի իմաստուն մտքեր,
Ձեռներ առնական, ջլապինդ, բարի,
Որ ամէն մէկդ շտապ ու արագ
Յոյսերիս շէնքին մի աղիւս շարի:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐԵՒԱՆ... ՓՐՕՊԼԷՄԱՐ

Ո՛չ, Հայր Ամսոն, ինձ զինե՛ղ կը խաբես. ծանօթ ես տխուր կացութեան
 եւ կը ջանաս ազաւազել ճշմարտութիւնը: Պուտափէշտի առաջնորդական սե-
 ղանիդ ետին նստած՝ քառասուն երկար վայրկեաններ հեռաձայնով ի գուր
 յիտրածցիր հայ մը գտնել. ոչ ոք գտար, բացի հիւանդ հայ մամիկէ մը, որ
 դժուարաւ կը հասկնար մայրենի լեզուն: Դարձեալ ստեցիր, ու ըսիր, թէ
 «ամառ է, բոլորը մեկնած են Պուտափէշտէն»: Անգամ մը եւս ուզեցիր հա-
 ւատացնել ինծի, թէ փոքր, սակայն ապրող հայ համայնք մը գոյութիւն ու-
 նի Պուտափէշտի մէջ: Զնաւասացի. ժպտացի միայն ու մտածեցի՝ քու
 օտարութիւնդ հայերէնիդ մասին, որ դժուարաւ դուրս կ'ելլէր դողդոջացող
 շրթներէդ: Ո՛ւր է մեր հեգհասաւ ու բիրեղեայ հայերէնը, Հայր Սուրբ:
 Դո՛ւն, որ Հունգարիոյ հայ համայնքի հոգեւոր պետն ես, որ Semmelweis փա-
 դացի թիւ 9 շէնքի հիմքերուդ յարկը մատուա մը ունիս. դո՛ւն, որ իբրեւ հո-
 գեւոր առաջնորդ, ակերտույ մէջ թռնած պէտք է ըլլայիր համայնքի մը թե-
 յերը, դո՛ւն հոգեվարքի մէջ ապրող դատապարտեալի մը պէս կը տապալակիս
 դիմացս: Դուն պարտեալ մըն ես, Հայր Ամսոն. իսկ ես՝ հայու թեկոյ մը,
 որ այս պահուս նստած դիմացդ՝ միասին «հայապահպանում» կը խաղայ:
 Զենք ուզեր ընդունիլ, թէ պարտուած ենք: Միծաղելի է մեր այս յիմար խա-
 ղը: Քիչ առաջ ըսիր, թէ ժամանակին եօթանասուն հազար հայեր կ'ապրէին
 Հունգարիոյ մէջ. հպարտօրէն պատմեցիր անոնց կատարած նուաճումներուն
 մասին: Քու միամիտ հպարտութիւնդ միտքուեցաւ սրտիս մէջ ու ցաւ պատ-
 փառեց. կարծեցի՝ քեզ տեսնել փառանքալ պատմութիւն մը ունեցող եիմ պա-
 յատի մը աւերակներուն վրայ կանգնած. կանգնած միեւնոյն միամիտ հպար-
 տութեամբ, աչքերդ գէպի երկնք, սակայն, տոբերուդ տակ աւերակներ ու
 անօրոյ մարմիններ...: Զուգեցի այլեւս շարունակել այդ կատակերգութիւ-
 նը, որ ողբերգութիւն կը բուրել ու քրտօրէն գոչեցի. — ճեր խանդավառու-

քիւմը կը սեղմէ տիրտա, Հա՛յր Ամսոն: Խնդրե՛մ, մի խօսի՛ք անցեալի մա-
սին. որքան մեծ ու պանծալի, այնքան տխուր ու դժբախտ է անիկա, երբ
այսօր ոչինչ է մնացած եին փառէն:

Խօսեալու հանելի չէին ժգի, գիտեմ. դուն կը փափաքէիր, որ թեզ ձգէի
անցեալի պանծալի օրերու օրօրին մէջ: Աչքերդ հեռացուցիր երագներէդ ու
ես տեսայ, թէ ինչպէս մեղմ նայուածքիդ վրայ մտահոգութիւնը իջաւ յան-
կարծ: Զայրացկոտ նայեցար ինծի. բրբռած էի կրակը, պատուած էի մեք
միջեւ գոնուող կեղծ վարագոյրը: Հաւո էի. կը սպասէի, որ դո՛ւն ըլլայիր
առաջին խօսողը: Երկար տնեց լռութիւնը: Կը դիտէի թեզ, Հա՛յր Սուրբ,
կը զգայի հոգիիդ խռովքը, անկարողութեանդ մեծութիւնը, մեր իրականու-
թեան դժբախտ բարդոյթը: Կը զգայի, սակայն կը սպասէի, որ բան մը ը-
սէիր դուն. բան մը, այսպէս, խրախուսիչ, երջանկաբեր. ըսէիր խօսք մը,
որ կարենար վերականգնել այդ վայրկեանին փոփոխ մերաշխարհս: Վերջա-
պէս խօսեցար. ու անկարող, դժբախտ եւ կորսուած մարդու մը խեղճու-
թեամբ շշմեցար:

— Ի՞նչ կրնամ ընել, տղա՛ս, յորձանքը գորտար է:

Յնցուեցայ. այսպէ՛ս ուրեմն: Մեր հոգեւոր պետը չ'ուզեր մտածել
հիգի մասին:

— Դուք միայն մէկ գործ ունի՛ք ընելիք այս քաղաքին մէջ, Հա՛յր
Սուրբ, — համագել բոլոր անոնք, որոնք տակաւին հայ կը զգան ինքզինքնին.
համագել, որ կապեն պայուսակները եւ մեկնին հայրենիք: Հոն, Արարատի
շուքին՝ անոնց տիրաւ պիտի մտքաւի օտարտի բարդոյթներէ:

Կը կարծէի, թէ անվիճելի մշտնադաւանքին մըն էի ըսած ժգի, Հա՛յր
Ամսոն. սակայն դուն չախորժեցար խօսքերէս ու թշնամական նայուածք մը
նետեցիր վրաս: Զուգեցի նահանջել ու յամառօրէն կրկնեցի.

— Ուրիշ ընելիք չունի՛ք:

Զայրացկոտ նայուածքով անգամ մըն ալ նայեցար ինծի ու ելար ռո-
քի. հասկցայ, թէ վերջ կ'ուզէիր դնել մեր տեսակցութեան: Եւայ ճաշի. ու
դուն խորհրդաւոր շեշտով մը ըսիր.

— Հոս Աստուծոյ տունն է, երիտասարդ, մի՛ մոռնար:

Հասկցայ խօսքիդ իմաստը ու ժպտեցայ դառնօրէն. այո՛, մատուռդ
Աստուծոյ համար էր շինուած, եւ ոչ թէ հեռաւոր հայրենիքի պաշտպանման
համար: Ձեմ գիտեր, արդեօք զգացի՞ր հոգիիս խռովքը, թէ անկուս մը լսե-
ցիր սրտիդ մէջ ու նախընտրեցիր խուսափիլ նայուածքէս. ուղղուեցար դէ-
պի դուռ ու բացիր գայն: Զուգեցի համբարել աջդ, չուզեցի յարգանքի դաշգն
արտայայտութիւն մը ունենալ. նախընտրեցի օտարի մը պէս բաժնուիլ թեզ-
մէ: Փախա՛յ... ու վիրաւոր շան մը պէս սկսայ իջնել այն աստիճաններէն,
ուրկէ ժամ մը առաջ սրտատրոփ եւ դէպի խորան յառաջացող հաւատացեալի
մը յուզումով կը բարձրանայի:

Հասած եմ փողոց. մայրիկ վրայ՝ շփոթած կը սպասեմ. վիրաւոր շուն
մը կը կաղկանձէ մէջս. կատարած ցուլ մը՝ իր անկարողութեամբ տեղհայլ
կ'ընէ սրտիս մէջ. չեմ գիտեր որքա՞ն հայեալեմ, որքա՞ն...

Կը քալեմ, կ'անցնիմ դիմացի մայրք աւ հարիւր մեքր յառաջանալէ
ետէ՛ք կը կենամ ինքնաշարժի կայանին մօտ: Ինքնաշարժ չկայ. պէտք է ոպա-
սել: Կը դիտեմ անցորդները, մեծ հրապարակի լոյսերը, ու խնդումս մտքիս
հանգիստ տալու միտումով՝ կը սկսիմ ռուսմասերի դիմացի շէնքին ճար-
տարապետութիւնը: Մասնաւոր ոչինչ ունի այդ շէնքը. անհրապոյր ու սեւ-
ցած պատեր, մեծ դուռ մը, ճրտուն մօտ դռուած ցուցատախտակէն կը հաս-

կըմամ, թէ հոն կը գտնուի Ազգային Երաժշտանոցը. մեծ դրամ միւս կողմը կան խանութներ, որոնք փակ են գիշերուայ այդ ժաման: Բաց է միայն վերջին խանութը. կը բարձրացնեն մայուածքս դէպի ցուցատախտակը ու կը ցնցուիմ... «Երեւան»:

Պուտափէշտի հայոց եկեղեցիէն յիսուն մեքր հեռու ցուցատախտակ մը կայ, որուն վրայ գրուած է «Երեւան»: Միտս կը բաբախէ արագ. ուրախութիւն, զարմանք եւ յագում գիրար կը հրմշտկեն: Այլեւս կարելի չէ սպասել ինքնաշարժի կայանին մօտ. կը ձգեմ սպասողներու շարքը ու կ'անցնիմ համբուն միւս կողմը: Մտքիս պաստառին առջեւէն արագօրէն կ'անցնին հարցական մտածումներ. հայ հին գաղութ, հայրենաքաղաքիւն, ակումբ, համալսարան, հայ կեդրոն... այս բոլորէն ո՞րն է արդեօք այդ անունին ծընունդ տուողը...:

Պահ մը ետք «Երեւան»ի դրամ առջեւն եմ ու հետաքրքրութեամբ կը նայիմ դէպի ներսի մթաթիւնը: Համագտեստաւոր դաժնապանը՝ ժպիտը դէմքին՝ քաներ մը կը մթաթալ: Ձեռն հասկնար ու կը մտնեմ ներս:

Չորս փոքր սեղաններ. դիմացը պահ մը՝ հինգ բարձր աթոռներով...: Կէս մթաթիւն ու խոնավութեան հոտ մը...: Երկու կարմիր լոյսեր ու մէկ դեղին լամպ...: Սպասող հինգսն աղջիկներ... կեղծ ու զգուշիկ ժպիտներ... ալեւի բուրում, ծուխ ու կոտորուած ծիծաղ... տպաւորուող ակերտ ու սպասող մերկ սրտնեմներ... խոնավ շրթունքներ, ու տակաւին...:

Այս է «Երեւան»ը:

Կեցած եմ շրթաշուրտ ըմբոստի մը պէս. շտաբեր կը մերժեն շարժիլ. կ'ուզեմ պոռալ, կ'ուզեմ բան մը կոտորել...: Ինչո՞ւ այս վերաւորանքը, Աստուած իմ: Ինչո՞ւ այս վիճակին եմ հասցուցած Երեւանը: Ուրիշ անուն չկա՞ր...: Բոլոր աստծոյ մը, կենդանիի մը կամ ծաղիկի մը անունը դնէի...: Ուրիշ անուն չկա՞ր...:

Կակուղ միսի հոտ մը կը գգամ արմուկիս վրայ. աղջիկ մը մտած է բէս ու կ'առաջարկէ ինծի մտնել ներսի սենեակը: Յանձնուած մտածումներու ու աղջկան՝ կը մտնեմ ներս ու կը նստիմ անկիւնի սեղանին մօտ: Վարժ սպասեակը շուտով կը քերէ խմիչքները: Մտածկոտ եմ: Աղջիկը գիւ «ամէնպէս» դասելով՝ կը շոյէ ծածրակս ու իր խոշոր ծիծերու տաք հպումովը կ'ուզէ «մթնոլորտ» ստեղծել: Կը մայիմ աչքերուն ու դառն ժպիտ մը շրթներուն՝ կը շնորհակալ:

— Երեւան...:

— Երեւան, Էօ՛ւ... — կը պատասխանէ աղաչական ու կեղծ խաղաղապետական լի արտայայտութեամբ մը:

Կը հասկնամ իր խօսքը. «Երեւանը լաւ է», կ'ըսէ: Կը խօսի, կը ժպտի ու յանախ կը կրկնէ «Երեւան» բառը: Ու յանկարծ հարցում մը. կը շփոթիմ. կը հասկնեմ, թէ հունգարերէն չեմ գիտեր: Կեղծ զարմանքով մը կը նայի ինծի ու իր գիտէն խանգարուի՝ կը գոչէ.

— Իթալիան...:

— Նո՛ւ, հօրմէնի:

Կը կարծեմ, թէ հայ ըլլալս տպաւորութիւն պիտի գործէ «Երեւան»ի մէջ աշխատող աղջկան վրայ. սակայն ան չի հասկնար «հօրմէնի» բառին իմաստը. ան լսած չէ այդ մասին:

— Երեւան... Էօրմէնի՛, — կը կրկնեմ, խորհելով, թէ պիտի հասկնայ, որ այդ երկու բառերը կ'ամբողջացնեն գիրար:

— Երեւան, Էօ՛ւ... — կը կրկնէ արհեստավարժ պոռնիկի կոտոր-

տուգնեցնել և ձայն քերել կ'անցնեն թերիս ու այժմ տեղով կը սկսի շոյել ծունկըս։ Նայումաճքը սեւեռած աչքերով փառաշաղկապ խօսքեր կը շնչեցայ։

Այն, խոնք աղջիկ, չես գիտեր, թե ի՞նչ փոթորիկ կայ ներսս, ի՞նչ տառապանք, վիրաւորանք, հոգեկան անկում...։ Ձեռ գիտեր, թե ինչպէ՛ս կը մտնէ քու տաք թերթուք մէջ ու կ'ուզեմ տուն դառնալ այս պահուս, բլլալ ի՛մ շրջապատիս աղմկոտ ծիծաղներուն ու հոգերուն մէջ, բլլալ հայրենակիցներուս կրիւմներուն, վեհերուն ու հայեայնաբաններուն մէջ...։

Կը վերցնեմ իր շոյող ձեռքը ու կը դնեմ ծունկիմ. կը շտկուիմ աթոռիս մէջ, մէկ ումպով կը պարպեմ խմիչքի բաժակս. կը շփեմ ճակատս, կը փակեմ աչքերս. Հայր Ամենք՝ իր շփոթած դիմագիծովն ու փլփլած մատուռովը կը ցցուի փակ նայումաճքիս դէմ։

— Փրօպէ՛տա՞...։

Աղջիկն է. նշմարած է անբնական վիճակս եւ կ'ուզէ ծանկնալ, թե ի՞նչ է գիտ չարչրկող «ծարցը»՝ «փրօպէ՛տա»-ն։ Կը նայի՛նք իրարու։ Իրեն համար ես ամենազոժուար յանախորդն եմ անկասկած։

— Փրօպէ՛տա՞...։

— Ես՛, Փրօպէ՛տա՛, — կը շնչամ դողդղացող ձայնով մը, — փրօպէ՛տա՛...։ Երեսնա՛ն Փրօպէ՛տա՛...։

Հասարակ ու գոհիկ խնդուհով մը աղջիկը կը փլի վրաս. չի կրճար դալի խնդուհը. անկասկած անիմաստ կը զտնէ խօսքս. «Երեսնա՛ն... ֓րօպէ՛տա՛...»։ Իրեն համար երբեք հարց չէ եղած «Երեսնա՛ն»-ը. իրեն համար «Երեսնա՛ն»-ը արհեստանոց է, եկամտակա աղբիւր է, վաւաշտոններու ու պոռնիկներու ժամադրաւայր է...։

— Երեսնա՛ն... փրօպէ՛տա՞...։

Կը խնդայ, կը խօսի, գովէր կը հիւսէ իր «Երեսնա՛ն»-ին։ Ու «Երեսնա՛ն»-ի գովքին զուգահեռ՝ աղջկան ձեռքերը կը սահին կոյրծէկս վար. կ'ուզեն իրենց փորձառու խաղերով արագացնել միտի օակարկութիւնը։ Կը խօսի դրամի մասին, իր գինին մասին։ Կը հասկնամ ու կը ժպտիմ չարութեամբ։ Կը խանդավառուի ժպիտէս ու կեզծ անհամբերութեամբ մը կը շնչեցայ։

— Եօօօն վէ՛լէ՛ժ... սօպա՞...։

Սօպա՞...։ յստակ է. կ'ուզէ իր սենեակը սանիլ գիւ ու վերջացնել այս գործը, իսկ ես չարացած եմ։ Ամբողջ դառնութեամբ վրէժը կ'ուզեմ առնել այս խեղճ մականոյտէն, որ դիպածով մը ինկած է «Երեսնա՛ն»-ի մէջ։ Շնական ժպիտ մը դէմքիս՝ կը նայիմ իրեն. չեմ խօսիր. կ'ուզեմ, որ ան յոգնի, բրտնի, նեղուի, զգայ, թէ ապարդիւն եմ իր նիգերը. կ'ուզեմ տեսնել իր պարտութիւնը, գայլոյթը, կ'ուզեմ, որ ան փշրուի գիմացս...։ Այո՛, չար եմ դարձած, ու այդ տկար արարածին վրայ կ'ուզեմ վատորէն քափել հագեկան վիրաւորանքիս ամբողջ գայլոյթը...։

Յուսանաւորութիւնը արդէն իսկ գծուած է իր դէմքին վրայ, որուն շատով կու գայ միանալու քեքեւ գայլոյթ մը։ Ես փարացած եմ իմ շնական ժպիտովս ու կը դիտեմ իր աստիճանական փայլայտմը։ Այլեւս հասկցած է, թէ ես «յանախորդ» չեմ։ Գանգատելով կը հեռանայ, մօտէս, կը նստի պատ-ի աթոռներէն մէկուն վրայ ու չղայնացած՝ կը սկսի խօսիլ ընկերուկի մը եետ. հեռուէն գիւ ցոյց կու տայ ու կը գայլաւայ ամտարբեր ու անբնական վիճակս տեսնելով։

Կը կանչեմ սպասեակը, կը վճարեմ, եւ աղջկան այսպանական խօսքերուն տակ՝ դուրս կ'ելլեմ «Երեսնա՛ն»-էն։

Օգոստոսի տկար անձրեւը մեղմօրէն կ'իջնէ Պուտայիշտի հանգարտ ու լուսաւոր ճամբաներուն վրայ: Կը փայտմ: Ո՛հ, ինչ լաւ է անձրեւը, ի՛նչ հաճելի է իր զով շոյանալը: Կը նայիմ մութ երկնքին: Քոյլ կու տամ, որ զով կաթիլները աւելի հեշտօրէն շոյեն դէմքս. այո՛, պէտք ունիմ անոնց խոնաւութեան: Սիրտս ուռած է. շրթներս կը դազան ու կը շշնջան:

— Երեւան... *փրօպէճա՛մ*....:


Փրօպէճա՛մ... եւ ի՛նչ *փրօպէճա՛մ*, Աստուած իմ, անլոյծ ու դարաւոր *փրօպէճա՛մ*, արհմտ ու անբոյժ *փրօպէճա՛մ*, Ո՞վ է անիծեր մեզ ու իբրեւ խաչ մեր ուսին դրեր այս *փրօպէճա՛մ*-ն...: Փռասեղ պատմութիւն, զազաւք, հպարտութիւն, յաղթանակ... ու ապա, խարխափում, այլասերում, փայփայում, հագնվարձ... ու *փրօպէճա՛մ*....: Դեռ դար մը առաջ՝ եօթանասուն հազար հայ, իսկ այսօր մի քանի հայու անուն, հիւանդ հայ մամիկ մը, «արժակուրդի մեկնած հայեր», Հայր Անտոն մը՝ մեծակեաց, ընկճուած, անկարող. աներեւակայելի «Երեւան» մը... ու *փրօպէճա՛մ*... հսկա՛յ, անլոյծ *փրօպէճա՛մ*....:

Կը փայտմ այն ճամբաներէն, ուրկէ անցան անոնք...: Կը փայտմ կորսւած ու անյոյս դատապարտելի մը հագնվիակը սեղմած կուրծքիս տակ...: շուն մը կը կաղկանձէ...: ցուլ մը կը տապալի գետին...: անէծք մը շրթներուս, աչքերս կը բարձրացնեմ ու դարաւոր հարցականը կախուած կը տեսնեմ երկինքէն...:

— *Փրօպէճա՛մ*....:

ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ





ՀԻՓՓԻՆԵՐՈՒՆ ՈՐՈՆՈՒՄԸ

Une génération ne peut vivre sans cause.
Quand les dieux d'hier ont cessé de lui
parler, elle en invente d'autres.

PIERRE DE BOISDEFRE

Վերջին տասնամյակին, արեւմտեան աշխարհի ընկերային ամենահաջողակա՛ն երեւոյթը անկասկած երկփնմբու յայտնութիւնն է, որ պահ մը իր վրայ հրաւիրեց ամէնուն ուշադրութիւնը եւ ահագին մէջան հոսեցուց: Զգայացունց լուրեր հաղորդելու հակամէտ թղթակիցներու միայն նիւթ չհայթայթեց այս երեւոյթը, այլ ծանոթութիւն բազմաթիւ անձեր, Արեւելոյ թուրքի պէս հոշակաւոր պատմաբաններ, իսկար Մորէնի պէս անուանի ընկերաբաններ եւ փէր տը Պուլաւիթի պէս ծանօթ քննադատներ քննեցին Հիփփոկան շարժումին ծաւերը, բուրքովին բնական զանեւով նոր այդ հասարակութեան ծնունդը:

Հիփփոկան շարժումը սկսաւ Միացեալ Նահանգներուն մէջ, բայց իր հետեւորդները ունեցաւ արեւմտեան կիսագունտի բոլոր երկրներուն տակ եւ յատկապէս Անգլիոյ մէջ, ուր հարիւր հազարաւոր աղաք ու աղջիկներ, ամերիկացի իրենց զաւաճարակիցներուն պէ՛տ՝ յաճախէի ցոյցեր կը կատարեն, կը խոնդին հրապարակներու վրայ ու հանրային պարտէզներու մէջ, զրահուրելով իրենց զիրենց Հիփփոկան բուրք միջոցներով, սէր քարոզելով, ծաղիկ բաշխելով, երգելով, պարելով, քանաստեղծութիւն կարդալով կամ փողոցներուն մէջ զինովնալով:

Յաճախ կ'իսամերկ, երբեմն սոից զլուր հագուած, հերարձակ, մօրուսուոր, անհոգ, արտաքինապէս վերին աստիճանի թափթփած Հիփփոկան հասարակութիւնը բաղկացնող այս աղաքն ու աղջիկները՝ ընկաղուրկներու անձուկ պայմաններուն մէջ երկարօրէն խմորուած եւ բնախոտական պահանջներու մղումով յանկարծօրէն հրապարակ եկած աղաքն ու աղջիկներ չեն, ընդհակառակն, անոնք զաւակներն են հարուստ խաւին, կու գան պերճաւոր յարկերէ, հանգստանալու թանձրազօյն պայմաններէն եւ այս հանգամանքին մէջ է արդէն յեղափոխական իրենց առանձնայատկութիւնը:

Տրուած է իրենց դիւրակեցութիւնը, բայց դիւրակեցութիւնը երջանկութիւնը չէ

տակաւի, ու երկնկութեան ծարաւի չիփփինները ա՛յդ իսկ պահանջէն տարուած՝ բաւ էր թոթուեն արդէ ընկերութեան դէմ: Ինքնաւարժը, շարժապատկերը, դունաւոր պատկերապիւրը, արդէ ընկերութեան միւս հրաշայիցներէն եւ ո՛ր մէկը ո՛րեւէ նպատակ չի բերեր իրենց տաղանդներուն շուծման: Այդ ամէնուն մէջ, մօտը, հիմազը կը մտնէ իրենց հողին, կը խորանայ մտառանջութիւնը, կը քաղմանան դարձեալ կեանքի, առանձնութեան, անվերաթեան ու մահուան դասական հարցականները: Ձոր ծխակատարութիւններու վերածուած հրօնները այլեւս ոչինչ կ'ըսեն այդ ամէնուն մասին, վարդապետութիւնները ոչինչ կ'ըսեն այս սերունդին, որ հրապարակ իջած է պոռալու համար իր յուսահատութիւնը:

— Թերեւս, — կ'ըսեն անոնց երէցները, — դուք իրաւունք ունե՞ք դատապարտելու մեզ, մեր ապրելու աճն ու խնայելները մենք քան մը շնն արժեք, յայց դուք ինչպէս կ'ըմբռնե՞ք կեանքը, մեր եղանակներուն դէմ՝ ի՞նչ է մեր առաջարկած լուծումը: Կեանքի ի՞նչ նոր մէկ կարծէ՞ք, որ պիտի իրադարձե՞ք: Վերջապէ՞ս՝ «What do you want ? Where are you going ? What will you do ?

Գրուած հարցումներուն յատկ պատասխաններ չունին չիփփինները: Քիչնք պարզապէս կ'ուզենք կեանքը ապրել, կ'ըսեն անոնք, ա՛յս է ամէնը: Աշխատիլ ապրելու համար եւ ոչ թէ ապրել՝ աշխատելու համար, ինչպէս ըբած են, կ'ըսեն իրենց հայրերը, դրամ դիզելու հնգրին մէջ մոռնալով կեանքը, կեանքը վերածելով պաղ կամ տաք դոսիքի, ապա ո՛ր բախումներու եւ աւերիչ պատերազմներու անսկիզբ ու անվարձան կրկնէ ո՛ր մը: Ապրել՝ Այս է, որ կ'ուզեն չիփփինները: Սերէլ, հղբայրանալ աշխարհի հետ, կեանքը դարձնել ինքնուր իրաւունքներու երթաւորութիւնը փողոց կը հրաւիրուի (Ձիւստան), կամ առանց հրաւիրել կ'իջնէ փողոց (Ձիւստան) բրտութիւններ ի գործ դնելու համար, Ամերիկայի յեղափոխական չիփփինները կը խոնարհ հրապարակներու վրայ իրենց նողկանքը յայտնելու համար ամէն մեկ թանութեան դէմ եւ սիրոյ ու հղբայրութեան հրաւիրներ կ'ուղղեն ամէնուն, կ'սկսեն խնայելով դրամին, մեքենաներուն ու մեքենայութիւններուն մէջ կարծրացած սրտերը:

Որգան արտառաջ թուին անոնք, ըլլան կիսամերկ, մերկ, Թլուստ, Թուին դրութեան արժանի, խմեն միջին արեւցում, զուհակման փողոցներուն մէջ, նաղբանկարային մեկեր անոնք, ծաղրանկարային մեկերու մէջ ներկայացնեն աստուածները, որքան ալ սուրբ տուած ըլլան անընդունելի ծաղրանկարութիւններու, այսօր այլեւս հաստատուած փառս է, որ չիփփինները նոր ոգի մը մուծեցին ամերիկեան կեանքի ոգին մէջ:

Կարգապահ, մեքենայացած, դործարաններու զոտիքին կեր, երկնաքերներու սառուցեալ առանձնարաններուն մէջ ներքին բովանդակութենէ պարզուած, տաղարային հրադեղու մէջ թուարանութեան վերածուած կեանքը չիփփինները բերին փողոց եւ սկսան հեղեղել նկարչութիւնը՝ մայթերուն վրայ, երամաշութիւնը՝ հանրային պարտէզներուն մէջ ու բանաստեղծութիւնը՝ բաց երկնքին տակ:

«Անրունգ մը, — կ'ըսէ Փիէր Կոստանթին, — չի կրնար ապրել առանց իսկալի՝ Երբ երէկուան աստուածները դադրած են իրեն խօսելու, ան կը ստեղծէ նոր աստուածներ: Հիփփիններն են, որ ստեղծեցին այդ տպաւորութիւնը ու չիփփինները կը շարունակեն որոնել իրենց նոր աստուածները:

Այս հասարակութիւնը ունիցաւ նաեւ արուեստագէտ ներկայացուցիչներ, որոնց մէջ արդէն դասական հնգրնակ է դեռ նոր մեռած վիպասան Ժապ Բերուաքը եւ փնտռուած աշուն է բանաստեղծ Ալէն Կինզպէրկը:

Ժապ Բերուաքին նուիրուած Ս. Սանիեանի կարճ դրութեան կողքին, Քեպլինը-ի խմբակին անլամբերէն երէքը՝ Սօթի Եսկոբեան, Հնապեղ Տէր Սարգիսեան եւ Գեար Զիւսպեան, դարձեալ Քեպլինը-ի խմբակիցներէն աշխատակցութեամբ՝ կազմեցին յիշեալ երկու դէմքերուն մասին խօսող շարք մը դրութիւններ, որոնք բաւարար դադարաւ մը կու տան լիք դրականութեան մասին:

ՋԱԿ ԲԵՐՈՒԱԿ

JACK KEROUAC

(1922 — 1969)



Հոկտեմբերի 21-ին, Փյոթիդայի Սենթ Փիթերսբուրգ քաղաքում, 47 տարեկան հասակում մահացավ Ամերիկայի նորագոյն գրականության մէջ նոր դպրոց հաստատած, այսպէս կոչուող «բիթ» գրականութեան հիմնադիր՝ վիպասան Ջակ Բերուակը:

Եթէ Ջակ Բերուակն աւանդական գրականութեան հետևորդ լինէր, թերեւս նա անձանոթ մնար միջազգային դրական շրջանակներին, բայց ասացինք, որ նա «բիթ» գրականութեան հիմնադիրն էր եւ որպէս այդպիսին մեծութիւն էր:

Սակայն, անկարելի կը լինէր հասկանալ Բերուակի գրականութեան արժէքն ու նշանակութիւնը, եթէ մենք չձանոթանանք «բիթ» բառի իմաստին:

«Բիթ» բառն անգլերէնում բազմաթիւ իմաստներով է դործածուած: Սակայն, Բերուակն այն դործածեց իր ցանկացած իմաստով եւ այդտեղից էլ ըստեղծուեց «բիթ ջենըրէյշն» կամ բիթ սերունդ գարծուածքը:

Հայերէնով եւ նոյնիսկ անգլերէնով «բիթ»-ի իմաստը մէկ բառով բացատրել անհնար է:

Ըստ հանգուցեալ Բերուակի, «բիթ սերունդն» այն սերունդն է, որը պարտւած է զգում իրեն կամ զրկուած: Եթէ «բիթ» բառի վրայ աւելացուած է ռուսական «եիկ» վերջածանցը, ստացուած է «բիթնիկ» գոյականը, որը նշանակում է մէկը, որն անզամ է «բիթ սերունդին» կամ հետեւում է այդ սերունդի ուսմունքին: Իսկ «բիթնիկներն» այսպէս կոչուող աշխարհահայեացքն է մերժել մարդկային աւանդական վարքը եւ ընկերային հասկացողութիւնները:

Բիթնիկները չեն սափրուած, չեն յարգարում իրենց գլխի մազերը, իրենց հագուստի եւ հանուելու վրայ ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում եւ ընդհանրապէս արհամարհում են այն հասարակութեան, որի ծոցում ապրում են, ընդունուած այն բոլոր պահանջները, որոնց ընդունուած է վայելչութիւն ան-

ւանել: Բացի դրանից բիթնիկները հաստատել են կեանքի վերաբերեալ իրենց ուրոյն փիլիսոփայական ճշմարտութիւնները:

Այսօր այդ բոլորը նորութիւն չեն եւ ոչ ոքի չեն զարմացնում: Բայց այդպէս չէր, երբ 1957 թուին լոյս տեսաւ Զակ Քերուակի «Ճանապարհին» խորագրով վէպը:

«Ճանապարհին»-ը ցնցում առաջացրեց:

Ամերիկացի ընթերցողներն առաջին անգամ լինելով այդ վէպով էին հիմնաւորապէս ծանօթանում բիթնիկների կեանքին, նրանց զաղափարներին, նրանց փորձերին՝ պտնելու ընկերային ճշմարտութիւնը:

Ընթերցողներին զարմացրեց նաեւ այն անդունդը, որ բիթնիկները բացել էին իրենց եւ ընդհանուր հասարակութեան միջեւ: «Ի՞նչ» սերունդը ինքնուրոյն «հասարակութիւն» էր ընդհանուր հասարակութեան մէջ: Նրանց սերունդն ամբողջովին հրաժարուում էր կամ մերժում աւանդական հասարակութեան հիմք կազմող ընդունուած ճշմարտութիւնները ընտանիքից մինչեւ փողոց, մինչեւ պետականութիւն:

«Ճանապարհին» վէպը ոչ միայն նորութիւն էր իր բովանդակութեամբ, այլեւ իր դրելամեթոդով: Գրելու աւանդական ձեւերից ոչինչ կամ համարեա՛ր ոչինչ չկար այդ գրքում:

Վէպն իր կառոյցով թոյլ էր եւ զրբւած էր ընդարձակ նախադասութիւններով: Ոճն անհարթ էր եւ կարդացւում էր դժուարութեամբ:

Գիրքը քննադատուեց, բայց ընդունեց դրական շրջանակների եւ ընթերցողների կողմից:

«Ճանապարհին» վէպով, առաջին անգամ լինելով համաշխարհային գրականութեան պատմութեան մէջ սկսուեց «բիթ գրականութիւնը»:

Զակ Քերուակն ունեցաւ եւ դեռ շարունակում է ունենալ իր գրող աշակերտները, բայց դրանցից ոչ մէկը դեռ չի կարողացել հասնել ու դերազանցել իր վարպետին:

Ինքը՝ Քերուակն էլ իր հետագայ ստեղծագործութիւններով չկարողացաւ դերազանցել իր իսկ «Ճանապարհին» վէպին, որն այսօր հանդիսանում է «բիթ» գրականութեան դասական նմուշը:

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ



**ԺԱԳ
ՔԵՐՈՒԱՔԻ
ՃԱՆԱՊԱՐՀԸ**



«Գիրքերով խնդրում երկար դարակ մը պիտի ձգեմ եւ գոհ պիտի մեռնիմ», կը յայտնէր մեզի Ժազ Գերուաք իր «Պիկ Սըր» (Big Sur) հատորի նախաբանին մէջ։ Այս յայտարարութիւնը կը կատարուէր 1962-ին եւ եօթը տարի ետք հեղինակը կը մեռնէր՝ 47 տարեկանին։

Իր կեանքի իրիկնամուտին, Գերուաք կ'երազէր ձեռնարկել իր ամբողջական երկերուն հրատարակութեան, «տալով, — կ'ըսէր մեզի, — իմ անձնաւորութիւններու այն անունները, զորս նախապէս արձան էի տալ անոնց»։ Տեսակ մը «մարդկային կատակերգութիւն», որ կ'ուզէր կատակել մեզի, իր հաւատալիքները, բարեկամներն ու ճամբորդութիւնները ներկայացնող տեսակ մը «Ժազ Գերուաքի ատասպել», որովհետեւ կը գիտակցէր, թէ իր բոլոր գիրքերը կը կազմեն մէկ եւ նոյն դիւցազնավէպը։ «Այս ամբողջութիւնը կը կազմէ հսկայ կատակերգութիւն մը, այնպէս՝ ինչպէս տեսած է թի Ժան (ձեր ծառան), ճանչցուած նաեւ Ժազ Տիւլիօզ անունով։ Ներկայացուածը հեռարձակ աշխարհ մըն է, սուտերու աշխարհ մը, բայց նաեւ մեղմ եւ սիրելի, զոր կը տեսնեմք թի Ժանի աչքերով»։

Կանխահաս մահը շարտօնեց իրեն իրականացնել ծրագրուած ամբողջական երկերու այդ հրատարակութիւնը, բայց իր կեանքի զանազան հանգրուաններուն մէջ, իր հակասութիւններէն ու անկիրճազարմներէն անդին՝ Ժազ Գերուաքի դործը կը պատասխանէ որոշ նպատակի մը միութեան, միեւնոյն մտածումի շարունակականութեան, միեւնոյն արուեստին։ Գրելը, Ժազ Գերուաքի համար, ապրիլ էր։ Իր ստեղծագործութեան կապակցութիւնը (սահմանափակ, եթէ բազմաթիւնը դայն գիցարանական մեծ տիպարներ ստեղծող մեծ ստեղծագործողներուն կամ առմանքի՞ք չըջանի զարմեալ մեծ երեւակայող-

ներուն հետ) ծնունդ կ'առնէր ուղղակի ապրելու կատարութենէ մը: Պիտի չզարմանա՞նք, ուրեմն, որ առաւել կամ նուազ չափով Քերուաք կրկնած է նոյն գիրքը՝ բազմաթիւ անգամներ:— «Հոգիի արկածախնդրի մը» կեանքի դասը ա՛յն բանին մէջ, զոր Հանրի Մելլէր կը կոչէր յիսունական թուականներու Ամերիկայի «պայմանաւորուած մղձաւանջը»:

Ծնած Մասաչուսեց նահանգի Լոուէլ քաղաքին մէջ՝ 12 Մարտ 1922-ին, Ժազ Քերուաք, լուսազոյնս արժեւորելու համար իր Պրըթոն հետաւոր Ժադուժ, սիրով կը խոստովանէր իր Ֆրանքս-ամերիկեան ազգութեան պատկանելու հանգամանքը (իւր հիւսիս ամերիկացի առաջին նախահայրը եղած էր Ալեքսանդր-Լուի Լըպրի տը Քերուաք պարոնը, բնիկ Քորնուոյցի, հաստատուած Քանատա ԺԸ. դարուն, Մոնթրիմի անկումէն ետք, հոն շահագործելու համար Լու գետեզերքէն երկար հողամաս մը):

Քերուաք իւր Պրըթոն ծագումին մէջ կը տեսնէր իր պիք կենսունակութեան, հակամիադաւանութեան եւ ազատամբ ոգիին հիմնական պատճառներէն մէկը: Հետաքրքրական է հաստատել, որ փոփոխութիւն եւ արկածախնդրութիւն քարոզող այս «թափառաշրջիկը» կ'ուզէր անպայման արժատներ ունենալ եւ միւրեւել ազգարանական յաճախ չափաշանց իրթին փնտռութեան մէջ, աւելի լաւ տեղաւորուելու համար ամերիկեան հսկայ տարածութիւններուն եւ խառնարիւններուն մէջ:

Պատմութիւն չունեցող մանկութենէ մը ետք, որուն մասին խօսելով ինք կ'ըսէ, թէ երջանիկ եղած է, Քերուաքի ուսումնական տարեւրմաններէն պիտի յիշենք մասնաւանդ իւր արագ անցքը Քուլմպիա համալսարանէն, ուր, ինչպէս ինք կ'ըսէ՝ «միջանիշ կոտրած եմ դասերէն փախչելուն մէջ, փախուելով ցնջարանը, գրեթե համար քատերգութիւն մը եւ կարդալու, դպրոցի յայտագրիմ մաս կազմող դասականներուն տեղ, ուրիշներու կարգիմ, ֆերտիման Սելիմը»: Քուլմպիա համալսարանէն Քերուաքի անցքը յիշատակելի կը մնայ ոչ անոր համար, որ չէ կրցած ըլլալ օրինակելի աշակերտ մը, այլ անոր համար, որ հոն հանդիպեցաւ ազադայ պիք քնարերգութեան նշանաւոր բանաստեղծ Ալէն Գինզպըրգին:

Համալսարանական ասպարէզը, յամենայնդէպս, չէր ստեղծուած Քերուաքի խառնուածքը ունեցող մէկու մը համար, որ բազմաթիւ աւելցումներէն կը գտնէ Վոլտերս-ի (երեւակայութենէ դուրկ աշխատաւոր մանր քաղքենին) գոյութեան եւ Ալմա Մաթարի սրբացումին մէջ: Հիմնարկութիւններուն դէմ իւր շղթայադերձած ըմբոստութիւններուն առաջինը եղած է պաշտօնականացած մշակույթին մերժումը, որուն տեղ ինք կը նախընտրէր ինքնուուսուցումը: Քուլմպիա համալսարանին մէջ Քերուաք փայլած է մանուսկրի իրրեւ ֆուլպուրիսթ:

Ժազ Քերուաք այլեւս պիտի չհաստատուի որեւէ կայուն գործունէութեան մէջ: Պիտի ըլլայ «ինքզինք կերտող մարդոց յաւազոյն աւանդութեան» ամենակարկաւորն ուճմբերէն մէկը, ամէն գործի յարմարող նկարագիրը: Այսպէս. ան եղած է նաւու վրայ խոհարարի օգնական, ջրհանկիր, նաւահանպիստի գործաւոր, Վոսուէլ սան» թերթի մարդական թղթակից, երկաթուղագծերու հսկիչ, Հոլիվուտի մէջ սեմնարիսթ, լեմոնատի կրօնակի մը մէջ սպասեակ, երկաթուղագծի մէկ ընկերութեան մէջ գրապիւր, կայարաններու բեռնակիր, բամպակ հաւաքող, փոխադրութեան սպասարկութիւններու մէջ՝ օգնական, գործաւոր՝ չէնքերու կառուցման մէջ, 1942-ին, Փենթակոն քաղաքին մէջ՝ թիթեղադրծի աշակերտ, 1956-ին՝ անտառները հրդե-

Հէն պաշտպանող ընկերութեան մէջ՝ դէտ: Քերուաք անձամբ կազմած է այս ցանկը, տեսակ մը զուարճութեամբ, կարծէք աւելի շեշտաւորելու համար անկախութեան իր ճաշակը: Աւելի ուշ, այս անցողակի գրադումները իրեն պիտի ներշնչեն նկարագրական բաղմամբիւ էջեր:

«ՃԱՄՐԱՆՈՒՆ ՎՐԱՅ» ԿԱՄ ԱՌԱՍՊԵԼԻՆ ՍԿԻՋՐԸ

Տակաւին շատ երիտասարդ, Ժազ Քերուաք իր սենեակին մէջ կը գրէր պոետիկ վէպեր, որոնցմէ առաջինը՝ տասնամէկ տարեկանին: Կը պահէր նաեւ մտերիմ օրագրութիւններ եւ տետրակներուն մէջ կ'արձանագրէր ձիարշուներու նկարագրութիւններ, ժամանց մը, զոր ինք ստեղծած է, եւ Ֆոթոպոլ եւ պէյսպոլ խաղացողի իր փորձառութիւնները (աւելի ուշ, «Տոբէօր Սաֆա»-ի մէջ պիտի խօսի այս մասին):

Գրականութենէն ներս, Քերուաքի «մուտքը» կը սկսի 1930-ին, երբ Հարբուրթ Պրէյս կը հրատարակէ, առանց մեծ յաջողութեան, «Քաղաքը եւ դիւղաճաղաքը» (The Town and the City), գրուած երեք տարիներու ընթացքին (1946-48), բազմաթիւ սրբագրութիւններով, երկարաշունչ աշխատանքներու ամփոփումը համաձայն: Ժազ Քերուաք արդեօք չա՞տ լուրջի կ'առնէր ինքզինք, իբրեւ թեկնածու գրող: Այս մասին մտածեց աւելի ուշ: Իրեն կը մնար ինքզինք գտնել եւ ապահովել, պարտադրելու իր գրչին այն ձեւը, որը ինք կ'օճէր «Ինֆամադ արմախ»: Իր գրականութեան մէջ անկիւնադարձ կազմեց 1957 թուականը, երբ հրատարակեց «Ճամբուն վրայ» (On the Road) վէպը: Ժազ Քերուաք գրողին արկածախնդրութիւնը կը սկսի «պիքնիք» առասպելով, որ կը սնուցանէ իր գործը:

Գրուած երեք շաբթուայ ընթացքին, այս վէպը կը վերանորոգէ անլըպելտի դրողներուն, ճամբորդութեան երգիչներուն, Ուիթմանի կողմէ երգուած «ազատիկ» եւ ահռելի երկիրը պեղողներուն ամանդութիւնը: Հարաւէն Հիւսիս արշաւող խումբերու նախկին ընակավայրերուն վրայ գծուած կտրատուած ուղի մըն է ան, փոխարինուած լայն պողոտաներով, ուր արուզօրէն կը ուլանան ինքնաշարժները. «այրուած», ներխուժուած, հերկուած քաղաքներուն պատմութիւնը, հանդիպումներուն, անցողակի սէրերուն պատմութիւնը, միեւնոյն ցեղի թափառաւրջիկ տարբեր ճիւղերուն հետ ունեցած մեծ հաղորդութեան պատմութիւնը, դաժան, շրջուցիչ, յանդուգն եւ ճշացող, անդուսպ սէրերուն պատմութիւնը, առանց շափի գործածուած ալքոլին եւ առանց վախի գործածուած թմրեցուցիչին պատմութիւնը:

«Ճամբուն վրայ» վէպը այս բոլորն է. ամերիկացի անհատապաշտներու մեծ փնտառութիւնը, որ անձնատուր՝ ժամանակէ դուրս փոխուած մը, դուրի՝ սեռային եւ բարոյական պարտադրանքներէ, ազատօրէն եւ վայրագօրէն որոշած է մնալ առանց պակամի եւ անխնայ ճամբորդներու ցեղը: «Ճամբուն վրայ» վէպը, ինչպէս գրած է Միշէլ Մոհրթի անոր Փրանսերէն հրատարակութեան յառաջաբանին մէջ, հետեւեալն է. «Միշէլ Ամերիկայի ցնդական սանձամբերը երկարաշունչ այս քիչագնական որսորդութիւնը, «զատանցող Աշապ»-ի եւ իր «անկեղծ» հրեշտակներու խումբին այս հետաքրքրական փնտառութիւնը: Մարդիկ՝ ինչպէս Մէլվիլ, Թոմս, Մեյֆրէյ Բեյքըն, Մայք Թուէյն, Ուիթման կանխած էին Քերուաքը, քաղաքակրթութեան փետրաքափ եղած անսանձանց ազատութեան մը «խեղճութեան» մէջ: Ասիկա անվերջ ու կոյր շարժումն է, շարժումը հոգիի արկածախնդրութեան, որոնք նգմուած են քաղաքակրթու-

թեննէ մը, զոր մահացու կը նկատեն: Քերուաքի էջերուն վրայ կը կարդամք՝ «...Արեւամուտին անաւախկ ես, որ կը թփնեմ Գանակա գետին մէջ: Ապա Զարլսթանի ֆուրքիմ գիշերն է, արեւմտեան վերժինի մէջ, աշման կէտ գիշերին, Գեմթաքիի մէջ, ուր կայ հրապուրիչ աղջիկ մը գոց սիննայի հոս-վանցին տակ, մթին եւ խորհրդաւոր Օհիան եւ Զինչիմաքին արշալոյսին: Յետոյ նորէն Ինտիանայի եւ Աէն Լուիի դաշտերը, ինչպէս միշտ յետմիջօրէի հսկայ ամպերու գոգին: Տեխաս խիւսերը եւ Մոնթանայի ծառերուն գոյն-ները, տարադնուած ծախսերը, հին հետքերը, գետնգերի խոտերն ու պարտնները: Անվերջանալի՝ քանաւորուածութիւն...»:

Քերուաք դրսեւորած է այս «անվերջանալի բանաստեղծութիւնը» ճաշակով մը: Միայն, անկասկած, «ինքնամուղ արձակը» ի վիճակի էր արտայայտել անուղղակիօրէն, ամէնէն ինքնարուի ձեւով, ընդհանր կը ըստ թը, փոխադրական միջոցներու ցնցումը այնպէս՝ ինչպէս շնչառական երեւոյթ մը, թափառումը եւ բիրտ ու անմիջական ապաւորութիւնները: Միայն ժամանակ քնարական եւ կտրուկ ոճով մը զրուած այս էջերը, իրենց շարժումներուն մէջ տեւաբար ընդհատուած, երբեմն շատ ճոխ, մերթ խիտ, խաղաղ ճերականութեան եւ կէտադրութեան հետ, իր յորդագեղ ընթացքին հետ բերելով իրար հրմշտկող պատկերներ, իրարու վրայ դիպող տպաւորութիւններ, յանդերձ համար, ի վերջոյ, սիննաօթնկալի տպաւորութիւններու:

Կ'ընդունինք, որ այս ոճը անհատաւոր է: Քերուաք մեծ ոճաբան մը չէ, ոչ իսկ ըստ ոճաբան մը: Կը գրէ այնպէս՝ ինչպէս կը ընէ, ինչպէս կ'ապրի, տնայարանքով եւ ուժանակեամբ, երբ սգեւորուած է, որոշ անհոգութեամբ, նոյնիսկ անորոշ թուութեամբ, երբ այլեւս շնչառական է: Այս ոճը ուրիշ աչքերով չի փայլատուում մը եւ ոչ նուազ անակնկալ անցքեր՝ դէպի պարապութիւնը: «Երգը» կը վերածուի ճապարկութեան, քնաշարժիկ տեսանկէ շատախոսութեան մը: Քերուաք նոյն տակնուվրայութեան ընթացքին խելացնորութեան կ'անցնի զատանցանքին: Իր դիրքերը տեւական խոտութեամբ կամ օճի գիտական կառուցումով մը չեն պարտադրուի մեղի, այլ, անոնք կը հասնին ընթերցողին, յատկապէս իրենց քառասային որոշ զօրութեամբ, առաջացուցած խռովքներով եւ պատկերներով, որոնք ուժգին դարձուածքներով կ'օժտակեն պատմութեան զարգացումին: Այս անկիւնէն դիտուած՝ զործը կանոնազանց է, առաւել կամ նուազ չափով յաջող, եւ այս պատճառով է, որ կ'ըմբռնենք Թրիւման Քափոթի նման բարի խոտապահանջ վարպետի մը հապճեպ եւ հետեւաբար աններելի դատումը Քերուաքի գրուածքներուն մասին: Թրիւման Քափոթ կ'ըսէ. «Ասիկա գրել չէ, մեքենագրել է»:

«Ճամբուն վրայ» վէպը, որ 1957-ին հրատարակուեցաւ Միացեալ Նահանգներուն մէջ, մեկնակէտ մըն է, որուն շուտով հետեւեցան այս դեցադներգութեան թեմաները ընդարձակող ուրիշ վէպեր: «Ընդլատակեանքը» (Les Souterrains), որ հրատարակուեցաւ 1958-ին, գրուած է երեք գիշերուայ մէջ, հեղինակին իսկ խոստովանութեամբ (արդէն ձեռագիրը կը վկայէ այդ մասին): «Երկնային Փլոշարները» (Les Clochards célestes) (այնպէս հրատարակուած 1958-ին)՝ «Docteur Uufu» (Docteur Saxe) (1959-ին), եւ այլն:

Ասիկա այն շրջանն էր, երբ Քերուաք հասաւ իր յաղթանակի գագաթնակէտին: Քանի մը տարի ետք հրապարակ պիտի գան այն գործերը, որոնք անկեանադարձ մը կազմեցին պիթիւի արկածախնդրութեան մէջ՝ «Միայնակ թափառաշրջիկը» (Le vagabond solitaire — 1960), ուր մէկտեղուած են ճամբորդութեան թեմայով անտիպ կամ հրատարակուած գրութիւններ: «Պիկ

Սըր» (Big Sur) — 1962), ուր կը նկատուի Թափառաշրջիկութենէն եկած որոշ յուսախաբուծիւն մը եւ հողեկանով դունաւորուած պայծառութեան մը մը-տահոգութիւնը, նոյնիոյ նահանջելու որոշ փափաք մը. «Թափառաշրջիկ Էրեշտակները» (Les anges vagabonds — 1965), ուր հեղինակը կը վերադառնայ «Ճամբուն վրայ» վէպի նիթին, որոշ նորութիւններ բերելով եւ ուր ան կ'ոգեկոչէ իր պիթ դիւցազներգութեան ընկերները, որոշ նահանջով մը սակայն, որ թեթեւ ցրտութիւն մը կը մասնէ. «Սաթորի Փարիզի մէջ» (Satori in Paris), ուր հեղինակը, փորձառութեան բերումով վերջնականապէս կը հեռանայ, կը մեկուսանայ առաջնական համայնական Թափառումներէն:

Բոլոր այս դիրքերը, որոնք զարմանալի արագութեամբ մը եւ շատ գիւրտութեամբ իրարու կը յաջորդեն, իրենց վաճառական կէտին կ'արտայայտեն կեանքի ծարաւը ունեցող դարու պղտիկի մը միակ եւ նոյն խոստովանութիւնը, այնքան «բարբարոս» պղտիկ մը, որքան յուսահատութիւն կը տենչայ դանել հողեկան փրկութեան ուղին. կատաղի զուարճացող մը նոյն ատեն, առաջնալը բոլոր պոռնիկներուն եւ, միաժամանակ, մտահոգ եւ անտանելիօրէն առանձին: 1950-ական տարիներու ամերիկեան դրականութեան պոստմոդերնիստ մէջ Քերուաքի, Կինզլայի, Ֆէրլինզիթի, Կրէկորի Քորսայի եւ քանի մը ուրիշներու գիւրտածական կապը կը նշէ ընկերային բողոքի եռանդ մը, իր ներշնչութիւն մէջ շատ նման (բայց իր արտայայտութեամբ տարբեր) Անգլիոյ մէջ եղած «Երիտասարդ զազազածներ»-ու (Angry Young Men) շարժումին: Քերուաք, հակառակ իր կամքին, կը դառնայ այդ շարժումին պարագլուխը: Իր, ինչպէս եւ իր ընկերներուն լոբոտտութիւնը, «Երկնային Քլոշարները» եւ «Թափառաշրջիկ Էրեշտակները» կը հանդիսանան բացայայտ մերժումը հիմնարկութեան, մերժումը Ամերիկայի աթոմական ուժերին, մերժումը «Սուրբ տոլարին», մերժումը նիւթապաշտ, մաքրակրօն, ինչպէս եւ գործնական եւ արտաքինապէս քրիստոնեայ Ամերիկայի «Մեքենայացուած մարդուն»:

«Պիկ ՍԸՐ» ԿԱՄ ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿՈՒՆ ՎԱՅՃԱՆԸ

Պիթերքները եւ Քերուաք անոնց հետ, այս ընկերութեան մէջ կ'արտայայտեն աւելի խառնուածքի հակասութիւն մը, քան մեթոտիք եւ քաղաքականօրէն կոտրատուած ընդդիմութիւն մը: Քերուաք կ'առաջարկէ ճորդ դուռ մը, եւ ասիկա՝ մահաւանդ զոյգութեան մակարդակի մը վրայ, ուր կը դրսևորուի «կեանքի ամերիկեան օճին» հանդէպ իր անհաշտ կեցութեանը: Զիրենք չըջապատող կազմակերպուած աշխարհին՝ պիթքները կը հակադրեն դրամին հանդէպ օւնեցած իրենց արհամարհանքը և անհատական ներշնչութենքը խանգարող բուժ աշխատանքը: Անոնք կը քարոզեն սեռային ազատութիւնը, արուեստական դրախտները, գործնական պատշանցումներէ ազատազրուած երեւակայութեան ուժը, «եռքի պաշտամունքը» իր խորունկ բողոք պահանջներուն մէջ, պուտապալանութեամբ եւ արեւելեան իմաստութեամբ դունաւորուած ներշնչանքի մը փնտռութիւնը, յանդուքն հետազոտութիւնը անո՛ր, զոր Միշօ կոչած է «նեքինի միշօնը» (l'espace du dedans): Փիլոսոփայական այդ շարժումին երկու ծայրագոյն բեւեռները — շարժող երեւակայութիւնը կը պահանջէ աշխարհագրական փոփոխութիւններ — ուրեմն, մարմնի արբեցում եւ սեռային պաշտամունքն են, ինչպէս եւ իր վայրագ Թափին մէջ միսթիք Թափը եւ ճգնաւորին մասափոփումը: Աւթով

եւ սեւեր, արդարեւ, կ'ապահովեն մէկ վիճակէն միւրը տանող երազուած անցքը:

Մարդիկ շատ պնդած են այնքան շարժումի «հակաընկերային» բնոյթին վրայ: Դիւ մը շատ քմահաճօրէն անկասկած, որովհետեւ այդ շարժումը զգայացունց տեղեկութիւններ բովանդակող դրականութեան մը ի հաշիւ էր բանար փնտրտուքի սքանչելի դաշտ մը: Անոնք յամառօրէն հետադադարած են այնքան կեցուածքը (եւ նոյնիսկ, ամերիկեան ընկերութեան այս սոսկալի տղոց համար՝ քաղքենի փուլիսթիթէն բուրոյի անհաճոյ շէր) ոչ անշուշտ տյեքան, որքան յետպատերազմեան Ֆրանսայի Սէն-ժերմէն-տէ Փրէի դոյապաշտներուն շարժումը: Մարդիկ աւելի քիչ ընդգծած են այնքան շարժումի կրաւորական երեւոյթը, պէտք եղած պայծառութիւնը, մեկուսացումը, կողմնակի միջոցներով անոնց կատարած հոգեկան փախուստը: Պիքնիքը եղած է միշտ աւելի բացակայապաշտ մը, քան յեղափոխութեան զինուորեալ մը: Իր արտայայտութեան մէջ իսկ այս ըմբոստութիւնը կը մնայ քաղքենի, որ կը մնայ բարոյական փճացումի եւ առանց արդէլքի «ես»ի պաշտամունքի մականդակներուն վրայ: Այն շրջանին, երբ այնքանիքն չէին հետապնդեր իրենց շարժումին քաղաքականացումը (այս հարցին մէջ շատ տարբեր իրենց յաջորդող «խաղաղութեան զինուորայիններէն» (peace marchers), բառացիօրէն դատապարտուած էին ասպարէզ դարձնելու զայն, կամ քիչ-քիչ կորսնցնելու իրենց ազդեցութիւնը:

Առաջին կայծերէն, առաջին կատարութիւններէն ու յանդիմութիւններէն ետք, այնքան գրականութիւնը շնչապառ եղաւ: Կենդանի «Հօւլը»-ի վայրագութեան անցաւ Զէն փրիստփայութեան որոնումին: Ինքը, Քերուաք դատապարտուած էր ինքզինք կրկնելու, կամ մէկ անգամէն քաշուելու հրապարակէն: Թափառումը դարձաւ սովորութիւն, խոնջիքը տիրեց մարմիններուն, ալքոյն ու թմրեցուցիչը թողուցին իրենց զգալի հետքերը: Սկզբնական դեղեցիկ խանդավառութիւններուն յաջորդեց սովորամոլութիւնը: Եղբայրական եւ վեհանձն խանդավառութիւնը չքացաւ՝ ի շահ մթին ընկերութիւններուն: Համայնական բնազդը տեղի տուաւ առանձնութեան զգացումին:

Հազորակցութիւնը, նոյն ընտանիքի անդամներուն միջեւ՝ յանգեցաւ արբենալու անուրախ եւ յողնացուցիչ ընթացքին, ինչպէս եւ ճնշող ծիսակատարութեան, ուրիշ հաւատքը վերջնականապէս նահանջած էր: «Պիկ Սըր»-ը, այսպիսով, ծախողութեան մը խոստովանութիւնն է, այնքան արկածախնդրութեան ծախողութիւնը: Անիկա ունի «Ճամբուն վրայ» վէպին ճիշդ հակառակ բովանդակութիւնը: Քերուաք հոն կը խոստովանի շարժումէն իր անջատումը եւ առանձնանալու իր փափաքը, նախընտրելով աւելի մեկուսանալ Պիկ Սըրի անտառներուն մէջ, ինչպէս Թօրօ Ուալտընի մէջ, քան «Թափառալիկ հրէշտակներու» քով փնտռելու հողեկան անիմաստ հազորակցութիւնը: Այս առումով, հետեւեալ տողերը, որոնց մէջ կը պատմէ իր հանդիպումը երիտասարդ պիքնիքի մը հետ, շատ յատկանշական են.

«Այն ատեն, երբ ամէնքը մեկնեցան, իմ գիմֆալակարծ առանձին գլխաւ պիքնիք այս երիտասարդ ապուշիմ հետ, որ ինձի համար երգեր կ'երգէր, երբ ես պարզապէս կ'ուզէի իմանալ: Բայց զծախտութեան առջեւ ես բարեկամութեամբ պէտք է ձեռնացայի, չվհասնեցնելու համար ինձի վստահող այս սիրտը: Որովհետեւ խեղճ կ'երեւակայէր, որ գայութիւն ունի պզնուկան, գաղափարապաշտ և գեղեցիկ բաժնի մը այս ամբողջ պիքնիք խառնարանին մէջ, եւ ես, եթէ պէտք է հաւատալ քերթերուն, կը համարուէի «պիքնիքներու քաղաք»: Եւ սակայն, ճանճաքցած եմ, ծայրայեղօրէն ճանճաքցած եմ ան-

ցամաքելի խանգավառութեամբ այս երիտասարդներուն, որոնք ամէն րան կ'ընեն հանգնելու համար զիս եւ կը փոխանցեն ինծի իրենց ամբողջ խանդը, որպէսզի վեր ցատկեմ տեղէս եւ ըսեմ. «Այո՛, այո՛, այսպէս է», րան մը, գոր անկարող եմ ընել այլեւս: Եթէ եկած եմ Պիկ Սըր, ամո՛ր համար է մա-նաւանդ, որ կ'ազգեմ խոյս տալ այս բռնութիւնս:

Ժազ Գերուաք նորոգելութեան հետեւանքներով կը բացատրէր իր ներ-շնչումներուն դաւանանութիւնը. — «Հիմա շատեր կ'ուզեն խօսիլ մեզի, պատմել իրենց սեփական պատմութիւնները. հիմա մենք պաշարուած ենք, սեղմուած եւ պարտուած՝ մեր թուական ամումին հետեւանքով: Շրջանակը գոցուած է գիշերուան հին հերասներուն վրայ»: Այսպիսի պատրանքափու-թիւն մը ի յայտ կու գայ իր վերջին գիրքէն: Գերուաք, ըլլալով հանդերձ զարտուզի խառնուածք մը, պիտի չարժուի համար երբեք չէ եղած կամ ներկայացուած ա'յնպէս, ինչպէս եղած է Անտրէ Գրեթոն գերբնական շար-ժումին համար: «Երականութեան մէջ ես պիտի մը չեմ, այլ կաթալիկ տաք-րինակ միսքի մը, մեղակեաց աւ խնկ...», կ'ըսէ ահ «Միայնակ քաղա-նաշրջիկ»-ին մէջ: «Ճամբուն վրայ» վէպէն քանի մը տարի ետք, ահ կ'ըսեմ կը դարձնէր խմբական արկածախնդրութեան: «Վերջին երազս է, — կը գրէր ահ «Միայնակ քաղաքաշրջիկ»-ի յառաջաբանին մէջ, — անտանգներուն մէջ ապրել իբրեւ ճգնաւոր, ծերութեան ընթացքին գրել խաղաղօրէն, յիստա երթալու քաղցրագին յայտով»:

Իր ժամանակակիցներուն վկայութիւնները համապատասխան են պիտի-նիքներու կապակցութեամբ տպւած Գերուաքի վերոյիշեալ պատրանքափու-թեան եւ խաղաղասէնչ իր ներշնչութեան, որոնք յաջողած են առաջին դրուածքներուն կատարութեան: Այսպէս, Նելսըն Ալլըըն «Թափառաշրջիկ հրեշտակներ»-ու մասին կը գրէ. «Եւրասիական ժեսք մը ոչ-միտադանու-քեան դէմ: Պատմութիւնը մարդու մը, որ յարձակազակաւ տրամադրութիւն-ներով դիտեցուցած է իր երիտասարդութիւնը, ու ասիկա այնպիսի՝ ճիշդ մը, որ հասուն մարդու իր կեանքին ընթացքին տուն տանելու համար ոչինչ կը մնայ իրեն: Այսպէս է կացութիւնը, օրացրութիւնը մարդու մը, որ մօրը տան մէջ կը սպասէ մահուան, հեռու սեփական յարկէ»:

Իսկ Հէյզլըթ Կուտ կ'աւելցնէ «Պիկ Սըր»-ի մասին. — «Գերուաք կ'ըն-դունի այսօր այն իրողութիւնը, թէ իմ քայլիս սեռային մեծ հերոսը չէ, այն հերոսը, որուն պատկերը իմ քիչ մը ամէն տեղ կը պատկերէ. կը սիրէ իր մայրը եւ իր կատուն: Պատմական սուրբ մը չէ այլեւս: Լաւ ապրող մըն է, թէեւ քիչ մը յոգնած: Կը ճկատէ, որ այլեւս չի սիրեր ինքնաշարժներ կե-ցրելու. ունեցքները կը ցուցնեն ռաբլ... Կը շտկէ անկողինը եւ կոնակիւն հա-մար կալուզ քաղմոց մը կ'ապսպրէ: Բայց հակառակ այս բռնութիւն, կը սիրէ գործածել առաջուայ բաները, մանաւանդ յիմարութեան նրբաբանները ըն-թաշտք սա երեք որակական ածականները՝ «egoory», «gooky», «goofy»:

Մահուան վարկեանին՝ Գերուաք բառացիօրէն հասած էր իր ճամբուն վախճանին, ժամանակէ մը ի վեր արդէն ինքզինք կը կրկնէր: Պիտի կարե-նա՛ր արդեօք վերանորոգել ինքզինք: Վերջին հաշուով, ի՞նչ կը մնայ մեզի դործէ մը, զոր կանխահաս մահը վերածած էր գրական հակառադրի:

Իր մէջ անխտելի են երազատեսի եւ գրողի անկեղծութեան եւ ջեր-մութեան առաւելութիւնները: Արդէն ըսինք, թէ Գերուաք ընդունակ է թէ՛ լաւագոյնին, թէ՛ յոռեգոյնին: «Ժազ Գերուաք», — կը նշէ, օրինակ, Մորիս Նասո, — երեւութապէս իր միջոցներով անլի խեղճ է, քան անէ մէկը այն վարպետներէն, որոնց ազդեցութիւնը կը կրէ թէեւ իր գրութեաններուն մէջ,

բայց չէ յայտնած անոնցմէ կազմել քացարձակ տաղանդ մը յայտնակերպով պայթուցիկ խառնուրդ մը: Այս դիտողութենէն կարելի է հետեցնել, թէ Տրէյզըրի, Տոս Փաստի, Սթէյնպէքի և Նոյնիսի Սէնքլէր Լուիսի հակամիա-դաւանութիւնը (Panticonformisme) շատ աւելի թունաւոր է եւ շօշափելի: Յամենայնդէպս, իր նպատակին եւ դիտաւորութեան մէջ՝ իւրացումը ոսկիէ օրէնք մը չէ վիպասան Քերուաքի համար, որուն մօտ յաճախ աւելի դիւրու-թիւն կը գտնենք, քան խստութիւն, աւելի շատախօս թուլութիւն եւ անորո-շութիւն, քան կարծրութիւն եւ յստակութիւն: Անկասկած Քինքնամուշ ար-ձակը՝ կ'ենթադրէ որոշ քանակութեամբ անապարուած, նոյնիսի դժբախտ յօրինում: Սակայն, հակառակ այս մեծ տկարութիւններուն, Ժադ Քերուաքի արուեստին մէջ կը գտնենք աներեք եւ համոզիչ գեղեցկութիւններ:

«ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՏՂԱՆ» ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ

Քերուաքի գործը որքան ալ անհասար ըլլայ, այսուհանդերձ իրա-ւիչս հրապուրիչ է: Անիկա երկար խոստովանութիւնն է բարկացած տղու մը, որ չքած է իր տունը, ինչպէս ինք կ'ըսէ, «շառնալու համար ամերիկեան գի-շերիմ, ինչպէս նաեւ վիպերգի եւ պարաթէնի (baratin) մեծ հերոսը»: Իր օ-ձապտոյտ ճանապարհի ամբողջ երկայնքին, որ կը կտրէ ո՛չ միայն Ամերի-կան, այլեւ կը հասնի մինչեւ Մեքսիքա եւ մինչեւ Մեքսիկո, Քերուաք կը պոռայ իր վիշաք եւ ցաւը քաղաքակրթութեան մը մէջ, որ, ըստ իրեն, կը ջնջուի, կ'որոշանայ ու կ'աւելանէ մարդէակին սեփական հոգին: Ան, Քեր-ուաք կը լսի կեանքը եւ ապա կ'ողբայ անոր վրայ՝ կը նետէ ինքզինք ար-տակարգ արկածախնդրութեան մը մէջ եւ ապա յանկարծօրէն կը կատարէ վերադարձ մը՝ հասնելու համար հանդարտութեամբ, առանձնութեամբ եւ վստահութեամբ լիցուն հաւասարակշռութեան մը: Կը գովարանէ գոհունա-կութիւնը, բայց կը կասկածի Աստուծոյ գոյութեան ու ներկայութեան: Ա-մէն ինչ, իր մօտ, հակասութիւն է, որով կը քացայայտէ ներկայ դարուն ցաւը: Քերուաքի «արդիականութիւնը» կասկածէ վեր է:

Իրականութեան մէջ, այս արժանախիլ գրողը, որ այնքան բծախնդիր է իր ծագումին աւերչութեամբ, այս ազատ մտածողը, որ այնքան մտահոգ է հոգեպէս, այս «արկածախնդիրը», որ այնքան շուտ յոգնած է, կը ներ-կայացնէ ճշգրիտ պատկերը որոշ Ամերիկայի մը: Հոս կը տեսնենք անհաս-սիկ, թէ ինչպէս վիժք շարժումին առասպելը կրցաւ կապուիլ այս անորոշ դիմաստուերին, այս ուշացած պատանին ժպիտին:

Իր գործը կը ներկայացնէ շրջան մը, չքեղ ըլլալու համար անբաւա-րար անշուշտ, բայց ուշադրութիւն գրաւելու համար օժտուած բաւականա-շափ անկեղծութեամբ: Քերուաքի գործը մէկն է ամէնէն վաւերական լուսա-բանութիւններէն, որ կը վկայէ վիժք գլխաւորութիւնը խորհրդանշող՝ այս մը-տատանջ, չփոթահար եւ չփոթեցուցիչ իրականութեան մասին: Անիկա կա-տաղի գերազգեցութիւն մըն է, երբեմն մինչեւ անկապակից զատանցանքներ դուրս տուող վիճակ մը, ամէն հոգի քննակալ կեանք մը, որ կ'ընդգրկանայ արդի մեծ մայրաքաղաքներու բանտարկեալ քաղաքացիներու կաղձակձրպ-ւած գոյութեան դէմ: Անիկա կ'արտայայտէ ներքին տարածութիւններու տա-ռապագին սպասումը, հիւանդ հոգիի՝ մը համար նոր արժէքներու կոյր եւ անկազմակերպ փնտրողը ա՛յնքան, որքան սանձաքեկ հանդիմանքն ու ցաւ-

տուն խենթութիւնը եւ մոլորած փախուստը արուեստական դրախտներու մէջ:

Անորէ Ժիտ մեզի սորվեցուց, թէ որքան մտահոգիչ է ազատութիւն մը, որ չ'առաջնորդէր որեւէ մէկ պարտականութեան: Այն պարտականութիւնը, զոր ընտրած է Քերուաք անոնցմէ՝ է, որոնց գինը պէտք է վճարել: Այդ գինը արդի մարդուն տազնապներուն երգիչը ըլլալն է, որ հարկադրութեամբ է երթալու իր էութեան մինչեւ խորունկ ալքերը, այսինքն՝ ըլլալ ա'յնքան ազատ, որքան կտրելի է ըլլալ: Պիտի մեղադրե՞նք գինք, դիւրին ճամբան ընտրած ըլլալուն համար, պիտի մեղադրե՞նք՝ քիչ մը կորսուած ըլլալուն համար այդ ճամբուն մէջ, որ, ըստ իրեն, տեղ մը չէր հասցներ: Պիտի մեղադրե՞նք գինք, չնշտապառ եղած ըլլալուն համար: Բնական վերադարձած էր իր «գինեղութիւն» (ringures), Քերուաք, որ կը սիրէր Բէն-պոն, ինքն ալ ճանչցաւ վրէպած արկածախնդրութիւններու դառն համը. իր ըմբոստութիւնը անոնցմէ չէր, որ կը փոխէ ընկերութեանց ընթացքը, իր ըմբոստութիւնը ուրիշ բանի մը չէր կրնար յանգիլ, եթէ ոչ առանձնութեան եւ ժանձրոյթին:

Մեզի կը մնայ, սակայն, գործը, որ կ'արդարացնէ Քերուաքի ընտրութիւնը: — «Եթէ այս գործը կ'ընեն, — կը գրէ ան Պիլ Սքոթ-ի մէջ, — կ'ընեն ոչ միայն շահելու համար կեանքս (միշտ կրցած եմ ինքզինքս ազատել, աշխատելով իրրեւ պարզ գործաւոր կայարաններու մէջ եւ մուկերու վրայ), այլ նրովհետեւ եթէ չգրեմ այն, ինչ որ կը տեսնեմ, այն բոլորը, որ կը կատարուի այս դժբախտ երկրագունտին վրայ, կ'որոցուած իմ մեռածի գլխուս շրջագիծով, կը կարծեմ, թէ այս խեղճ Աստուծոյ կողմէ խեղճ այս երկրին վրայ ոչինչի համար գրկուած պիտի ըլլամ»: Կ'արժէ անդամ մը գայեցելը Քերուաքի գործը, որովհետեւ անիկա եղած է կեանքի մը արկածախնդրութիւնը եւ վճարած է անկեղծութեան գինը: Կարելի չէ բարոյական որեւէ դատ քաղել անկէ, քայց տրեւտեան մշակոյթի այժմու կտրելու հանդրուանին անիկա մեզ կը լուսաւորէ ամերիկացի անհատ մը ըլլալու դժուարութեան մասին: Մինչեւ իսկ իր բախումներուն եւ պակասութիւններուն մէջ, Քերուաքի գործը կը մնայ անկախութեան յուզիչ եւ ջերմ օրինակ մը:

Փիլիփ ՔիթիԱ



ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ՝ ՎԷՊԻՆ ՆԻՒԹԸ

Սկսելով նիւ Երբէն, հեղինակը շրջապատի մը կ'ելլէ եւ կը հասնի մինչեւ հեռաւոր թեքստ եւ Մեքսիկոյ:

Նիւ Երբէն մէջ կը հանդիպի Տին Մորիարթի անուն երիտասարդի մը, որ իրմէ զրեւ կ'ուզէ տրվիլ Տինի երեւումով՝ կը սկսի հեղինակին նոր կեանքը, որ ներկայացուած է «Ճամբուն վրայ» վէպին մէջ:

Տին Մորիարթի քանոնն ելած անհոգ եւ անպատասխանատու տղայ մըն է: Ամուսնացած է միաժամանակ երեք կնոջ հետ, առաջինը կը կոչուի Մարի Լու, երկրորդը՝ Քամիլ, որմէ ունի երկու զաւակ, իսկ երրորդը՝ Ինէզ: Տին իրազեկութեամբ անհոգ անձ մըն է եւ ընկերութեան մէջ կը պայքարի հացի եւ սիրոյ համար: Ան Քերուաքի դուրս խառն հերոսն է: Արդէն Քերուաքի բոլոր տեղաբնիկները կ'էս խնթեր են: Անոնք կը խորհին, թէ պէտք է այսօր գինովնալ եւ վաղը միայն աշխատիլ: Անոնք ընդհանրապէս մտաւարականք են:

Հեղինակին եւ Տինի միջեւ տեղա յարաբերութիւն մը կը սկսի: Քերուաք կը օրէ անօր տարբերակ շարժումները եւ ամէն րանի համար զայն, այնպէս պոռալով: Անոր մէջ կը տեսնէ վազմունք փոքր եղբոր մը պատկերը, կամ ճամբարին նստած նուագող տղայ մը:

Տին կ'արձամարտուի շատերուն կողմէ. ազգականները զինք չեն ուղեր ճանչնալ: Կորսնցնելով Մարի Լու, Քամիլը ու Ինէզը՝ կը փնտռէ իր հայրը, առանց սակայն զայն գտնելու: Մինակ մնալով՝ կ'որոշէ նոր ուղի մը որոնել: Աշխարհի վրայ իրեն բարեկամ կ'ունենայ միայն Քերուաքը եւ երկուքը միասին կ'որոշեն շարունակել իրենց շրջապատը: Մինչեւ իրենց վերջնական միացումը, անոնք իրենց ժամանակը կ'անցընեն հաւաքողութեամբ, խաղաբաշնչեամբ, աշուտներու եւ պատմութեան մէջ: Տէնվէրի եւ Նիւ Երբէն մէջ զանազան խաղերու կը ծանակցին եւ կը ճամբորդեն զոչոչուն ինքնաշարժներով կամ բեռնատար կառքերով: Գիշերները կը պառկեն օրեւէ տեղ, զետեղել, կտրէ մը կամ պարտէզի մէջ: Միշտ զրամի պէտքը կը զգան եւ այդ հոգը քանակաւ համար կ'աշխատին օրհարանի մը մէջ կամ անպատասխանի մը ծառ:

Ժառ Քերուաքի եւ Տինի ճամբորդութիւնը զէպի Մեքսիկոյ կ'ըլլայ հիանալի անակնկալներով հարուստ ճամբորդութիւն մը: Թեքստի ճամբան շատ հաճելի կը թուի իրենց: Տին յաճախ հիասթափ քաղաքացիութիւններ կ'ունենայ: Անկիին տեսնելու անձամբ բերութիւնը ամէն վայրէջան կ'աճէ ներսը: Մեքսիկայի ժողովուրդը մեծ ազդեցութիւն կը զօրծէ վրան: Կը սիրէ մանաւանդ մարդոց անմեղութիւնն ու պարզութիւնը:

Քերուաք կը խոստանայ աղջիկ մը զսին Տինի: Կը հանդիպին Վեքթոր անունով մեքսիկացի մը, որ լատ հաճելի ընկեր մը կ'ըլլայ իրենց: Վեքթոր զիրենք կ'առաջնորդէ հանրատուն մը: Տին կը պարէ պոռնիկներու հետ ու երբ նուազը կը վերջանայ՝ մեքսիկացիները կը լեցունին փողոց, մինչ երկուքը կ'առանձնան:

Մեքսիկոյ կ'ըլլայ իրենց շրջապատին վերջին հանգրուանը: Երթալիք տեղ չի մնար այլեւս: Կը ստիպուին վերադառնալ: Վերադարձի ճամբուն՝ կը հանդիպին հեղինակ փոքր աղջիկներու: Տին սքանչացած՝ կը զիտէ անոնց աչքերը, անոնց մէջ կը նկատէ անմեղութիւն մը, կը նմանցնէ զանոնք իսկ Մարիամի աչքերուն:

Տին, Քերուաքին թափուելէ հաջ, կ'երթայ միանալու իր երկրորդ կնոջ՝ Քամիլի եւ երկու զաւակներուն:

Քերուաք, իր կարգին, կ'ամուսնանայ: Ան այլեւս չի կրնար կուսնել, թէ ինչ պիտի պատահի, սակայն յաճախ կը մտածէ Տին Մորիարթի եւ անոր հօրը մասին, զոր չկրնայ զոնել:

ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Նուագագոյնը հարիւր հոգի կար Ուէսթ Նայմփօրի առաջին յարկին մէջ : Մարդիկ լեցուեցան մառանի բաժինները, կրակարանին մօտ : Բան մը տեղի կ'ունենար ամէն անկիւն, ամէն անկոյնի ու բազմոցի վրայ : Բազումստոն մը չէր, պարզապէս Նոր Տարուայ հաւաքոյթ մը՝ կատաղի նշոցներով ու ծայրնասփիւռի խնջացնոր նուագով : Զինացի ազգիկ մըն ալ կար : Տէնը խումբէ-խումբ վազեց, Քրաուչօ Մաքսի նման փնտռելով ամէնքը : Մերք ընդ մերք դուրս խուժեցինք դէպի ինքնաշարժները, աւելի շատ մարդիկ հաւաքելու համար : Տամբընը եկաւ : Տամբընը Նիւ Եորքի խումբին հերոսն է, ինչպէս Տէնը գլխաւոր հերոսն է արեւմտեան խումբին : Անոնք անմիջապէս ատեցին գիրար : Տամբընի աղջիկը յանկարծ հարուածեց Տամբընը կրակէն : Ան երեքով կանգնեցաւ : Աղջիկը զինք տուն տարաւ : Մեր օրաթերթի մի քանի խնթր ընկերները շիշերը ձեռքերէն գրասենեակ եկան : Սոսկալի ու սքամ-չելի ձիւնամարտիկ մը կը թափալէր դուրսը : Էտ Տանքըլը համդիպեցաւ Լիւսիի քոյք ու անոր հետ անհետացաւ : Մոցայ ըսելու, թէ Էտ Տանքըլը տիկիններու հետ շատ հեշտ վարուող մարդ մըն է : Ան 180 սանթիմէթը հասակ ունի եւ մեղմ, ազնիւ, հանելի, քաղցր եւ ուրախ բնավարութիւն մը : Կ'օգնէ կիներուն՝ երբ անոնք իրենց վերարկուները հագուին : Այդ է գործելու իր կերպը : Առաւօտեան ժամը 5-ին՝ բոլորս կը խուժէինք յարկարածքի ետեւի բակը, մագլցելով շէնքի մը պատուհանէն, ուր հսկայ հաւաքոյթ մը տեղի կ'ունենար : Արշալոյսիմ՝ կը վերադառնայինք Թօմ Մայսրաւ : Մարդիկ նըկարներ կը գծագրէին ու հիմ գարեջուր կը խմէին : Բազկաթռուի մէջ ճնացայ՝ Մօնա ամուսն ազգիկ մը բազուկներուս մէջ : Մ'եծ խմբակներ լեցուեցան հին Գօլուպիա համալսարանի շրջափակի ըմպելարանէն : Ամէն ինչ կեանքի մէջ էր : Կեանքի բոլոր դիմագծերը կը դիզուէին նայն խնձաւ սենեակը : Այլն Մարք Արթըրի սոն մէջ հաւաքոյթները շարունակուեցան : Այլն Մարք Արթըր սփանջելի արարած մըն է, կը կրէ ակնոցներ եւ ուրախութեամբ ու զազտագողի կը գիտէ : Սովորութիւն դարձուց ամէն բանի «Այո» ըսել, ճիշդ Տէնի նման, ու դեռ կը շարունակէ «Այո» ըսել ամէն բանի :

Տէֆսթըր Կօրսընի եւ Ուաթըր Կրէյնի եղբիւրափոքրին վայրի ծայրներով Տէնը ու ես գօտեմարտ խաղցանք Մէրի Լուի հետ, բազմոցին վրայ : Ան ալ մեզմէ փոքր չէր : Տէնը շրջեցաւ առանց ներքնաշապիկի, միայն տաքառով, բոսիկ, մինչեւ ինքնաշարժին հասնելու ու աւելի մարդ փնտռելու ժամանակը եկաւ : Ամէն ինչ պատահեցաւ : Մենք վայրի ու խանդավառ Բօլլօ Կրէյլը գտանք եւ գիշեր մը անցուցինք իր Լօնկ Այլընտի տան մէջ : Բօլլօն կ'ապրէր գեղեցիկ տան մը մէջ, հօրաքոյք հետ : Երբ հօրաքոյքը մեռնի՝ տունը ամբողջովին իրեն պիտի մնայ : Մինչ ան կը մերժէր հաւատալ Բօլլօյի յափառմանը որքէ մէկուն և կ'ատէր ընկերները : Բօլլօ հոս թերաւ այս կոշտ խումբը՝ «Տէնը, Մարի Լուի, Էտը եւ գիս», ու ռոնցոզ հաւաքոյթ մը սկըսաւ : Կիներ վեր փախաւ, ան սպառնաց զինուոր կանչել : «Օհ, լաւ, դուն ծեր կնիկ», զոռաց Կրէյլ : Զարմացայ, թէ ինչպէս կրնայ անոր հետ այսպէս ապրիլ : Ան այնքան գրգռեւ ունէր, որ ես կեանքիս մէջ տեսած չեմ — երկու գրադարաններ, երկու սենեակներ լեցուած գետնէն մինչեւ առաստաղը, չորս պա-

տերուն շուրջ, և այնպիսի գրեթե, ինչպէս «Անվանական»-ը, «Բան մը կամ ուրիշը», տաճարապետութեամբ ծառայեցող: Բայց նուազեց վերտիկ գոտաներգութիւնը: Ան երբեք չանհիծեց: Մեծ դպրոցական մըն էր, որ Նիւ Եփեսոսէն գետնէն բռնեց և կը քաշէր երեքայնով, պառաւով՝ 17-րդ դարու նուագի իսկական ձեւով: Ան համբարներէն կը սողար մեծ սարդի մը պէս: Հետաքրքրութիւնը աչքերէն ժայթքեցաւ՝ դժոխային լոյսի բոցերով: Փաթեքեց տարանցող խանդավառութեամբ: Թոքովեց, գալարուեցաւ, յետաքրքեց, հեծեց. գոռաց, յուսահատօրէն գնաց: Հագիւ մի քանի խոսք բաւ: Որքան յորդած էր կեանքով: Տէնը խոնարհ գլխով կանգնեցաւ կրկին ու կրկին կրկնելով «Այո՛... Այո՛... Այո՛»: Տարաւ գիւս անկիւն մը. «Այդ Բայց Կրեպը բռնեց մեծ ու բոլորէն գեղեցիկ է, ա՛յդ է, ինչ որ կը շանայի ըսել քեզի, ա՛յդ է, ինչ որ կ'ուզեմ ըլլալ: Կ'ուզեմ ըլլալ իրեն պէս: Ան երբեք չուարած չէ, կ'երթայ ամէն կողմ, ուշադիր չէ, կը ճանչնայ շրջանակը, ասդին անդին օրօրուէն գատ ընկիւն չունի, պարո՛ն, ան կատարելութիւն է. կը տեսնես, եթէ դուն տեսարար իրեն պէս ասդին՝ պիտի հասնիս»:

«Հասնի՞մ, ո՞րք»:

«Հո՛ն, հո՛ն, պիտի ըսեմ քեզի, հիմա ժամանակ չկայ, ժամանակ չունիմք»:

..

Բէթըրսընի տունը գացինք: Ես առաջին արթնցողը եղայ, իրիկնամուտին: Տէնը եւ Մարի Լուի կը քնանային անկողնիս մէջ, էտը ու ես՝ մօրաբարձըս անկողնիս մէջ: Տէնը սքափած, կոճղի մը պէս փռուած էր գետին, դուրս ցրուած գուլպաները շտփին:

Հեռաձայնեցին ինծի դեղաբանին վարի յարկէն: Կանչը Նիւ Օրլէանգէն էր: Մեր Պալլիմ էր, որ փոխադրուած էր Նիւ Օրլէանգ: Մեր Պալլիմ իր քարճը ու խոպոտ ձայնով կը բողբէր: Կ'երեւայ թէ, աղջիկ մը, Կալաթա/Տանքըլ ամուսնաբեր՝ հասած էր իր տունը, էտ Տանքըլը տեսնելու: Պալլի աչ մէկ գաղափար ունէր այս անձերուն մասին: Կալաթա Տանքըլը տեսական կորուրեցնող մըն էր: Պալլիմ ըսի, որ գինեք վստահեցնէ, թէ Տանքըլը Տէնի ու ինծի հետ է, եւ հաւանաբար մենք իրեն պիտի հանդիպենք ու տանելիք գինեք Օրլէանգի մէջ, Գօսսի ճամբուն վրայ: Յետոյ աղջիկը անձամբ խօսեցաւ հեռաձայնէն: Էտի արպիստութիւնը հարցուց: Ան շատ հետաքրքրուած էր իր երջանկութեամբ. «Ինչպէ՞ս թափաքէն Նիւ Օրլէանգ հասար», հարցուցի: Ըսաւ, թէ տուն հեռագրած է դրամ ստանալու եւ ինքնաշարժ առած: Որոշած էր Էտին հասնիլ, որովհետեւ կը սիրէր Էտին: Վերի յարկը բարձրացայ եւ Էտին տեղեկացուցի խնդիրը: Ան մտաւ մայրուածքով նստաւ աթոռին վրայ: Իսկապէս մարդկային երեւոյթանք մըն է էտը:

«Շատ լաւ» ըսաւ Տէն, անմիջապէս արթննալով եւ անկողնէն ցատկեւորով, ըսաւ. «Եթէ ընելիքը անմիջապէս ուտելն է: Մարի Լուի, շնորհ խոնարհեցին մէջ, նայէ, թէ ի՞նչ կայ: Սէլ, դուն եւ ես վար կ'իջնենք եւ Գարլօն կը կանչենք: Էտ, դուն նայէ, թէ ի՞նչ կրնաս ընել տունը շտկելու»: Հետեւեցայ Տէնին: Ազմկելով աստիճաններէն վար իջանք:

Դեղաբանի մէջ, վաճառորդ տղան ըսաւ. «Ուրիշ հեռաձայն մը ստացայ, այս մէկը Սան Ֆրանսիսկոյէն էր, Տէն Մօրայքի կոչումով տղուն հասցէին»: Բայ, թէ այդ անունով մէկը չկայ: Անուշիկ Կամիլն էր, որ Տէնը կ'ուզէր: Դեղագործ Սէմ՝ իմ հանգարտ ու երկարահասակ բարեկամս՝ նայեցաւ ինծի եւ գլուխը փռեց:

«Ճիգ, ի՞նչ կ'աշխատեցնէ՞ք, միջազգային պռնկաստ"ւմ մը»։ Տէնը պոռթկաց մռնկոյն։ «Կը հարուածեմ քեզ»։ Խուժեց հեռաձայնին խուցը եւ Սան Ֆրանսիսկոյի խումբը ազեց։

Խտֆը Գարլոն կանչեցինք իր Լօնկ Այլըմտի տունէն, ըսինք, որ գայ։ Իրկու ժամ ետ Գարլոն հասաւ։

Տէնը եւ ես պատրաստուեցանք վերադառնալու մամբոյրդուքեան, առնելու համար մնացեալ կահկարասիները եւ բերելու մօրա-
ֆոյրս։ Գարլօ Մարք եկաւ։ Քերթուածը թելին տակ, ու նստաւ համգոտա-
ւէտ աթոռի մը վրայ՝ պղպեղացոյ աշխարհի գիտելով մեզ։ Կէս ժամուայ ըն-
թացքին, ան մերժեց որեւէ բան ըսել։ Ամէն պարագայի, մերժեց ինքզինքը
վտանգել։ Տէնվըր Տօլտրամի օրերէն առին հանդարտած էր։ Տէնվըրի մէջ
մօրու մը կրելով՝ ան թափառեցաւ յետին փողոցները փոքր երեխաներու
հետ, որոնք առաջնորդեցին զինք կախարդ բժիշկի մը. որ գուշակեց իր բախ-
տը։ Կատէ հիւզակներով անշուք փողոցներու նկարներ ունէր ան, Տէնվըրի
հաւնկին վերջաւորութեան առնուած նկարներ։

Ըսաւ, թէ վերադարձին ցատկեց նաեւ Հարթ Կրէյնի նման։ Տէնը երա-
ժշտական սնունդը հետը՝ նստաւ գետափ եւ հաճոյքով ունկնդրեց այդ
պղտիկ երգը, որ կը նուագուէր։ «Գեղեցիկ վէպ մը, փոքր, հնչեղ, շարուն,
միամիտ զանգակներ։ Ահ, մտիկ ըրէ՛ք, մենք պիտի հակինք սնունդին վրայ
եւ ուշադրութեամբ հետեւինք երաժշտութեան, մինչեւ որ թափանցենք
զաղտնիքին»։ Իս Տանքըլմ ալ նստաւ գետին։ Ան ունէր թմրկահարոյ
ցպիկներ, որոնցմով սկսաւ մեղմ հարուածներ տալ սնունդին, ընկերամալու
համար նուագին։ Մենք հագիւ կը յաջողէինք լսել զինք։

Ամէն ոք շունչը բռնած՝ մտիկ կ'ընէր. «Թիֆ... Թաֆ... Թիֆ... Թաֆ»,
ըսէր-թաֆ։ Տէնը ակամջը գոցած՝ բացազանչեց. «Ահ, ուն»։

Գարլօն աչեքը կիտած՝ դիտեց այդ յիմարութիւնը։ Վերջապէս ծուն-
կին զարկաւ ու ըսաւ. «Յայտարարութիւն մը ունիւմ ընելի՞ք»։

«Այո՞, այո՞»։

«Ի՞նչ է իմաստը դէպի Նիւ Եորք կատարուած այս մամբոյրդուքեան»։

«Ի՞նչ տեսակ գժուճ գործի վրայ ես այժմ. ըսել կ'ուզեմ՝ դուն, պա-
րոն, ա՛րք կ'երթաս։ Քու փայլում ինքնաշարժով Ամերիկա՞ կ'երթաս գիշեր
ատեն»։

«Ո՛ր կ'երթաս դուն», արձագանգեց Տէնը բերանը բաց։

Նստեցանք ու չգիտցանք ինչ ըսել։ Այլեւս ըսելիք չկար, մեր միակ ը-
նելիքը մեկնելն էր։ Տէնը վեր ցատկեց ու ըսաւ, թէ պատրաստ ենք վերադա-
նալու։ Լոզանք մը ըրաւ։ Ես ամառ մը բրիճն հիւսիս տան մէջ
մնացած իւզով։ Մօրի Լու կարկտեց զուլպաները. մեկնելու պատրաստ
էինք։ Տէնը, Գարլօն եւ ես մեկնեցանք դէպի Նիւ Եորք։ Խոստացանք Գար-
լոյին հանդիպիլ երեսուն ժամէն, ճիշդ Նոր Տարուայ իրիկունը։ Գիշեր էր։
Ձգեցինք զինք Թայմզ Սթրիթ։ Վերադարձանք սուր փայտալիէն մինչեւ Անիւ
ձըրգի, եւ Տէնը ու ես հերթով չէլով ինքնաշարժը՝ վերադառնալու հասանք
տասը ժամէն։

«Առաջին անգամ է, որ մենք առանձին ենք ու տարիներ շարունակ
իջեւելու դիրքի մը վրայ կը գտնուինք», ըսաւ Տէնը եւ խօսեցաւ ամբողջ գի-
շերը։ Մրափող Ռաշինկընէն դէպի վերադառնալի ամայութիւնները կատա-
րած մեր մամբոյրդուքիւնը երազային մամբոյրդութիւն մըն էր կարծես, կար-
ծես երազի մէջ էինք։ Արշալոյսին անցանք Ափորնաթափ գետը եւ կէսօրէ ա-
ռաջ, ծանր ութին՝ հասանք Եդրօս տունը։ Եւ ամբողջ այս ժամանակամի-

չոցին, Տէնը անհուճօրէն գգայուն դարձած էր: Ամէն քան, որ կը տեսնէր, ամէն քանի մասին, որ կը խօսէր՝ կը յազդէր զինք. պատահած բոլոր ման-րամասնութիւնները, ամէն վայրկեան, կը ցնցէին իր շիզոնը: Բացարձակօրէն ելած էր ինքզինքէն: «Եւ անշուշտ, հիմա ոչ ոք կրնայ ըսել մեզի, թէ Աստուած չկայ: Մենք անցած ենք բոլոր երեւոյթներէն անդին: Կը յիշե՞ս արդեօք, Սէլ, երբ առաջին անգամ Նիւ Ծորք եկայ, ուզեցի, որ Զատ Գինկը տեղեկութիւններ տայ ինծի Նիցշէի մասին: Կը տեսնե՞ս, թէ որքան ժամանակ անցաւ: Ամէն ինչ լաւ է հիմա: Աստուած գոյութիւն ունի եւ մենք երկար ժամանակէ ի վեր գիտեմք այդ մէկը: Ամէն ինչ որ կու գայ յոյներէն՝ սխալ նախադրեալ է: Երկրայափութեամբ կամ երկրայափական մտածելակերպով դուք չես կրնար լուծել այդ հարցը. այս է բոլորը»:

Ան վար առաւ ձեռքը: Ինքնաշարժը անցաւ ուղղակի նստարան մէջէն: «Ոչ միայն այդ. մենք երկուքս կը հասկնանք, թէ ես ժամանակ չեմ կրնար ունենալ բացատրելու, թէ ինչո՞ւ ես եւ դուք գիտեմք, թէ Աստուած գոյութիւն ունի: Ատեն մը ես ողբացի կենեմքի գծաւարութիւնները: Որքան ազա-հատ էր ընտանիքս, որքան ուզեցի օգնել Լիւիսի, որ մայնպէս խեղճ էր եւ աղջիկ մը ունէր:

«Դժուարութիւնը ընդհանրական թառ մըն է Աստուծոյ գոյութիւնը գգալու համար: Կարեւորը այն է, որ պէտք չէ շուարիլ: «Դուլիս կը թնդայ», բացառանչեց գլուխը սեղմելով: «Գրաւոր Մաքսի նման ինքնաշարժէն դուրս վազեց՝ ծխախոտ բերելու, կատաղի, գետինը քնքացնող բայութեամբով մը:

«Տամկերէն սկսեալ, Սէլ, ես յաճախ մտածած եմ շատ մը քաներու մասին: Ես սովոր էի միշտ ըլլալ վերածննդեան դպրացի մէջ, երկտասարդ պոռնիկ մը, հագեցեալ արտայայտութիւնը իմ վիճակիս: Բանտի բոլոր հարցերս լաւ են. որքան որ գիտեմ, այլեւս չեմ քանտ պիտի չմտնեմ: Մը-նացեալը իմ սխալն է»:

Տեսնեմք փոքր լամ մը, որ շարեր կը նետէր ինքնաշարժներուն: «Մը-տածէ անոր մասին», ըսաւ Տէն. «Օր մը պարսաստիկով քառ մը պիտի նետէ մարդու մը եւ մարդը պիտի նզմուի ու մեռնի, բոլորը այս փոքր տղուն պատ-նառով:

«Կը տեսնե՞ս ինչ ըսել կ'ուզեմ: Աստուած գոյութիւն ունի անկասկած: Երբ կը քաւալիմք այս նամբուն երկայնքին, ես վստահ եմ, որ ամէն ինչ պիտի ապահովուի մեզի համար, այն աստիճան, որ մայնիսկ դուք, երբ էշած ատենդ կը վախճաս միւս ինքնաշարժներէն (եւ կ'ատէի էշիլը եւ էշեցի գգու-շութեամբ) անիկա պիտի ընթանայ միմակը եւ դուք նամբէն դուրս պիտի չելլես եւ ես այն ատեն կրնամ բնաւ: Աւելին. մենք կը ճանչնանք Ամերի-կան, մեր տունն է անիկա: Ամերիկայի մէջ կրնամ երթալ որեւէ տեղ եւ ձեռք ձգել իմ բոլոր ազածներս: Ես կը ճանչնամ ամերիկացի ժողովուրդը: Գի-տեմ, թէ ինչ կ'ընեն մարդիկը: Կու տանք, կ'առնենք եւ ապա անհատա-լիօրէն կատարելագործուած բազմութեամբ մը կ'երթանք, ծանակելով ա-մէն կողմ»:

Որոշ բան չկար Տէնի ըսածներուն մէջ, քայց ինչ որ ըսաւ, ձեռով մը յստակացած ու բիրեղացած էր: «Մաքուր» բառը յաճախ զարծածեց: Ես եր-բեք չէի երեւակայեր, որ Տէն կրնայ դառնալ խորհրդաւոր անձ մը: Աստուծոյ խորհրդաւորութեան առաջին օրերն էին, որքան պիտի առաջնորդէին զինք՝ իր վերջին օրերուն՝ Ֆիլիպսի տարօրինակ եւ ցնցոտիացած սրբութեան:

ԺԱԳ ՔԵՐՈՒԱՔ



ԿԵՍ՝ՅՐԵԾՏԱԿ

ԵՒ

ԿԵՍ-ՊԻԹ

•

ԱԼԵՆ ԿԻՆԶՊԵՐԿ

Ստոր բանաստեղծի մը գործը հանձնարու համար մեզի ներկայացող ամէն պարագայ, մինչեւ իսկ արտաքին ամէն պարագայ՝ բարեղէպ պարագայ մըն է, երբ այդ գործը նկատի կ'ունենանք իր ամբողջութեանը մէջ: Ստեղծագործողի մը համար կարեւոր է գիտնալ այն, ինչ որ նոյն ժամանակին կը պատահի ուրիշ տեղ մը, այսինքն՝ երբ ինքզինք կը փնտռէ եւ ձեռով մը ինքզինք կը ստեղծէ: Այս հանգամանքը այնքան կարեւոր է, որ կարելի է դարձանալ միայն, երբ կը հաստատենք, թէ Միացեալ Նահանգներու մէջ թարգմանութեան սխառմամբիւր եւ փոխադարձ քաղաքականութիւնը քաղաքականութիւն մըն է: Իսկան է իւրաքանչիւր ժողովուրդէ թարգմանիչ ու հրատարակել բանաստեղծութիւններու ժողովածուներ: Այս յոյժ կարեւոր գործը ձգուած է պատահականութեան, լաւագոյն պարագային՝ անմիակա՛ն նախաձեռնութիւններու:

Արդիւնքը ծանօթ է. բացի քանի մը հազուադիւր քաջատալթիւններէ, թարգմանուող երիտասարդ բանաստեղծները անոնք են միայն, որոնք մինչ այդ անծանօթ եւ ուրեմն ժխտական երեւոյթներ լոյսին հանած են: Արեւելիքի մէջ այդ երեւոյթները տրուած են զատավարութիւններու ընդմէջէն, ինչպէս, օրինակ, Իոսիփ Պրոտսկիի դէմ եղած ամբաստանութիւնը, այն Պրոտսկիի, որ ըստ իր երկրի մէջ կիրարկուող չափանիշներուն կը համարուի «մականոյթ» մը: Արեւմուտքի մէջ, ուշագրութիւն կը գրաւէ թմրեցուցիչներու մոլորիչութիւնը գիշարանութիւնը, կամովին մաքրակրօն եւ զերազանցապէս նիւթապաշտ ընկերութեան մը գերկնային ջլուարը, նոյն այդ ընկերութեան կողմէ արձուած անհոգի հանգիստի մը մէջ, զոր Հանրի Միլլէր սահմանած է խիստ ուշագրաւ ձեւով մը՝ «Պայմանաւորուած մղձաւանջը»:

թէ՛ մէկ եւ միւս կողմէն՝ խնդրոյ առարկան միշտ մերժումի, ժըխտումի, անձկութեան կամ դժբախտութեան բանաստեղծութիւնն է, նոյնիսկ եթէ քանի մը հոգիներու կողմէ միայն անէ՛ծքը իրապէ՛ս ապրուած է, եւ կեղծուած ու խնամքով յարգարուած՝ ուրիշներու կողմէ։

Ինչ կը վերաբերի Ամերիկայի մէջ «արտագրուած» (made in U.S.A.) բանաստեղծութեան, Ճրանսայի ափերուն անիկա կը կատարէ իրաւ ցտմաքահանում մը, որուն երկու տարիներէ ի վեր հանդիսատես հնք։

Կը թուի, թէ ամէն ինչ շարժման մէջ գրուած է, համոզելու համար մեզ, թէ Անդր-Ատլանտեանի ափերուն երկտասնեակ մը տարիներէ ի վեր ճշացող բանաստեղծութիւնը պիտի սերունդի բանաստեղծութիւնն է, եւ թէ անիկա է, որ լաւագոյնս կը համապատասխանէ մեր հարցերուն եւ մեր անդիտակից ներշնչումներուն։

Ի վերջոյ, պիտի սերունդի բանաստեղծներուն երկու կարկառուն դժմաքերը՝ Պոպ Գոֆման եւ Ալլէն Կինգսլէյք, տեսած են իրենց բանաստեղծութիւններուն ամբողջական հաւաքածոներուն հրատարակութիւնը Փարիզի մէջ։ Առաջինին հաւաքածոն կը կոչուի «Առաճման քիւն» եւ երկրորդը խորագրուած է «Փառքի ծառ»։ Երկուքն ալ թարգմանուած են Քլոտ Փրիէտի կողմէ, որ պիտի բանաստեղծութեան կրթութեամբ մասնագէտներէն մին է։ Այսպիսի առատութիւն մը, որ նկատի չունի թերթերուն մէջ հրատարակուած գրքաւորութիւնը, արժանի պիտի ըլլար առանձին ուշադրութեան մը, եթէ, անշուշտ, խնդրոյ առարկայ չդարձնէր իր կարելի ազդեցութիւնը Փրանսացի կարգ մը երկտասարդ բանաստեղծներու վրայ, որոնք շլացած էին իրենց պիտի պաշտօնակիցներուն ազատութեամբ եւ մանաւանդ անոնց գտած լրացուցիչ յաջողութեամբ։

Ամերիկեան ճակատագրին առանձնայատկութիւնը կը կոչանայ անոր մէջ, որ ոչինչ կը կորսնցնէ ինքն իրմէ եւ ձեռք ձգած ամէն նորութիւն կը ծառայեցնէ իր յաջորդական կամ շահերուն, սկսելով անոնցմէ, որոնք իր ծոցին մէջ գինք կը թխտեն։ Հակաամերիկեան բանաստեղծ մը կը փաստէ, յամենայնդէպս, թէ ինչ ալ ընէ, Ամերիկան իրեն կը վերադարձնէ իր շահը այնպիսի՝ նկատանքի տպաքանակով մը, որուն մօտ մեր հանրածանօթ վիպառանները կ'երեւին իբրեւ համեստ դրողներ։

ԱՆԵԱՆՕԹԻՆ ՃԱՄԲՈՐԴՆԵՐԸ

Կրնաք առարկել անշուշտ, որ բոլոր այս բանաստեղծները բանտարկուած են եւ ոմանք կ'ապրին իրենց երկրէն հեռու։ Այս առարկութեամբ պարզապէս կը յուզուի թմբեցուցիչի հարցը, որ պիտի բանաստեղծներու միջուկը կը կազմէ ո՛չ միայն իբրեւ «ներշնչող» իրողութիւն, այլեւ իբրեւ նիւթ անխռափելիօրէն կայ անիկա այս մետալիմի սերունդի գործերուն մէջ, ինչպէս ահաւիօրէն կը կոչէ դայն Լըպէլ։ Որովհետեւ պիտի բանաստեղծները չեն գործածեր թմբեցուցիչները Արթուրի ձեւով, որ կը տառապէր, կամ Միշլի, զոր կը պաշտեն իրենք եւ որ թմբեցուցիչ գործածողի մը ճիշդ հակառակ բեւեռէն կը մօտենայ բանաստեղծութեան, բայց պիտի բանաստեղծները թմբեցուցիչը կը գործածեն ինքնաքայքայումի էմֆանիի կամքով, որպէսզի յետոյ, իրենց խղճալի վիճակին համար կարենան ոխ պահել ամերիկեան ընկերութեան դէմ։ Այս է, ուրիշներու կարգին, նաեւ Կինգսլէյքի բանաստեղծութեան խմբուր։

«Տեսայ իմ սերունդիս Մեծագոյն մոմէրը քայքայուած, անօթի, հիս-
քերիք ու մերկ խենթութեամբ, քրոնք արշալոյսին կը քաշէրուէին սնկաւու
քաղերուն մէջ՝ կատաղի խայթոցներու փնտռութեամբ մտրակուած»:

Այս մոլորած մեծ մտքերը, իրապէս անձկութեան մասնուած եւ ան-
կասկած վերին առտիճանի անկեղծ իրենց նողկանքի արտայայտութեան մէջ,
քաղաքակրթութեան մը հանդէպ, որ մտահոգ է միայն նիւթական յառաջի-
մութեամբ, կը թուի, թէ չեն անդրադառնար, որ իրենց զբաղարձակի փր-
տուողը, երբ իրրեւ չափանիշ ունի թունաւոր նիւթերու գործածութիւ-
նը, և ոչ թէ գաղափարական փորձ մըն է, այլ, իր կարգին, արդիւնքն է
նիւթական բնադղի մը: Բառացիօրէն, կինդպէրէ և մանաւանդ Գոթման
(ղլայուն և Հետեւահնդերով նուաղ մտահոգ) իրաւ բանաստեղծներն են, օժ-
տուած գորաւոր շունչով մը, որ զժրախտաբար շատ յաճախ կ'ընծայէ մաս-
նադիտական սահմանափակ շահեկանութիւն մը և գիւրբի ստեղծուած եւ
ցուցմամբ պատկերներ:

Հոն կը գտնենք խառնաշփոթ, Տառային յատուկ ազատութեամբ մը
գործածուած բառեր, գերբնապաշտներու ինքնամուղ գրութիւններու ոճէն
հետքեր, Ափուլիէնէրի քալիկրաֆները և Անթոնէն Արթուրի ճշացող արձակը,
և այդ ամէնքը՝ ծեփուած, փշրուած, խախտուած, անձեւ ալիք՝ որ կ'ա-
ռաջնորդէ բնիկացողը քալելու փոխ առ փոխ լիտիութիւններու և լաւ դլա-
ցումներու ընդմէջէն, թերթերու խորագիրներ և մտերիմ խոստովանու-
թիւններ, քաղաքական հաւատամքներու թելադրած գործունէութիւններ և
գիւճացող լուսաւորութեան ջատագովութիւններ: (ժողով Անտրիւս աջապէս
վերամկրտած է ռոմանթիք շրջանի գարուեստական գրախտները), առանց
մոռնալու նոյն խմբակին պատկանող բանաստեղծներուն հիացումները:

Վերջապէս, խենթութեան և դարչութեան սահմաններուն մէջ կա-
տարուած այս խոժոռ և վտանգաւոր ճամբորդութենէն հետեւցնելով՝ ամե-
րիկացի այս բանաստեղծները չեն այն գանձանօթը, զոր կը սահմանէր Րէյմ-
սօ, այլ հրապուրուած են տարօրինակ եւ արտառոց նիւթերէ, որոնք երկար
տարիներէ ի վեր գտնուած, պեղուած, մաշած և գէն չպրտուած են Եւրո-
պայի բանաստեղծներուն կողմէ: Կրնանք թերեւ խօսիլ այս սերունդի վա-
ւերականութեան մասին, քայքայ անմիջապէս, որ կը բաժնենք իր գործը Ամե-
րիկայի ներկայ միջնորդութեն, դժուար կը դառնայ տալ իրեն մեծ ինքնա-
տրպութեան մը կնիքը:

ՄԱՐԲ ԱՆԻՆ

Մեծ Շուկայ մը Քալիֆարնիոյ Մէջ

Ինչե՛ր կը մտածեմ այս գիշեր քու մասիդ, Ուալթ Ուիթման, երբ կը փախեմ կողմնակի փողոցներէ, ծառերու տակէն, ու գլխու ցաւով մը, գիտակցօրէն դիտելով լիալուսինը:

Անօթի յոգնութեանս մէջ, դէմքերու գնումներու համար, ես գացի լուսաւորեալ պաղտաներու մեծ շուկան, երազելով քու քուարկումներուդ մասին:

Ի՞նչ դեղձեր եւ ի՞նչ կիսաստուերներ: Ընտանիքներ գնում կ'ընեն ամբողջ գիշերուան ընթացքին: Գաւիթներ՝ լեցում ամուսիններով, կիներ՝ տանձենիներու մէջ. մանուկներ՝ լուիկներու մէջ. եւ դուն, Կարսիա Լորէա, ի՞նչ ընելու վրայ էիր ձմերուկներուն քով:

Ես տեսայ քեզ, Ուալթ Ուիթման, անգլալեզու առանձին ծեր դատարկապորտ, որ կը շօշափէիր միսերը սառնաբանին մէջ՝ միաժամանակ զննելով պտղավաճառ տղաքը:

Ես լսեցի իւրաքանչիւրին մասին քու հարցումներդ. ո՞վ սպաննեց խոզերը, քանի՞ կ'արժէ պանանը. դուն իմ հրեշտակս ես:

Ես սլփտացի պահածոյ փայլուն տուփերուն շուրջ, հետեւելով քեզի, եւ իմ երեւակայութեանս մէջ հալածուելով շուկայի գաղտնի ոստիկանին կողմէ:

Մենք միասին շրջագայեցանք բաց նրբանցքներու մէջ, մեր միայնակ երեւակայութեան մէջ համտեսելով կանկառներ, տիրանալով բոլոր համեղ պաղպաղակներուն, բայց երբեք չմօտեցանք գանձիին:

Ո՞ր կ'երթանք մենք, Ուալթ Ուիթման: Դուռները պիտի փակուին ժամէ մը: Մօրուքդ ո՞ր ուղղութիւնը կը մատնանշէ այնօր:

Ես կը շօշափեմ գիրքդ եւ կ'երագեմ շուկայի մեր ողիսականին մասին եւ կը զգամ անհեթեթութիւն մը:

Պիտի փախե՞մք ամբողջ գիշերը ամայի փողոցներուն մէջ: Նրաւերը շուքեր կը բարդեն շուքերու վրայ. լոյսերը մարած են տուններու մէջ. մենք երկուքս ալ առանձին պիտի մնանք:

Պիտի սլփտանք՝ երազելով կորսուած Ամերիկան եւ անցեալ ու կապոյտ ու սիրելի կառքերը ճամբաներուն վրայ, որոնք կ'ուղղուէին դէպի մեր լուռ հիւզակը:

Օ՛, սիրելի հայր, գորշամօրուք, քաջութեան միայնակ ու ծեր ուսուցիչ, ինչպիսի Ամերիկա մը ունէիր դուն. երբ Շարունը հեռացաւ նաւարկելով եւ դուն կայնեցար ծխացող ափին վրայ՝ դիտելով Լիտիվիոյ սեւ ջուրներուն վրայ անհետացող նաւակը:

Ա.Լ.Է.Ն. ԿԻՆԶՊԷՐԿ
1956

ՀԱՅՐԵՆԻ ԲԱՆՍՍՏԵՂԾ

ԳՈՒՐԳԵՆ

ԲՈՐԵԱՆ



Հայրենի բանաստեղծներէն Գուրգէն Բորեան, ծնած է Ղարաբաղի Շուշի քաղաքը։ Հինգ տարի ետք, իր ընտանիքին հետ կը հաստատուի Երեւան։ Այստեղ կը ստանայ իր տարրական և բարձրագոյն կրթութիւնը։ Փոքր տարիքէն, ուսանողական շրջանին իսկ, Բորեան մեծ սիրով կը կապուի բանաստեղծութեան եւ իր կարգին կը սկսի գրել։

Իր առաջին քերթողական հատորը լոյս կ'ընծայէ 1937-ին՝ «Բանաստեղծութիւններ» խորագրով։ Երկու տարի ետք, կը հրատարակէ պոէմ մը՝ «Արեւի համբոյր», իսկ 1940-ին՝ «Ճամնայարի դէպի ծով», քնարական շունչով, երիտասարդական ապրումներով եւ անհատական զգացումներով դեղուն բանաստեղծութիւններու հաւաքածոն։

Երկրորդ աշխարհամարտին, երիտասարդ բանաստեղծը կը մտնէ բանակ։ Պատերազմական թահուրահ մեծապէս կը ճնշէ խաղաղ կեանքը, շինարարութիւնը և կեանքի արեւը երգող հայ բանաստեղծին հոգին։ Քնքոյ՝ ու ժպտուն կեանքի փոխարէն՝ այնտեղ կը տեսնէ տառապանք, անիրաւիութիւն, մահ ու դժոխք։ Այդ ցնցումներուն անմիջական ազդեցութեան տակ, 1941-ին կը գրէ «Մարտիկի երգում», 1942-ին՝ «Կրակի լիզումներով», եւ 1945-ին՝ «Հրացովք» ռազմական քերթումները։

Պատերազմի օրերուն կը կատարէ պատերազմական թղթակցութիւններ։

1938-ին, կ'ընտրուի հայ գրողներու միութեան քարտուղար, իսկ 1939-40-ի ճակատադրական թուականներուն կը վարէ «Իրական թերթ»-ի խմբագրութիւնը։ Խմբագրած է նաեւ «Անվետական Գրականութիւն», «Գրական Հայաստան» եւ «Լիտերատուրնայա Արմենիա» հանդէսները։

Պատերազմէն ետք եւս, Գուրգէն Բորեան չի կրնար ձերբազատուիլ իր ստացած սահմանեցուցիչ տպաւորութիւններէն, որոնք դինք կը մղեն ստեղծագործելու։

1948-ին, լոյս կ'ընծայէ «Երեւանեան լուսարագ», մանկական բանաստեղծութիւններու ծաղկեփունջ մը, ինչպէս եւ ժողովածուներ՝ «Այս եւ այլ», «Ես, դու, Բա...»։

1958-ին, Հայպետհրոտը լոյս կ'ընծայէ ծաղկափող մը բանաստեղծին բաւազոյն քերթումներէն՝ «Հատընտիր»

խորագրով: Իսկ 1966-ին՝ «Ընտիր երկեր» խորագրով «Հայաստան» հրատարակչատունը մէկ հատորով լոյս կ'ընծայէ արձակ թէ՛ չափածոյ դրութիւններէն նմոյշներ:

Պատերազմէն ետք, Գ. Բորեան անցնելով արձակի՝ կը ընդէն թատերական ստեղծագործութեան: Մեծ յաջողութիւն կը գտնեն «Բարձրագոյններում», «Նայն յարկի տակ» եւ «Կամուրջի վրայ» գործերը: Թատերգութենէն սինեմային անցնելով՝ Բորեան պատրաստած է սինարիոն «Հայֆիլմ»-ի կողմէ պատրաստուած «Սարգսյան եղբայրներ» ժապաւէնին, որ գտած է մեծ ժողովրդականութիւն:

Բազմակողմանի շնորհներով օժտուած գրող մըն է Գ. Բորեան: Բանաստեղծ եւ թատերագիր ըլլալէ դատ, եղած է նաեւ հրապարակագիր, պետական մարզ, նոյն իսկ Հայաստանի կրթական նախարարութեան տնօրէն տեղակալ եւ մանկական բանաստեղծութեան մշակ: Ինքն է մանկներու հոգիներուն խորը, դիտած չընկալած անոնց աչքերով, անոնց ընկալումի չափատիճանով եւ ստեղծած է յալոյ՝ գողարիկ ստանաւորներ, երգեր ու տաղեր: Մանուկներու ուրախ աշխարհը, մանուկներու խաղերն ու ձգտումները մենք կը գտնենք իր ստեղծած գուարթի ու խնդուն ոտանաւորներուն մէջ:

Բանաստեղծ Գ. Բորեան ինք եւս ապրեցաւ մեր հայրենիքի ամէնէն դժբեղակ օրերը, անոր արհաւիրքները եւ ապա դարձաւ անոր բնութեան, անոր փառքին ու յաղթանակներուն երգիչը: Երգեց պատերազմներու մէջ տուայտող, ազատութեան եւ խաղաղութեան տենչով տոգորւող մարդուն ձգտումները, անոր լացին միացուց ժողիտ:

Բանաստեղծութեան մէջ գաղաթիւներ չնուանեց, որովհետեւ ան զրեց իր դրժբախտ ճակատադրակիցներուն տաղնապալի օրերուն, թաւալող մույլ ամպերու խորտակումներու մասին:

Հայրենասիրութիւնը իր բանաստեղծութեան գլխաւոր յատկանիշը կազմեց: Հայրենասիրութեամբ սրունց մարդոց ներաշխարհի անդորրութիւնը: Մարդոց

փոքր մտմտութներէն, առօրեայ կեանքի տենչերէն եւ փորձառութիւններէն վեր քնարերգութեամբ փորձեց թեթեւցնել դաժանութիւնը մարդկային յարաբերութեանց:

Գեղարուեստին մտահոգութիւնը չունեցաւ Բորեան: Անապարհց հանդիսաւոր իր ոճով զրուցելու հայրենիքին հետ, պատմելու անոր տխուր անցեալի մասին, խրախուսելու զայն իր զաւակներուն հաւատքի զօրութեամբ:

Հայրենասիրական լարը նոյնն է: Ան չէ՛ղ: Ու այդ ճանապարհին, շատերուն նման, առաւել կամ նուազ արուեստով ու պոթիկմով տրտալայտուող բանաստեղծներու խումբին մէջ կ'ընայ Բորեան:

Բանաստեղծ՝ շատ մը պարտականութիւններու կողքին:

Բանաստեղծ եւ պետական մարզ: Ահա թէ ինչո՛ւ, եթէ պոթիկացող դրի՛ մը չեղաւ, եթէ իր բանաստեղծական վաստակին չմիացուց կիրք, բայց իր մօտ չպակսեցաւ հաւատքը: Ընդհակառակն, իրրեւ պետական մարզ, թատերագիր թէ՛ նախարար, հետեւեցաւ սրտի ծայրին, սիրտ մը, որ յոճախ անսաց տրամաբանութեան: Այս տողերը ցոյց կու տան իր հաւասարակշռուած հաւատքը.

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ս

Դու օրը օրին ելնում, քարձրանում...
Եւ շնչում եւ դու, մեմէ էլ եմք շնչում,
Քեզանից քարձր անում աշխարհում
Հայրենի երկիր, մեմէ շնչմ անաշում:
Եւ ով էլ փորձի մարել մշտապա
Քո արեւը բոց, մեր անեղ գարկից,
Նա պիտի ընկնի, պիտի մոխրանայ
Քո սուրբ կրակից:

Բորեան ինք եւս այն որբերէն է, որոնք հայրենիքը կերտեցին: Որքան ալ Հայաստանի ունեւորող կեանքի խանդավառութիւն կայ իր քերթուածներուն մէջ, սակայն իր ե իր սերունդի դժբախտ մանկութիւնը չի խուսափել տխուրութեամբ երանգաւորելու իր սաղերը: Ե-

րէկը այդքան խաւար ու տխուր, այսօրը սահայն գարուն ու շուշ, խինդ ու ժըպիտ... Եւ քանաստեղծը կը մխիթարուի կորսուած մանկութիւնը որոնելով իր ընտանեկան յարկէն ներս բարձրացող մանկներու ուրախ ճիշերուն մէջ, դպրոց մեկնող խումբերուն մէջ: Եւ երազը կը քնքշանայ, տխրութիւնը կը մեղմանայ, երէկի մորմոքները կը վերածուին ուրախութեան: Ան կը դրէ.

«Թեւատարած ու սիրառատ
Ցանկանում եմ գրկել մէկին,
Ասել՝ քացի՛ր սիրտս, ո՛վ մարդ,
Տե՛ս, ինչպէ՛ս է ցնծում հոգիս:
Եւ պարգում եմ արեւի դէմ
Գարնանաբայր, գարնանագէտ
Իմ երգերի դրօշը վառ —
— Ուզո՞ւյմ քեզ, կեանք, ողջո՞ւյց,
աշխարհ...»

ՔԱՏԵՐԱԳԻՐՆ ՈՒ ԱՐՁԱՎԱԳԻՐԸ

1966-ին հրատարակուած «Ընտիր երկեր» մէկ հատորով հաւաքածոյին մէջ աւելի լայն տեղ տրուած է Գ. Բորեանի արձակ եւ թատերական վաստակին:

«Արձակ Էջեր» բաժնին մէջ տրուած է պատմուածք — վիպակ մը, առնուած առօրեայ կեանքէն, հայրենի բնաշխարհին հետ կապուած աւանդութիւններով: Աշխոյժ լեզու, արագ եւ հարուածող ոճ, բայց նիւթերուն կը պակսին հոգեբանական ենթահող, ինչպէս եւ գեղարուեստական ուժեղ կառոյց, հերոսները ժխտական կամ դրական բացառիկ անհատականութեամբ օժտելու ուժ:

ՔԱՏԵՐԱԳԻՐԸ

Արձակին մէջ միայն որոշ յաջողութիւն ձեռք ձգած Գուրգէն Բորեան յամառօրէն կը կառչի թատերական ստեղծագործութեան: Անշուշտ մեծ յաջողութեամբ չեն սլակուիր իր առաջին քայլերը, բայց «Բարձունքներում» գործին մէջ իր թատերագրի շնորհները երեւան

կու գան եւ իր վրայ կը հրաւիրեն թատերական աշխարհի քննադատներուն ունիւթները:

«Բարձունքներում» գործը կը ներկայացնէ Բ. աշխարհամարտի ընթացքին կոպկոտեան ռազմաճակատէն պատկեր մը, զոր հեղինակը կը վերարտադրէ ականատեսի հանգամանքով եւ կարելի հարուզատութեամբ:

«Նոյն յարկի տակ»-ը թատերախաղ մըն է կրկին, որ կը ներկայացնէ հայ ժողովուրդի պատմութեան ամէնէն բախտորոշ շրջաններէն՝ 1920-ի Օդոստոս — Նոյեմբեր ամիսներուն հայրենիքին մէջ քաղաքացիական բռնահարուսները. «Ռեւոլուցիոն ընդլատակի մայրտիկները, պարտիզաններ, դաշնակցական զինուորներ: Դեպքը տեղի է ունենում Հայաստանի գաւառական մի քաղաքում»: Այս բացատրութիւնները որոշ գաղափար մը կու տան թատերգութեան մասին: Կը խորհնք, որ հետագային ժապաւնի առնուած «Մարոյեան եղբայրներ» սենարին վերամշակումն է այս դործին:

Երրորդ թատերական կտորն է «Կամուրջի վրայ»: Հինդ արարով գործ մը, առնուած Երեւանի առօրեայէն: Գործողութիւնները տեղի կ'ունենան ներկայ դարու վաթսուեակն թուականներուն:

Ուրախութեամբ կը հաստատենք արձանագրուած յառաջիմութիւնը իր թատերգութեանց մէջ:

Յաջողութիւն մը, որ կրկնակի տեղ կու տայ Գ. Բորեանին, հայ գրականութենէն ներս:

Գ. Բորեան իրեն թատերադիր դիտէ զինել շրջապատը, պատկերել կարեւոր երեւոյթները, թափանցել անոնց թաքուն պատճառներուն եւ թանձրացնել ճշմարտութիւններ բեմականացնել:

Հաւասարակշիռ խառնուածքով եւ հայեցի հետաքրքրութիւններով վառ հայ գրողն է ան:

Հետագայ երկու բանաստեղծութիւնները կը հաստատեն մեր տպաւորութիւնը:

Ա. ՏՕՆՈՅԵԱՆ

Այս Բարերը Անխօս



Այս ֆարերը անխօս, այս քերդերը կանգուն,
Տաճարները մեր սուրբ, կուռ սիւնները հզօր,
Ժամանակի անխօս վկաներն են այսօր,
Յաւերթակաւ, վսեմ եւ սիրոյ պէս մաքուր:

Այս ֆարերը անխօս, այս քաղալդը տաշուած,
Կրանիտը կապոյտ եւ մարմարը ներմակ,
Մեր երէկն են մնցած եւ գալիքը վազուայ,
Որ դարերի լեզուով գրուգում են հիմա...

Հայոց կապոյտ, կապոյտ վրսեմ երկնքի տակ,
Քանի՜-քանի՜ տարի երջանիկ դար աննիւջ,
Ոնց յիշատակ անմեռ, դուք ապրում էք ու կաք —
Եւ իմաստուն, եւ վեհ խորախորհուրդ ու ջիւղ:

Ուր էլ լինեմ այսօր, ինձ քախտն ուր էլ տանի,
Երբ մեմք գեճեմ, արեամբ մեր գալիքն ենք կրում,
Սրբատաշած ֆարեր իմ մայր Հայաստանի,
Ձեզ եմ յիշում ահա եւ Ձեզ մտաբերում:

Ձեզ խոյանգներ կանգուն, ձեզ վիշապներ հզօր,
Ձեզ կամարներ կապոյտ, օծուած երկնի լոյսով,
Որ յաւերթ էք դարձել մեր վաստակով արգար,
Քանի դաժան ստոյներ կամեցել են այրել:

Մոխրացել ձեր սուրբ, անկրկնելի ոգիւն,
Բայց դուք յաւեւ ամենա, ձեր համեմարին վայել,
Ինչպէս եզիպտական այն քուրդերը ֆարէ,
Նորից կանգնում էք կուռ եւ ապրում էք կրկին:

Կ'անցնի եւ այս նեղը, այս ռոտը անարգ,
Այս անիծեալ տեւտունը, քարմը դժոխային,
Կը մոխրանայ, կ'անցնի անհետ, անյիշատակ,
Եւ կը ճայիմք խաղաղ մեմք մեր ապագային:

Իսկ դու յաւերժ կ'ապրիս իմաստութեամբ խորին,
Հայաց ճարտար դու ձեռք, ո՛վ շինաբար ոգի,
Եւ մեր տաճարների կապոյտ կանառներին
Նորից կը բոցկտամ շագնն արեգակի:

Իսկ օրերում վաղուայ յաւերժական իրգով
Կը շնչան գալի՜ք սերունդներին եկող
Մեր պատմութեան մասին նորից գօր ու գիշեր
Լկս փառերը անխօս, այս փառերը անմեռ...

1943

Բայց ոչ, Կայ Մէկը...

[illegible]

1944

ԳՈՒՐԳԷՆ ԲՈՐԵԱՆ

ԱՆՆԵՏԱՑՈՂ ԴԷՄՔԵՐ

ՖՐԱՆՍՈՒԱ ՄՈՐԻԱԲ

— ՀՈԳԻՆԵՐՈՒ ՎԵՐԱԲՈՅԺ —



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պօրոս ջաղաքը, ուր ծնաւ Ֆրանսուա Մորիաք՝ 11 Հոկտեմբեր 1885-ին, միշտ եղած է առեւտրական բարդաւաճ նաւահանգիստ մը։ Մորիաքի ընտանիքը խոր արմատներ նետած էր հոն սերունդէ սերունդ։ Բարեկեցիկ էր, պատուախնդիր ու համոզուած կաթողիկէ։ Ֆրանսուայի հայրը կանուխէն կը մեռնի։ Մայրը, ջրխտոսնէայ ու բարեպաշտ կին մը, ձեռք կ'առնէ աղուն կրթութիւնը եւ անոր կը փոխանցէ իր սկզբունքները եւ հաւատքը։

Մանկութիւնը կ'անցընէ իրենց քաղաքի տան մէջ եւ Մարկայի ամարանոցը, ուր հեղինակը պիտի շարունակէր անցընել իր արձակուրդները, մինչեւ մահ։ Զգայուն Ֆրանսուա կ'ամբարէ ապագայ իր գործերը ճոխացնող մտային պաշար։ Յիշատակին մէջ կ'արձանագրէ

դէմքեր, խօսքեր, անեքստոթներ, տեսարաններ։ Իրենց ամարանոց կալուածը կը գտնուէր եղեւինի անտառներուն եղերքը, ընակներու մէջ։ Կէսօրներու տաքին ճշգրտութեամբ կը բարձրացնէին իրենց միալար խմբերգը, երբեմն հրդեհներ կը պատահէին։ Տղան կը սիրէր բնութիւնը, կը քանար թափանցիկ անոր խորհուրդներէն եւ երեւոյթներէն ներս։

Երկրորդական ուսումը աւարտելէ ետք, Ֆրանսուա կը մեկնի Փարիզ, կը պատրաստէ Լիսանս Իս Լեթրը ու կ'արձանագրուի Էֆոլ Տէ Շարք։ Բայց արդէն գրականութեան վճուկը կախարդած էր զինք։

1909-ին, լոյս կը տեսնէ իր առաջին գիրքը, որ բանաստեղծական հատոր մըն է՝ «Միացած ձեռքերը»։ Մօրիս Պսոէս կը խանդավառուի զայն կարգալով եւ կը նախատեսէ հեղինակին համար «փառաւոր ապագայ մը՝ գրականութեան աս-

պարեզեմ մերս»։ 1911-ին, կը հրատարակէր քանաստեղծական երկրորդ հատորը՝ «Հրաժեշտ պատմեցեալքս»։ Ալէն Ժուրնէի խառն կը քննադատէ այս գործը, հապճեպով դրուած, շատ երկար ու ոչ ինքնատիպ։

Մորիսը կը հասկնայ, որ ինք սխալ ճամբայ կ'երթայ ու անմիջապէս կը դառնայ վէպին, սակայն քանաստեղծութեան կը յատկացնէ յատուկ տեղ մը իր սրտին մէջ։

Առաջին վէպը՝ «Շղթաներով քեանաւորում տղան» լոյս կը տեսնէ 1914-ին, ասոր կը հետեւի երկրորդ վէպ մը՝ «Պատմեցեալքս պատմեցանք»։ Մօրիսը արդէն ընտրած է դրականութեան այն ընդաւառը, զոր պիտի շարունակէ պեղել ամբողջ կեանքին ընթացքին։ Այդ գաւառը մարդկային հողին է, խռովալոյս թաղաքներին մը, ուր միտք անդադար պայքար կը մղէ իր անտեսանելի եղբորը դէմ։

1922-ին է, որ Մորիսը վերջնականապէս կը գտնէ իր վիպական շափանիչը եւ կը ստեղծէ իւրաքանչիւր ոճ ու շէշտ։ Եւ չորս տարուան ծամաւնակաշրջանի մը մէջ, 1923-էն 1927, կու տայ շորս գլուխ գործոցներ — «Կրակէ գետը», «Սիրիլ ամապաղը», «Մայրութիւն» եւ «Թեքեց Տեքեք»։ 1933-ին կ'ընտրուի անդամ Ֆրանսական կաճառին։

Այս յուսալիկ ու մութ վէպերէն ետք, ուր մարդ էակը կ'ապրի մեղքի տիրմէն մէջ, Մորիսը կը սկսի իր գործերուն մէջ սփռել անդէնականին մեղմ լոյսը եւ փրկութեան դուռները կը բանայ իր յուսալքուած հերոսներուն առջեւ։ «Ինչ որ կորսուած էր» (1930) գործը մեղի կը պատմէ քրիստոնեայի մը տառապանքներէն բխած երջանկութիւնը։ Սակայն, երբեմն-երբեմն, իր էջերէն կը բարձրանան գեհնական ստուերներ, մեղի յիշեցնելու համար, թէ Չարը միշտ արթուն է ու ամենակարող։ Բայց նոյնիսկ այդ պարագային, պատուհան մը կը բացուի լուսաւոր ու աստղազարդ երկնակամարին վրայ, ըլլա՛յ «Իծերու ձանգոյցը» վէպին անհաւատ հերոսին,

ըլլա՛յ «Լա Ֆարիգիեմ»-ի վէպին նենգ հերոսուհի՝ Պրիթիթ Վիանի առջեւ։

Իր վէպերուն գուգահեռ՝ Մորիսը կը ստեղծէ գործեր, որոնք կը ծառայեն իր ընդհանուր մտահոգութիւնը լուսաբանելու, ինչպէս «Ժամ Ռասիմի կեանքը», «Աստուած եւ Մամոնա», «Պիեգ Փաստալ եւ իր բոյրը» ժապիւնը եւ անձնական «Օրագրի մը» առաջին հատորները։

1938-ին, յաջող մուտք կը գործէ թատերական ասպարէզէն ներս, իր «Աւմուտ» եւ «Զախրուածները» փիեսներով։

Երկրորդ համաշխարհային պատերազմին, քրիստոնեայ Մորիսը ձայնը կը բարձրացնէ՝ խարունելու համար գործընած բարբարոսութիւնները, ինչպէս քանի մը տարի առաջ, Ժորժ Պերնանոս ըրած էր սպանական քաղաքացիական պատերազմին ընթացքին։ Գերմանական դրամային շրջանին, Ֆրանկ Ժաքի Ժաքի ընդ կը հրատարակէ «Ուն Տետրակը» անունով պատերազմական օրագրեր ու պատիւը կ'ունենայ կեսթափոյի սեւ ցանկին վրայ արձանագրուելու։ Ազատագրութեան շրջանին վեհանձնօրէն կը ջանայ կեանքը փրկել իր հակառակորդներէն շատերուն։

1939-էն ի վեր, նոր հով մը կը փչէր դրականութեան անդաւաճանին վրայ, որ կը կոչուէր Գոյութեան պաշտութիւն։ Ժան Փօլ Սարթր, այդ պարոքի անունով կը դատապարտէր «Գիշերուան Վախճան»-ի հեղինակը, իբր թէ ան արգելք կը հանդիսանար իր հերոսներուն ազատ ընտրութեան եւ անոնց կը պարտադրէր ի յառաջագունէ գծուած ուղի մը։ Ընթերցողները, ցնցուած վեց տարուան դժոխքէն, դրականութեան մէջ կը փնտռէին անհեթեթ, անձկագին վիճակները, գոց դուռներու յուսահատութիւնը։ Մորիսը սեղի շտուաւ այս նորաձեւութեան առջեւ, շարունակեց իր ճամբան, վէպեր արտադրեց նոյն արուեստով, աւելի խիտ, աւելի ուժական։ «Լա Սալիւէն»՝ 1951-ին, «Կալիկալի»՝ յաջորդ տարին։ 1952-ին, Սթեֆանի Երեւոտական Կաճառը զինք կը պարգեւատրէր

Նաղիկեան Միշագգային գրական մրցանակով:

Մարիա էր ընտրւիւն զրոյ ունէր ուրիշ լար մը, բանովէնի պողպատեայ լարը: Կարձակէր մահացու սլաքներ ընտր տեսնել զէմ, որոնք էր կնիզէին ճշմարտութիւնը: Իր Պաճ Նարեքը, որոնք լոյս տեսան զանազան թերթերու եւ մահուանը Վիկտոր լիքերէրս-ի էջերուն մէջ, անամբերութեամբ եւ զաւրիւմ էր սպասուէին իր կողմնակիցներուն եւ հակառակորդներուն կողմէ:

Մարիա զինուորի պէս ինկու պատնէշի վրայ, Սեպտեմբեր 1970-ին եւ որ-մանցու ազգային յուշարկաւորութեան պատիւին:

ՄՈՐԻԱՔ՝ ԲԱՆԱՍՏԵՆԻՍԸ

Մարիա ճանչցում է իբր զիպառան, բայց եթէ իր մէջ շրջաբեր իբու բանաստեղծի, իր զէպերը պիտի չըլլային այն, ինչ որ են: Առաջին օրէն ինչ իր մէջ զգացած էր բանաստեղծութեան կոչումը եւ իր առաջին երկու հասարակները եղած էին ճերմութեանը: Եւս զբարձր քանի մը Գերբաւածներու տողերուն մէջ, կը գտնուի գործիս ա՛յն միակ մտքը, զոր իսկապէս կը ճախրենտրեմ, սրտովիտեւ այն եղած է իմ իբու մերշնչումս:

Իր առաջին հասարակ, ինչպէս ըսինք, կը կոչուէր «Միացած Ձեռքեր»՝ հրատարակուած 1909-ին: Իր վարդապետներն էին Վերլէն, Յարսիս Ժամ եւ Կերէն: Մորիս Պառլէս այսպէս արտայայտուած էր այդ գործի մասին. «Մերանիկ ընտանիքի մը գաւկիմ բանաստեղծութիւնն է այս» խելօք. փափկանկատ, բարեկիրք, ուր տակաւին անաղարտ կը գտնենք մանկութեան լոյսը, ու կ'աւելցնէր, «Հեղինակը պէտք է շուտ հետամայ այս պատր Ապրիլէն ու դառնայ իսկական մարդ»:

Մորիա էր ջանայ հետեւիլ Պառլէսի ցուցմունքներուն եւ, 1911-ին, կը հրատարակէ իր «Հրաժեշտ պատանկու-

րեան» բանաստեղծական երկրորդ հասարակ: Այս անգամ, սակայն, թնտքառութիւնները աւելի խիստ կ'ըլլան: Այն Յարսիէն այս գործը կը դանդ էր կար ու գրուած հաղանդով: Պէտք է բռնի, որ ընտանիքն ալ նախապաշարմանը ունէր բանաստեղծութեան հանդէպ: Մարիա յատկապէս զիբքին գաւած բնականութեան, կը գառնայ արժանիքն եւ կը գրէ իր առաջին զէպը՝ «Շղթաներով թռնաւորուած տղան»՝ 1914-ին: Կիսով Ապրիլէն կը կարգայ այս զէպը ու կը բացառուէ: «Ասիկա բանաստեղծի մը գործն է»:

Տանըրչորս տարի ետք, Մարիա էր հրատարակէ երկու բանաստեղծական գործեր՝ «Փոքորիկներ» եւ «Արիսի տըրմը», ուր կը յայտնուի անաղանդի ուսմանութիւն մը: Եթէ կ'առջիլ պատերեան է, բայցբու յաճախեք, ջերմութիւնը եւ ջիզկերու սարսուռը յառուկ են հեղինակին:

Ե՛տք մը ամբողջ պիտի սպասեմ երկվայրկեանին, երբ մեր մարմինները Պիտի ծաղրեն երկինքը իրենց նայնացած պապականով:
Եթէ կեանքս վատնեմ ժամանակագրական,
Համբարի մը տնապարտիւնը
զիս պիտի մտնացնէ:

«Փոքորիկները, որ կը ծնին մարմնական ըզանգներէն» կը գտնուին մեր ու մեր մեղսակիցներուն էութիւնը: Եւ մենք միշտ պատրաստ ենք մեր մարմնական անորոշակները արդարացնելու: Բայց հոգին դիւրաւ չի համոզուիր:

«Մարմինս քերտ էր փողոցներէն
ծնող լոյսին տակ,
Հովիւն էր տառապանքին այս անգիւղ
Փարիզին մէջ:
Կը մնար մաքուր, մաքուր-թիւնը
կորսնցնելէ ետք իսկ...»

«Արիսի տըրմը» գործ մըն է, ուր արունատը կը ցուցադրէ իր կարելիութիւնները եւ նոյն տունն կ'ոգեկոչէ հա-

գեկան արինալի պայքարներ: Ինչպէս կ'ըսէ Հեղինակը՝ «Հաշուեյարդարներ տեղի կ'ունենան ամբողջներու մէջ իսկ:

«Համաստեղութիւնները եւ փշրուած ալիքները, Կոբալուած գիսաւորները, զորս ծովը կ'ընկլուզէ, Լեթիս, ոչ մէկ բան աւելի կ'արժէ, քան բոլոր մաշած դէմքը, եւ այդ աշխարհը կը խմբուի երկար ու լեզի համբոյր մը»:

Մորիսը բանաստեղծներուն հանդէպ կը տածէր իւր անհամաձայն եւ անխորտակելի պաշտամունք մը: Իրեն համար բանաստեղծութիւնը արուեստներուն գագաթնակէտն էր, բայց «Իմ բանաստեղծութիւնս կը ըլլար էութեանս ամէնէն մարմնակալն ակէն եւ կրնայ ըլլալ, որ իմ էրիտանոնս անոն արգելք հանդիսացաւ անոր...»:

Այդ բանաստեղծական զգործածուած հոսանքը պիտի հոսի իր վէպերուն մէջ:

ՄՈՐԻՍԱՔ՝ ՎԻՊԱՍԱՆ

Մորիսը ինքզինքը կը յորջորջէ. «Կարողիկէ մը, որ վեպ կը գրէ»: Այսինքն՝ կը խուսափի իր գործերը բարոյական դասերու վերածելէ: Իր հերոսներուն ապրած մթնոլորտը «անէծքի աշխարհ մըն է, ուր կը հասնի կրակէ գետնը»: Կիրքը չի մեղմացներ արարքներուն յանցանքը, այլ կը բնորոշէ այդ արարքներուն մեծութիւնը: Իր գործերէն զուրկ կը փոխէ գաղթը, ինչպէս կ'ըսէ Աստուածաշունչը, եւ իր նախասիրութիւնը եւ գուրգուրանքը կ'երթայ կորսուած ոշխարհներուն, մեղաւոր հոգիներուն, ինչպէս կ'ըսէ «Ան չընտանեացիները» վէպին հետեւեալ տողերուն մէջ. «Անոնք, որ Չարիմ յանձնուած են, քերիւս անոնք էին բուն ըմտնալները, եւ իրենց անկումին խորութիւնը՝ չափը կու տայ իրենց առաքելութեան»: Եւ կ'ողբայ այդ անխնայներուն կորուստը,

կ'աղաչէ, կը պաղատի, որպէսզի երես չդարձնեն փրկարար լոյսէն: «Ո՛վ Թեք, պիտի ուզէի, որ տառապանքը ինչ յանձնէր Աստուծոյ, եւ յանափափաք, որ արժանի ըլլաւ կրելու Սրբուհի Լաֆիստ տնունը: Բայց շատեր, անոնք, որոնք կը հաւատան մեր չարչարուած հոգիներուն անկումին եւ փրկչութեան, արքայազնութիւն՝ պիտի պաշտէին»: Թերեզ Տեքերու բազմաթիւ անգամ փորձած էր Թունաւորել իր ամուսինը, զոր չէր սիրեր:

Իրականութեան մէջ, այս էակները ծարաւն ունին սոսանման, մաքրութեան, սիրոյ, բայց չեն հասկցուիր իրենց լրջապատէն:

Ինչպէս Փոսթալ, որուն հաւատարիմ ընթերցողներէն էր, Մորիսը չափած է «անաստուած մարդուն քշուառութիւնը»: Իսկ Պոտլերին պէս, որուն հիացողներէն էր, «Իւրաքանչիւր մարդուն մէջ կը տեսնէ համբոյրաց քաղցրութիւն մը, մէկը ղեղի Աստուած, միւսը՝ ղեղի Սատանան»: Եւ այս երկուսութիւնը կը կազմէ իր հերոսներուն տաճարն: Եւ որովհետեւ սիրտերը միատարր եւ կայուն չեն, վիպասանին արուեստն ալ պէտք է հետեւի այդ տեղատուութիւններուն եւ մակերիմացութիւններուն:

Մորիսը իր կարծիքը ու գուպ նախադասութիւններով, որոնք յաճախ կը նշմանին չնչապառ հեկեկանքներու, սրբաւանդիկ աղաղակներու, կը խօսի սիրոյ մասին, ոչ իբրեւ հետաքրքիր գագաթնակէտ, այլ իբրեւ մութ, հեղձուցիչ եւ փառասէն անէծք: Չի բաւականանար իւր տակելի քաղցրիկ պատշաճականութիւնները, այլ կ'իջնէ միջեւ սրտին խորքը, որ կը բարախէ գիշերուան մէջ, որոճալով իր նուաստացումները եւ տառապանքները: Կը հալածէ մեր տկարութիւնները մինչեւ անծանօթ սահմաններ, անոնց տալով իրենց բուն անունները՝ տիգր, չարիք եւ մահ: Եւ սակայն, մեր բոլորին ալ համար, կու գայ պահը, երբ մութ փապուղիին ծայրը կը տեսնուի փրկութեան լոյսը, Աստուծոյ ներկայութիւնը:

ՄՈՐԻԱՔ՝ ՀՐԱՊԱՐԱՆԱԳԻՐ

Երկու տարիներ, Վա թաղ Ռոմ-
աթ, Վեֆսփրեսաթ եւ ժողովուրդ
Վեֆսփրեսաթ Լիբիբրեսաթ էլէրուն մէջ, ըստ
ստանալ Մորիաթի Պալ Նաբիր-ը: Հաստ
որակներ կ'արձակէ արուան իշխանու-
թիւններուն գէտ, պախարակելով տնայ
հինգած աւ շահագէտ քաղաքականութիւ-
նը, մինչեւ որ Ջորադուր աւ Կու կ'անցնի
իշխանութեան գլուխը: Մորիաթի նախ-
սիրած մարդն էր աւ Կու: Սլաքները տը-
նակեց տարբեր ուղղութեամբ: Եւ հա-
րածները ա յնժան ճշգրիտ աւ արդար էին,
որ իր զահերը չէին՝ կը զգուշանային
իրեն պատահանելէ: Ոնէ հրապարա-
կագիր պարսի ծայրէ ծայր կարգաւ այդ
անձան յոգաւածաշարքը, անկէ քաղելու
համար քաղութեան, հետաքրքրութեան
ե յառակաւանութեան դաս մը: Անվեհեր
հզաւ Մորիաթ իր գիրքարշաւներուն
մէջ, ըլլալ սպանական քաղաքացիական
պատերազմի ընթացքին, ըլլալ՝ Ալթե-
րիայ, ըլլալ աջակողմեան եւ ձախակողմ-
եան ազգակարծան քաղաքագէտներուն
հանգէլ: Սակայն այդ Պալ Նաբիր-ը

միայն պաշարի գէները չէին, այլ յա-
նախ ինքնավարութիւն եւ ոգեկալումէ
տանալներ: Խորունկ ներգաղափարութիւ-
նը մարդուն եւ իր ժամանակին, տնայնա-
յին, ներկային եւ ապագային:

Մէկ խորով, ինչպէս կ'ըսէ Միւլէ
Տրուա. «Մարիաթ իր ժամանակաշրջա-
նին մեծագոյն նրապարակագիրն էր»:

Բանաստեղծ, վիպասան, թատերա-
դիւր, բայց ամէնէն առաջ համարում
քրիստոնեայ մըն էր: Իւրաքանչիւր շրջ-
թայում, շարժարում եւ նախադասած
մարդկային գէտքին վրայ կը տեսնէր
ճիշտութիւն արեւելուայ գէտքը. «Իրա-
քանչիւր առաջ, որ կը գրեմք, — կ'ըսէր,
— մեզ կը դարձնէ պատասխանատու, եւ
վերջին դաստաստեմք մեզմէ իւրաքան-
չիւրէն հաշիւ պիտի պահանջուի ոչ միայն
մեր գիրքերուն համար, այլեւ մեր իւ-
րաքանչիւր յոգաւածին համար: Եւ այդ
է պատճառը, որ երբ իրմէ կը կարգանք
էջ մը, հան կը լսենք ո՛չ միայն իր ողբ-
անի գարկերը, այլեւ ամբողջ արեւել-
քին միտքը, ինչպէս կախարդութեան խնցիկ
մը մէջէն»:





**ՅՈՐԵՆԵՆԱԿԱՆ
ԲԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Հայաստանի Դեմոկրատիկական խորհուրդ

“ԿԱՅՐԵՆԻՔ” ՕՐԱԹԻՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԴՐՈՒԱՅ
ԼԱՍՏԱԿԱՆՈՒ ՈՒՍՈՒՑՈՒ, ԳՐԱԳԵՏ
ԲԵՂԻՆԱԿ, ԲՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ

ԿԿԿՕ

ՄԻՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ

ԿԱՐՕ ՉԱՋԱՐՈՍՏԱՆ (ԳԵՏ)



ՄԱՐՏԻՍԻՆ 27, 1970
ԺԱՄԸ 2:30 Կ.Ն.

ԽՕՍՔ՝ ՅԱՐԳԱՆՔԻ

Օգոստոսի սկիզբները, Կարո Մեհեան, շարժ մը դասախոսութիւններ տալու համար հրաւիրուեցաւ Միացեալ Նահանգներ, ուր, գրական եւ մշակութային մեր կարգ մը միութիւններու նախաձեռնութեամբ՝ 27 Սեպտեմբերին տօնուեցաւ իր գրական, հրապարակագրական եւ ուսուցչական գործունէութեան յիսնամեայ յոբելեանը:

digitised by A.R.A.R.@

Կ. Մեհեան ծնած է Ռոտսֆօ, 1898-ին եւ այժմ կ'ապրի Փարիզ: Իր առաջին պատանութենէն ետք եւ Փարիզ հաստատուելէն առաջ, իր սերունդի դէմքերէն շատերուն պէս, ինք եւս ապրեցաւ ճշմարիտ աղիսական մը, եմ-թարկուելով վերջին յիսուն տարիներուն հայ կեանքին մէջ երեւցած երկու բռնակալութիւններուն բոլոր հետեւանքները: Մեծ նշաննի օրերուն, քուր-հերուն կողմէ՛ն ձերբակալուեցաւ ու բռնեցաւ անապատ, իսկ 1944-ին, Պուլ-կարիայ մէջ, նոյն «յանցանք»ին համար համայնավարները ամբողջ 14 տարի բաշխեցին զինք քանտէ բանս ու նամբարէ նամբար:

Այս պայմաններուն մէջ, զարմանալի պիտի չըլլար, որ մարդ կարգըն-դրներ իր հաւասարակշռութիւնը, խախտէր իր մէջ կարավը, ապրելու, ստեղ-ծելու, արդիւնաւորելու կորովը, զարմանալին միւս ճշմարտութիւնն է, այն՝ որ Մեհեան մարդոց կողմէ ստեղծուած թէ՛ տաք եւ թէ՛ ցուրտ դժոխքնե-րուն մէջ կրցաւ մարդ մնալ, եւ թէ՛ առաջին դժոխքէն փրկուելէն ետք եւ թէ՛ միւսէն ազատելէ յետոյ ո՛չ միայն շարունակեց ընդհատուած գործը, այլեւ կարծես կորսուած տարիներուն պարապը լեցնելու աննուն վրէժխնդրու-թեամբ մը լեցուած՝ կրկնապատկեց իր ճիշդ, գրական ու հրապարակագրա-կան հսկայ վաստակ մը կուտակելով:

Կ. Մեհեան, ի միջի այլոց, երբեմն իրրեւ ստորագրութիւն կը գոր-ծածէ Յանւ Սօսեաց Տգան: Մեհեան այդ «Տգուն» օժանդակութեամբ խտա-ցուցած է իր ներքին կենսագրականը, որուն վարակիչ յուզումով կը յանձնենք ընթերցողին:

«Այդ «Տգան», զոր նուիրած եմ «Սօսեաց» անտառներուն, յամառած եմ պահել մէջս՝ կենսաբիւ հրեմէն ժպտուն ու յաճախ դառն շրջաններուն — նոյնիսկ սուրբական անապատին՝ Եփրատի աւազուտներուն վրայ եւ Սրպե-րիոյ սառնամանիքներուն մէջ, — որովհետեւ իմ էութիւնս իսկ է, իմ «Մեհ-եան»-ս, որուն «կուրքը» Յե՛ղն է Հայկազնեան՝ իր արարչաւունչ Մեծառ-քանչով:

Այդ նուիրումը յարատեւ թելադրանք մըն է եղած ինծի՝ Հայոց ար-քային ոտնաձայնը ակնկալող Սօսեաց անտառներուն սօսափունին ուժեղ ար-ձազանգն ըլլալ բեմերէն եւ մամուլէն: Աւ կենսաբիւ հիմնական նպատակը՝ այդ «կուրքին» ծխակառարութեան սպասարկու ջրմիկ մը ըլլալն ու մը-նալը...

Այս նուիրումը, յամառութիւնը եւ մեր աստուածներուն ծխակառա-րութեան սպասարկելու տենդը, իրապէս, երբեք չպակսեցաւ Մեհեանին: Իր բոլոր գործերը, «Վերածնունդի օրերէն» մինչեւ «Իմաստութեան ուղիով» անուն զոյգ հատարներ, գրուած են այդ ոգիով, այդ ընծայումով:

Կ. Մեհեան ունի վիպական, քառերական ու հրապարակագրական կը-նիւթով շուրջ տասը մեծ ու փոքր հատարներ եւ այդ թիւին հապաստիկը ներ-կայացող բազմաթիւ այլ գրութիւններ, ցրուած՝ մեր հանդէսներուն եւ օրա-քերթերուն մէջ: Տարիներէ ի վեր, Կ. Մեհեան համրային այլ գործե-րու կողքին միաժամանակ կ'աշխատակցի չորս-հինգ քերթերու եւ մէկ ստա-րագրութիւն միայն չի գործածեր, ընթերցողին ծանօթ Դէտն է ան, վրայրն է, Վ. Իշխանեանը, Լեւոն Թուրքինեանը, Սօսեաց Տգան, իւրաքանչիւրին հետ պայմանականօրէն ճիշդ, արդար, պարկեշտ մտածումներ ձեւակերպող ան-ձը, որուն եղած յարգանքին կը միացնենք մեր յարգանքը, մաղթելով իրեն երկար կեանք, ու քառադարձութիւն, ու նաեւ անպառ կարով:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Յ. ԿԱՐԱՊԵՆՅ

ԱՆԾԱՆՈԹ ՀՈԳԻՆԵՐ

(Պատմութեան)

380 էջ, ընտիր քուլթ, մաքուր տպագրութիւն,
գիւճ 7 լ. ռսկի, Ամերիկա՝ 5 տոլար:

ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝

«ՐԱԳԻՆՅԻ ԽՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ Եւ ՀԵՂԻՆԱԿԻՆ՝»
JACK KARAPETIAN
10608 Margate Road
Silver Spring, Maryland 20901
U. S. A.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵՆՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՍԻՓԱՆԱՅ ՔԱԶԵՐ (Բ. հատոր, պատմութեան եւ վիպակներ)
Ս. Սիմոնեան, Պէյրութ, 1970

ՆՈՐ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ԿԱՑԵՐ (Խորհրդածութիւններ) Յ. Պէրպէր-
եան, Պէյրութ, 1970

Տպարան ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՏԱՐԵԲԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԵՐԱՆԱՆ 22 Լ. ՈՍԳԻ

ԱՐՏԱԹԱԶՈՒՆ 8 ՏՈՒՐ

ՀԱՏԱԳԱՏԱՌ 2 Լ. ՈՍԳԻ



Վարչութիւն հասցէ-

G. SASSOUNI
Rue Sélim Boustani,
Beyrouth - Liban